

ՕՐԱԳՐՔ

ԸՆԿԵՐԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ

1860

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԵԳՆԱՅՔ.

ԱՄՍԱԳԻՐՔ 7.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ՈՒԽՏԱՒՈՐՔ. Մկրտիչ Վայէլեան: . . . . . 1—19
ԱՂՔԱՏ ԱՂՋԻԿ. Ս. Պետրոսեանց, ուսուցչապետ: . . 19—21
ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ. կամ Իմմանուէլ: . . . . . 22—23
ՆԱՊՕԼԻՕՆ ՄԵԾԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ.
Մկրտիչ Վայէլեան: . . . . . 24—47
ՊԱՆԿՐԱՏ ԹՈՒՂԵՐ. Ս. Նազարեանց: . . . . . 47—74
ՆԱՄԱԿ ԱՌ ՀՐԱՏԱՐԱԿՈՂԸ.
Ս. Գաւթեան Ալէքսանդրեանց: . . . . . 75—82

ՓԱՄՓԱՔԱՍ,
ՒՆ ТИПОГРАФІИ ЛАЗАРЕВСКАГО ИНСТИТУТА ВОСТОЧНЫХЪ ЯЗЫКОВЪ.
1860.



ՅՈՒԼԻՍ 1860 ԹՈՒԱԿԱՆԻ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ.

ՈՒԽՏԻՈՐՔ.

(Գործ Հաուֆ գերմանացի քերթողի.)

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Վ իլհելմ Հաուֆ գերմանացին ծնաւ Շտուտգարդ քաղաքում 1802 թուակ. նոյեմբերի 29 ին և նոյն քաղաքում վախճանեցաւ նոյեմբերի 18 ին 1827 թուականին։

Վեցն և երեք տարեկան հասակում սկսաւ իւր մատենագրական ասպարէզը. հազիւ թէ երկու տարի կարողացաւ յառաջ տանել դպրան, և ահա մահը, անգութ, նախանձոտ մահը կարճեց նորա արդիւնաշատ կեանքը։ Անդառնալի, արտասուելի կորուստ։

Նայց այդ կարճատև միջոցում նա իւր հանճարի ուժով կարողացաւ հռչակել իւր անունը և իւր հայրենակիցների մէջ անմահ յիշատակ թողուլ։ Դախանձելի վիճակ։ Ինչպէս որ երեսուն և հինգ տարի յառաջ, նոյնպէս և այսօրեան օրս նորա քերթուածները կարդացվում են, թէ ո՛չ առաւել, գոնէ ոչ պակաս եռանդով և ախորժանքով։ Նորա չափաբերականքը, ասպետական սիրավէպքը, բարոյավէպքը, նկարագիրները, ստորագրութիւնները տարուց տարի հազար ու բիւր օրինակներով տարածվում են Գերմանացոյ մէջ և մնքրում են ժողովրդի գրասիրական ճաշակը։

Բայց մեք այս տեղ դիտաւորութիւն չունինք նորա քերթողական քանքարը գնահատելու, այն նուրբ և ազդու քանքարը, որ առանց կսկծեցնելու, ծիծաղել գիտէր մարդերի պակասութիւններին վերայ և առանց բարոյասպյց քարոզիչ ձևանալու, խրատել, ուղղել, աղնուացնել իւր ընկերի բարքը։ Հաղուագիւտ քանքար։

Վերմանացւոյ ուրիշ մատենագիրները մեր հայրենակիցների խնամքին թողնելով, մտադիր ենք մեք, մեր զօրութեանը և գիտութեանը հասած չափ, ի մտոյ ծանօթացնել մեր Հայերը այս հեղինակին, որ, հաւաստիաւ գիտենք, շատ օգուտ պիտի բերէ նոցա, սկսեալ մանուկներից մինչև չափահասները։

Այս բանաստեղծական առասպելքը, որ թուով վեց են, և որ առ այժմ ընծայումենք հայ մանուկներին, վերմանացոյ մէջ այնպիսի ժողովրդականութիւն են ստացել, ինչպես որ մեր մէջ Նասրադին Խոջայի զըոյցները և Քեօռօղլուի առասպելախառն գլխի անցքը և սիրագործութիւնքը։ Բայց մեք ծիծաղելի կը լինէինք, եթէ յայդ աստիճան հասուցանէինք մեր պահանջողութիւնը։ քաւ լիցի։ Սակայն այն մասին ևս քաջայոյս ենք, որ մեր Հայ մանկունքը չեն գլորվելու դէպի քուն, աչքերի տակ ունենալով գերմանացի հեղինակի «Ուխտաւորքը»։

ՈՒԽՏԱՒՈՐՔ։

I. ԿԱՐԱՒԱՆ։

Մի օր անապատի միջով անցանուամբ բազմանոյդ կարաւան։ Ընտահման դաշտավայրի մէջ, ուր բայ ի թուղիկ աւազից և երկրիցի ոչինչ չէր երևում, արդէն հեռուից լսվում զանգակների և բուժուժների ձայնը, որոնք կախ էին տուած ուղտերի և ձիերի վզից։ Կարաւանի անցած տեղումը ամպի պէս բարձրանում էր փոշին, և երբ որ ժամանակ առ ժամանակ քամին վչում էր և փոքր ինչ ցրվում նորան, պարզ երևում էին ճանապարհորդների փայլուն զէնքերը և գոյնագոյն հալուները։

Այս տեսարանը բացուեցաւ մի միայնակ ճանապարհորդի աչքի առաջև, որ նմանապէս անցանելով անապատի միջով գալիս էր նոցա հանդէպ։ Այդ ճանապարհորդը հնձած էր գեղեցիկ արաբական ձիու վերայ, որի ծածկոցը վագրի մորթից էր և որի կազմիր կաշեայ սապոգներից կախ ուած էին արծաթի զանգակներ։ Ձիու

գլուխը զարդարած էր ջայլամի փետուրի փունջով: Չիաւորի և ձիու զարդարանքը համահաւասար շքեղ և թանկագին էին: միայնակ ձանապարհորդի սպիտակ ապարօշը ասիղնագործած էր ոսկի թելերով. նորա պարեգօտը և լայն վարտիքը շառաղոյն կերպասից էին. գօտուցը կախած էր թուրը, կոմբը ակն ու մանգաղտով զարդարած: Եւ աչքերը, որոնք թաւ յօնքերի տակ փայլուն էին, երկայն ու խիտ մօրուքը, արծուի քիթը և դղակը դէպ ի ցած քաշած, նորա երեսին տալիս էին վայրենի և յանդուգն կերպարանք:

Երբ որ ձանապարհորդը յիսուն քայլափոխի չափ հեռի էր կարաւանից, իսկոյն մօտակից ձին և մի վայրկենի մէջ մօտեցաւ նորան: Ընտելատուր անասուն բան է հանդիպել միայնակ ձանապարհորդի, և այդ պատճառով կարաւանի պահապանները անուսկալ ապշաւանքից վախենալով, իսկոյն մերկացուցին զէնքերը և դարձուցին ձանապարհորդի դէմ:

Չիաւորը տեսանելով այս թշնամական հանդիպումը, ասաց բարձր ձայնով. «Մի՛թէ վախեցաք դուք, որ ես — միայնակ ձանապարհորդս — կը յարձակվիմ այս բազմամարդ կարաւանի վերայ»:

Ընդհեցաճ պահապանները ցած թողեցին զէնքերը, և նոցա առաջնորդը մօտեցաւ նորան և ասաց. «Ո՞ւր ես կամենում»:

«Որ է այս կարաւանի տէրը, հարցրեց ձիաւորը: Պահապանների առաջնորդը պատասխանեց.

— Այս կարաւանը մի մարդու սեպհականութիւն չէ, այլ շատ վաճառականների է պատկանում, այդ վաճառականները Մեքքայից յետ են դառնում դէպ ի իւրեանց հայրենիքը. մեք նոցա կարաւանը պահպանում ենք այն դարանակալ աւազակներից, որոնք այս անապատի մէջ շատ անգամ կողոպտում են ձանապարհորդների ինչքը և սպանում:

Արաբն ասէր ինձ այն վաճառականների մօտ, ասաց անծանօթ ձանապարհորդը:

— Այժմ ես չեմ կարող քո հրամանը կատարել, պատասխանեց առաջնորդը. պատճառ որ մինչև նոցա մօտ հասանելը քառորդ ժամ կանցանէ. մեք իրաւունք չունինք մեր կամքով դադար առնելու, այլ անընդհատ պիտի առաջնորդենք կարաւանին. վաճառականները դալիս են մեր հետևից: Երթէ կը բարեհաճիս մեր հետ միասին յառաջ տանել քո ընթացքը մինչև այն տեղ, ուր բո-

լոր կարաւանը պիտի հանդիսա առնու, այնուհետեւ ես յանձն կ՚առնեմ ներկայացնել քեզ վաճառականներին։

Ընծանօթը բան չասաց։ Հանեց երկայն ծխափողը, որ կախ տուած էր թամբից, և թարաք քարշելով լուռ ու մունջ յառաջ էր գնում գլխաւորի հետ միասին։

Գլխաւոր պահապանը միանգամայն տարակուսած էր անծանօթ ճանապարհորդի մասին. չէր համաձակվում հարցնել նորա անունը, և չգիտէր թէ ինչպէս պէտք է խօսակցութիւնը սկսանել։ Օրը օրինակ, երբ որ նա ասում էր «քո ծխած ծխախոտը շատ լինելիս է, ձիդ գեղեցիկ քայլուածք ունի» և այլն, անծանօթը կարճառօտ պատասխան էր տալիս «այո՛», և այդ կերպով խօսակցութիւնը վերջանում էր։

Վերջապէս հասան այն տեղը, որ հանգստեան համար որոշած էր։ Առաջնորդը հրամայեց պահապաններին կարգով կանգնել կարաւանի չորս կողմը, որ բաղկանում էր երեսուն հատ ծանրաբեռնած ուղտերից, գրաստներից և ձիերից. ճանապարհորդ վաճառականները թաւով հինգ էին, չորսը նոցանից չափահաս և ծանրաբարոյ, իսկ մինը առաւել երիտասարդ և առոյգ էր. վերնաւորված ծառաները, սպասաւորները և սև ստրուկները նմանապէս ուղևորութեան իւրեանց պարտներին։

Ծառաները և ստրուկները վրանները շինեցին. ուղտերը, ձիերը և սպասաւորները նոցա չորս կողմը շարուեցան։

Վրանի մէջ տեղը կար մի մեծ վրան, կարուած կերպասից շինած. ահա նորա մէջ ներս տարաւ անծանօթին պահապանների առաջնորդը։ Վրանի մէջ դիպակեայ բարձերի վրայ նստած էին հինգ վաճառականք, սեւամորթ ստրուկները բերումէին նոցա առաջև համադամ կերակուրներ և ըմպելիք։

— Ո՞վ է այդ մարդը, հարցրեց մատաղահաս վաճառականը գլխաւոր պահանորդին։

Ընծանօթը լսողեց որ պահանորդը պատասխան տայ, և ինքը իսկոյն ասաց.

«Իմ անունս Աչիմ Ռասուք է. հայրենի քաղաքս Ռաղդադն է. երբ որ ես Մէքքա էի գնում, ճանապարհին աւազակները յարձակվեցան վերաս, բոլոր ստացուածքս կողոպտեցին և ինձ գերի տարան, և մեծ արժինովթեամբ հանուեցին իմ վերայ։ Երեք օր չկայ, որ ես յաջողակ դիպուած գտանելով, փախայ նոցա ձեռքից։ Այժ

բոլոր ժամանակը ունայն թափառումէն այս անհուն անապատի մէջ, մինչև որ մարգարէն խղճալով վերաս, հեռուէն ականջիս հասուց կարաւանի դրասեների զանգակաձայնը: Աչքս խնայարհարբար լինդրումեմ, որ գուք լինէ թոյլ տաք ձեր հետ միասին յառաջ տանել իմ ճանապարհորդութիւնս: Խնդրէք, որ ձեր հովանաւորութեան տակ չէք ընդունում մի աննշան անձն, և երբ որ Խաղզադ կ'հասանիք, մեծ վարձ կ'ստանաք ինձանից, պատճառ որ ես ալ էլչերի եղբօրորդին եմ»:

Վաճառականների մէջ աւելից ծերը ասաց:

— Բարի, հազար բարի եկար, Սէլիմ Բարուք. որովհետև դու ցանկանում ես մեր հովանաւորութեան տակ մտանել, մեք բոլոր սրտով պատրաստ ենք կատարել քո ցանկութիւնը և քեզ ամեն հնարով օգնել. բայց նախ և յառաջ նէ'տ մեր հետ միասին, կեր ու խմիր:

Սէլիմ Բարուքը նստաւ վաճառականների հետ, կերաւ ու խմեց որքան սիրտը կամէր:

Երբ որ ճաշը աւարտեցին, տղաները ժողովեցին սեղանները և բերեցին ծխախոտեր և օշարակ: Երկար ժամանակ վաճառականները լուռ ու մունջ նստած էին. բերաններից թողնելով կապտագոյն ծուխը, նայում էին ինչպէս նա օդակի պէս լող տալով, լայնանալով, անհետանում էր սուտ օդի մէջ: Վերջապէս երիտասարդ վաճառականը կոտեց իւր ընկերների լռութիւնը այսպիսի խօսքերով.

«Ընկերք օր է, որ թէ ձիու վրայ, թէ վրանի տակ նստած, մեր օրերը լռութեամբ անցուցանում ենք, և ամենևին հոգս չենք տանում այն մասին, որ մեր ժամանակը զբաղմունքեամբ հաճելի ենք: Ձանձրութիւնը չարաչար ատելի բան է: Տանը եղած ժամանակին սովորութիւն ունէի ես կամ նայել կաքաւիչների վերայ, կամ ականջ դնել երգեցողներին և նուագածուներին: Ուրեմն, բարեկամք, մի հնար գտանենք, մեր պարապ ժամանակը զբաղմունքեամբ քաղցրացնելու:

Ձորս հասակաւոր վաճառականը, ինչպէս յառաջ, լուռ և մունջ քաղցումէին ծխախոտը և ասես թէ խորին մտածմունքեան մէջ էին ընկղմած:

Նայց անծանօթը ասաց. «Եթէ այդպէս է, ուրեմն թոյլ տուէք ինձ, որ ես ձեզ մի առաջարկութիւն առնեմ: Ուրեմն այս-

պէս անցուցանենք մեր հանգստեան պարապ ժամանակները. Թող իւրաքանչիւրը մեզանից ամէն օր մի մի պատմութիւն կամ զուարճալի անցք պատմէ. այդ մեր համար պատուական զբօսանք կը լինի:

— Շատ լաւ է քո առաջարկութիւնը, ասաց պատուելի վարձառականներից մինը, անունը Ահմէդ. մեք ամենքս յօժար ենք ասածիդ:

«Շատ ուրախ եմ, որ իմ առաջարկութիւնը ընդունելի եղաւ ձեզ, պատասխանեց Աբդուլ Խալիքը, և եթէ կը բարեհաճիք ականջ դնել, ամենիդ յառաջ ես կը սկսեմ պատմել»:

Ամենքը մեծապէս ուրախացան, իսկոյն նստեցուցին նորան իւրեանց մէջ տեղը. սպասաւորները լցուցին նոցա բաժակները օշարակով, ծխախոտները թաւթաքով, և բերեցին վառուն ածուխ, որ ծխախոտը լուցանեն: Աբդուլը առաւ մի մեծ բաժակ լի օշարակով, խմեց ու զովացուց կոկորդը, շփեց մօրուքը և ասաց. «Աբդուն ականջ դրէք սկսպաբանութիւն խօսիցի պատմութեանը:

2. ԿԵՐՊԱՐԱՆԱՓՈՒՆ ԽԱԼԻՖԸ.

Բաղդադու Խալիֆը, անունը Ռաշիդ, մի օր ձմեռնէ յետոյ հանդիստ և ուրախ ծալապատիկ նստած էր բազմոցի վրայ: Օրը տօթագին էր: Փորի կշտամբութիւնը թեթև քուն բերեց նորա աչքերին, որ փոքր ինչ նիրհելուց յետոյ զարթեցաւ և զուարթացաւ: Յառաջ բերեցին երկարն ծխախոտը և դահվէն. մինը ծխելով, միւսը խմելով զուարճութեամբ շփումէր մօրուքը. սպասաւորը տեսանելով որ զահվէն շատ դիւր է գալիս իւր տիրոջը, անդադար լցնումէր նորա դատարկած բաժակը: Խալիֆի վերայ նայելով ամենայն տեսանող, կ'տեսէր թէ նա շատ ուրախ էր:

Ընդհակառակ ժամերին նորա հետ ամեն բանի վերայ կարելի էր խօսել. պատճառ, այդ ժամանակ նա լինումէր հեզ և մարդասէր, և նորա մեծ վեհերը, անունը Ջաֆառ, նորա բնութիւնը ճանաչելով, սովորաբար այդ ժամերին այցելութիւն էր առնում նորան: Ընդհակառակ էս եկաւ Խալիֆի առաջև, բայց շատ տխուր տրտում դէմքով:

Խալիֆը հանեց բերանից ծխախոտը և ասաց. «Վեզիր, տեսանումեմ որ դու տխուր ես. ինչ է դորա պատճառը»:

Մեծ վէղերը ձեռները կուրծքի վերայ խաչ կապած և գլուխը խոնարհեցրած, պատասխանեց. «Թագաւոր, ապրած կենաս. կարելի է որ երեսս սխուր է, բայց սրանից խոլքի ցաւը անհնարին է խօսքով պատմել.....»

— Ի՞նչ է եղել, ի՞նչ, հարցրեց Խալիֆը կարեկցաբար:

— Էյի տեղ ցաճուռմը, պատասխանեց վէղերը ծանր Հա ոաչելով, ապրանքիդ դրան մօտ կանգնած է մի մանրավաճառ, որ շատ գեղեցիկ ապրանք ունի. խիստ ցաւում եմ, որ չունիմ այնքան արծաթ, որ կարողանայի ցանկացածս նորանից գնել:

Շատ վաղուց արդէն Խալիֆը կամենում էր մեծ վէղերին մի բան ընծայել. այս դիպուածը շատ պատեհ էր նորա ցանկութեանը, և սեամորթ սարուկներից մինին հրամայեց որ երթայ ու մանրավաճառին ներս կանչէ: Սարուկը կատարեց Խալիֆի հրամանը:

Մանրավաճառը մի կարճահասակ, հաստ ու պինդ և թուխ երեսով մարդ էր, վրայի հագուստները մաշած և պատառոտած: Շատ լսկած բերեց մի մեծ մաղախ, զանազան ապրանքով լցուցած, ղոր օրինակ մարգարիտներով, մատանիներով, թանկագին ականակուռ թափանչանեներով, դաշխուրանիներով և սանրներով: Խալիֆը և վէղերը մանրավաճառաբար զննեցին այդ բոլոր վաճառքը. Խալիֆը գնեց իւր և վէղերի համար մի թափանչա և նորա հետ համար մի սանր:

Մանրավաճառը սկսաւ միւսացած վաճառքը ժողովել և դասաւորել մաղախի մէջ, և արդէն կամենում էր փակել բերանը, մինչ յանկարծ Խալիֆը նկատեց մի արկղիկ: «Թո՛ղ տեսանենք այդ բանը, ասաց մանրավաճառին, կարելի է որ մի հարկաւոր բան դտանենք այդ տեղ»: Մանրավաճառը բացեց այն արկղիկը, հանեց նորա միջից մի տուփ սև փոշիով լցուցած, և ցոյց տուեց Խալիֆին: Տուփի վրայ մակագրած էր մի թուղթի օտարոտի պրով, որ ոչ Խալիֆը կարողացաւ հասկանալ և ոչ վէղերը:

«Էյս տուփը ես ստացայ մի վաճառականից, որ Մէքքայից յետ դառնալով գտել էր Ճանապարհի վերայ, ասաց մանրավաճառը: Մինչև ցայժմ ես չկարողացայ իմանալ թէ ի՞նչ փոշի է այս և ի՞նչ խորհուրդ ունի այդ թղթի վերայ գրածը. եթէ կը բարեհամիք ինձանից այս վաճառները գնել, ես ձրի կը տամ ձեզ այն, պատճառ որ չգիտեմ թէ ինչի՞ պիտանացու է դա»:

Խալիֆը հատարակօրէն սիրտ էր իւր թանգարանը զանազան

հաղուագլուա և օտալուղի ղրջագիրներով լցուցանել, թէև չէր հասկանում նոցա մէջ պարունակած իմաստը: Խոկոյն գնաց այդ թուղթը և սև փոշին, և մանրաւաճառին արձակեց:

Խալիֆը շատ ցանկանում էր իմանալ, արդեօք ինչ խորհուրդ ունէին այդ անյայտ նօսքերը, որ գրած էին այն թղթի վերայ: Հարցրեց Վէզիրին, չդիտէ՞ արդեօք մի այնպիսի մարդ, որ կարողանար կարդալ դրանց:

— Ամենազօր տէր և իշխան իմ, պատասխանեց վէզիրը, պէտուր մզկիթի մէջ գտանվում է մի իմաստուն մարդ, Ակլեմ անունով, որ շատ լեզուներ գիտէ: Նմին վեհափառ տէրութիւնդ կը բարեհաճի կանչել նորան, կարելի է որ նա մէկինէ այդ անծանօթ գրուածը:

Խալիֆը հրամայեց որ կանչեն իմաստուն Ակլեմին, և երբ որ Ակլեմը ներկայացաւ նորա առաջև, Խալիֆը ասաց.

«Ակլեմ, լսած իմ որ դու գիտուն մարդ ես. ահա, տես այս թուղթը, կարելի է որ կարդաս, հասկանաս և մեզ մեկնես նորա իմաստը: Նմին կարողացար խնդիրս կատարել, ինձանից զարդարուն հագուստ կ'ստանաս, ապա թէ ոչ, իսկոյն կը հրամայեմ ծառաներիս, որ տասներկու գաւազանի հարուած տան մէջքիդ և հինգ հարուած գլուխդդ, որ այսուհետև անխորհրդաբար իմաստուն չկոչուիս:

Ակլեմը երեսի վերայ ընկաւ Խալիֆի առաջև և բարձրաձայն աղաղակեց «Ով ոք կատարվի քո կամքը, ով վեհափառ տէր և արքայ»: Յետոյ առաւ այն թուղթը, երկար ժամանակ նայեց նորա վերայ և վերջապէս ցնծալի ձայնով աղաղակեց. «Ա՛յս գրուածը լաւիներէն է. եթէ ասածս սուտ է, թող իսկոյն կախեն ինձ»:

— Ասայ ինչ կամի ասել այդ գրուածը, հարցրեց Խալիֆը:

Ակլեմը այսպէս սկսաւ թարգմանել.

«Որի ձեռք ընկաւ այս թուղթը, թող օրհնէ նա Ալլահի «սուրբ անունը, նորա առաստաձեռնութեան համար: Ով որ կը «հատուտէ այս սուփի մէջ գտանուած փոշին, ասելով Մ-ա-գ-ի-բ, նա «կարող է իւր սրտի ցանկացած անաստանի կերպարանքը ստանալ և «նորա լեզուն հասկանալ: Եւ երբ կամենայ նորից մարդու կերպա«րանք ստանալ, թող երեք անգամ խոնարհեցնէ գլուխը դէպ ի «արևելք, նոյն նօսքը ասելով: Ասայ պիտոյ է զգուշանալ, որ կեր«պարանափոխութեան միջոցին չծիծաղի. պատճառ, ծիծաղը նորա

«մեզից խելոյն կը հանէ այդ կախարդական խօսքը և նա յաւիտեան «անասուն կը մնայ»:

Ա՛յսպէս թարգմանեց իմաստուն Սէլիմը, և Խալիֆը մեծապէս գոհ եղաւ նորանից: Այլ բռնադատեց իմաստուն Սէլիմին երդուել, որ ոչքի յայտնելու չէր այդ գաղտնիքը. ընծայեց նորան խոստացած ընծաները և խաղաղութեամբ արձակեց դէպի տունն:

Նոյն որ Խալիֆը երես առ երես մնաց Ա՛ղելիի հետ, ասաց նորան. «Ի՞նչ ես կարծում, Ա՛ռնուլ, պատուական դիւա չէր մեր արածը. անասունի կերպարանք առանալը արդէն իմ հոգին ցնծութեամբ լցնում է: Ա՛ղը, առ աւօտեան պահանջ արի իմ մօտ, միասին դուրս երթանք քաղաքից, հոատանք այս վոշին, այնուհետև կ'իմանանք ինչ են խօսում անբան կենդանիք օդի և ջրի մէջ, անտառներում և դաշտերում»:

Մի՛ւս օր, առաւօտուն հագուել ու նախաճաշիկ էր արել Խալիֆը, և ահա եկաւ մեծ վէզիրը և միտքը ձգեց որ ժամանակ է արդէն միասին զբօսնելու, ինչպէս երեկ միմեանց հետ ժամադիր էին եղել: Խալիֆը արձակեց իւր պրանիկներին, առաւ իւր հետ կախարդական վոշին և վէզիրի հետ միասին դուրս գնաց ապարանքից: Նախ և յառաջ գնացին ոլքունի պարտէզը. Այլ այն տեղ ոչ մի կենդանի չգտան, որ կարողանային վոշու ղօրութիւնը փորձել: վերջապէս վէզիրը առաջարկեց երթալ մի ձմակի մօտ, որի ջրից կողմը միշտ ժողովուրդին պէսպէս անասուններ, մանաւանդ տեսել էր նա այն տեղ շատ սիգաձեմ և կարկաչող արագիլներ:

Խալիֆը շատ հաւանեցաւ վէզիրի առաջարկութեանը, և նորա հետ միասին գնաց ձմակի մօտ, ուր միայն մի արագիլ կար, որ զուռզաբար յառաջ ու յետ էր քայլում և գորտեր էր որսում, որոնք թռչտումէին նորա առաջից: Հ՞ատ չանցաւ, մի ուրիշ արագիլ վերևից թռչելով գալիս էր նորա մօտ:

«Տէր իմ, ասաց վէզիրը Խալիֆին, այս արագիլները շատ զուարճալի խօսք ու զրոյց բանալու են իրեարու հետ. եթէ ասածս սուտ դուրս գայ, թող մօրուքս անիծած լինի: Ի՞նչ ես կարծում, լաւ չէր լինելու, եթէ արագիլ դառնայինք»:

— Հ՞ատ լաւ է ասածդ, պատասխանեց Խալիֆը, բայց յառաջ մի քանի անգամ կրկնենք, ինչ որ պէտք է ասել, որ կարողանանք նորից մարդու կերպարանք առանալ»:

— Պէտք է երեսներս դարձուցած դէպ ի արևելք, երեք անգամ երկրպագութիւն տանք և ասենք Ա՜ոո՜ոբօր. այն ժամանակ ես վերստին կը դառնամ խալիճի, իսկ դու, վէզիր: Միայն թէ ի սէր Աստուծոյ, մի ծիծաղիր, ապա թէ ոչ, կը կորչինք:

Այն ժամանակ թռչող արագիլը օդի մէջ ճախրելով կամաց կամաց ցած էր իջանում: Խալիճը հանեց գրպանից տուփը, հոտոտեց մէջի փոշին, տուեց վէզիրին, որ նա էս հոտոտէ, և երկուքը միասին ասացին Ա՜ոո՜ոբօր:

Խոկոն նոցա ոտները ձգուեցան, կարմրեցան, բալակացան. նոցա զարդարուն դեղին մուճակները դարձան անճոռնի թաթեր. ձեռները թևեր դարձան, ուսերի վերայ բուսաւ երկայն բարակ վիզ, մօրուքները կորան, և բոլոր մարմինները փետրով ծածկվեցան:

— Վա՛յ էվլէր, ասաց Խալիճը զարմանալով, այդ ի՞նչ դեղեցիկ ու երկայն կտուց ունիս դու. դորա նմանը, Աահմէտի մօրուքը վկայ, մինչև այս օրս չէի տեսած:

«Հա՛ տո գոհ եմ հաճոյախօսութեանդ համար, վեհափառ տէր իմ, պատասխանեց վէզիրը կտուցը խոնարհեցնելով. դու ևս իմացիր, որ արագիլի կերպարանքով առաւել դեղեցիկ ես, քան թէ խալիճի: Սակայն, սա ևս վատ չէր լինելու, եթէ երթայինք և սկանչ դնէինք մեր այժմեան ազգակից արագիլների խօսակցութեանը»:

Ի՞նչ այս, մինչ այն, թռչող արագիլը ցած իջաւ, կտուցով ու թաթով շփից և ուղղեց փետուրները: Խալիճն ու վէզիրը մօտեցան արագիլներին և լսեցին յետագայ խօսակցութիւնս.

— Ողջո՛յն քեզ, Երկայնակտուց սիկին, ինչպէս պատահեցաւ, որ դու այսօր այսպէս կանուխ եկել ես այս տեղ:

— Աստուծոյ բարին քեզ, սիրական Խարակակտուց. ես եկել եմ այս տեղ նախաճաշիկ առնելու: Հրամայիր ինչ որ սիրտդ կամի: Ահա քեզ մողէսի կտոր, ահա քեզ գորտի թաթ:

— Ներեցէք ընդհակառակն եմ, այսօր ախորժակս տեղումը չէ: Էյս տեղ դալ ուրիշ պատճառ ունի. Էյսօր հայրս մեծ ինջոյք է պատրաստել և ինձ պատուիրել է որ հիւրերի առաջև պար գամ. այժմ կամենում եմ փորձ ինչ վարժուիլ պար գալու մէջ:

Էյս որ ասաց մատաղահաս արագիլը, իսկոյն սկսաւ ծիծաղելի շարժուածներ առնել և թռչտտել: Խալիճը և վէզիրը պարմացած ուշադիր էին նորան: Ասց երբ որ պար եկող արագիլը կան-

գնեցաւ մի ոտի վերայ և միւս ոտը վեր բարձրացուցած, սկսաւ թևե-
րը պինդ պինդ թոսի տալ, նոքա չկարողացան ծիծաղը պահել,
բացեին երկայն կատցները և սկսան սաստիկ ծիծաղել: Երբ որ
խալիֆը կշտացաւ ծիծաղել ու պրծել էր, ասաց.

— Երբէք կեանքումս այսքան ուրախ չէի եղել, ոլքան այսօր,
նայելով այս արագիլների վերայ: Վխտաս որ տխմար թռուչնները
վախեցան մեր բարձրաձայն ծիծաղից և փախան. եթէ ոչ, ով գիտէ,
շատ կարելի է, որ տաղեր էս երգէին:

Յանկարծ վէզիրի միտքը եկաւ որ նոցա սաստիկ պատուիրած
էր կերպարանափոխութեան մէջ չծիծաղել, և իւր երկիւղը յայտ-
նեց խալիֆին:

— Երժանիկ չլինիմ Ա՛էքքա տեսանելու, եթէ մի չար բան
չպատահի մեզ: Ա՛տածիր փոքր ինչ, վէզիր, կարելի է մտաբերես
այն յիմար խօսքը: Ոլքան էս աշխատումեմ, ամենևին չեմ կարո-
ղանում մտաբերել: Վա՜յ մեր գլխին, մի՞թէ այսուհետև մինչև
մեր մահը արագիլ պիտի մնանք:

— Պէտք է երէք անգամ երկրպագութիւն տալ դէպ ի արե-
ւելք և ասել մեհ մեհ մեհ, պատասխանեց վէզիրը:

Դարձան դէպ ի արևելք, կատցները դիպեցուցին գետնին,
բայց աւաղ, ամենևին չէին կարողանում յիշել այն կախարդական
խօսքը: Նոցա երկրպագութիւն տալը, կարկաչելը միանգամայն ի
զուր էր: Կախարդական խօսքը միանգամայն թռել էր նոցա մտքից.
այսպէս, թշուառ խալիֆը և նորա վէզիրը դատապարտուեցան
արագիլ մնալու:

Կախարդած թռչուններըը տխուր և տրտում մնն էին գալես
ճակի չորս կողմը արօտի վերայ և տարակուսած էին իւրեանց ցա-
վին դարման տանելու: Ընհնարին էր, արագիլի մարմնից դուրս գալ.
անհնարին էր իւրեանց գառն վիճակը մարդերին յայտնել: Ով
կը հաւատար, որ այդ երկու արագիլքը խալիֆն ու վ՛էզիրն են:
Եթէ հաւատային էլ, մի՞թէ այնուհետև յանձն կ՛առնուին
հնազանդել արագիլ դարձած խալիֆին:

Վրանի մի օր տխուր թափառեցան անտառից անտառ և փո-
ըերը կշտացնելու համար կերան վայրի պտուղներ, որ հազիւ կա-
րողանում էին իւրեանց երկայն կատցով ծամել: Այլ ամենևին
կարողանում չէին — արագիլների պէս — ուտել գորտեր կամ մո-
ղէնիներ, վախենալով որ ստամոքսերը չմնասեն: Ա՛յն էր միայն մխի-

թաղում նոյա սիրտը, որ կարողանում էին ուր ասես թողնել: Ամէն օր գնում ու նստում էին Խաղտադու տների տանիքների վերայ, որ տեսանեն թէ ինչ են առնում այն տեղի մարդիկը:

Առաջին օրը տեսան, որ ժողովուրդը մեծ շփոթի և տխրութեան մէջ է: Վերտարաձախոխ լինելուց յետոյ օր յետոյ, գնացին նստան Խալիֆի ապարանքի տանիքի վերայ: Այն տեղից փողոցումը մեծ հանդէս տեսան, ականջներին հասան թմբուկի ու փողի ձայները. մի մարդ ոսկեհիւս ծիրանի պատմուճան հագած և գեղեցկազարդ ձիու վերայ նստած, գնում էր. նորա հետևից գալիս էին զրահներիները փառաւոր զգեստներով. զրնէթ Խաղտադի բնակիչների կէս մասը այն տեղ խռնուած, բարձրաձայն աղաղակում էր. «Կեցցէ Խաղտադի Միրզա Իշխանը»:

— Այժմ հասկացայ իմ թշուառութեան պատճառը. այս Միրզան Կաշնուր կախարդի որդին է, որի հայրը իմ ոխերիմ թշնամին է, և երդում է կերել, յաւիտեան ինձ վրէժխնդիր լինելու. բայց ես տակաւին յոյս չեմ կտրել: Ամենայն, դու որ ինձ միակերպ հաւատարիմ ես եղել թէ թշուառութեան և թէ երջանկութեան օրերումս, մի երթանք միասին, մարդաբնի գերեզմանին երկրպագութիւն մատուցանենք, կարելի է որ այդ սրբութիւնը ազատէ մեզ կախարդութեան կատերից:

Թռան նորա դէպ ի այն կողմը, ուր որ Մէդինան է:

Բայց նորա սաւրած չէին երկար թռչելու. հազիւ թէ երկու ժամ շարունակ յառաջ գնացին, վէզիրը ասաց ալեզարմ ձայնով. «Տէր իմ, զօրութիւնս ներում չէ ինձ հաւատնել հետևիդդ, դու շատ արագ ես թռչում. բայց ես չարաչար յոգնած եմ, գիշերն ևս վերայ է հասանում. մի մի օթևան որոնենք, գիշերելու համար:

Խալիֆը յօժարեցաւ նորա խնդիրը կատարել և ցածումը տեսանելով մի գաշտավայր աւերակով ծածկած, վէզիրի հետ միասին իջևանեցաւ, որ այն տեղ գիշեր անցուցանեն:

Երևումէր, թէ այս աւերակները մի օր ապարանք եղած պիտոյ է լինէին. այն տեղ կային աշտարակներ, սիւներ, շատ սենեակներ, որոնք գեռևս չէին միանգամայն աւերած. ամէն բան ցոյց էր տալիս, որ մի ժամանակ շատ փառաւոր շէնք է եղել: Խալիֆը և նորա ընկերը մտան գալով աւերակների մէջ որոնումէին իւրեանց մի յարմար տեղ. յանկարծ Ա՛անուրը կանչեցաւ. «Տէր իմ, ասաց, եթէ ամէն է վէզիրին, ևս առաւել ամէն է արագիլին վախենալ

ցնորքից. բայց ես արդարացրէս խոստովանեմ որ սարսափում եմ այս տեղերից: Ես պարզ լսեցի, որ այս անդ մի մարդ հառաչում և յոգոց էր հանում: Խալիճը կանգնեցաւ, ականջ դրեց և նոյնպէս լսեց. նորա ականջին հասան մարդու լացի ձայներ:

Հետաքրքրութիւնը քարշում էր նորան դէպ ի այն կողմը, ուստի գալիս էր հառաչանքը. բայց վէգերը իւր կոցով բռնեց նորա թեւը և ազաչեց որ նոր փորձանքի մէջ չձգէ իւր անձը: Բայց նորա ազաչանքը և յորդորանքը միանգամայն ի զուր էին: Խալիճը թէև այժմ արագիլի կերպարանքով էր, բայց չէր թողել իւր առաջին արիութիւնը. քարշեց թեւը, որից մի փետուրը ձեռաց վէգերի կոցումը, և համարձակ յառաջ գնաց մութ դռների և անցքերի մէջ:

Շուտով հասաւ մի կիսափակ դրան մօտ, և ահա այդ դրան յետից լսեցին լացը և հառաչանքը, և կոցով բացից դուռը և զարմացած ձեռաց շէմքի մօտ:

Վերած սենեկումը, տաքի վերայ կանգնած էր մի մեծ բուռ. փոքրիկ սեղանը ազօտ լոյս էր ձգում այն սենեկի մէջ: Խուի խաշոյ աչքերից տաւտօրէն վազումէին արտասուք. նորա կորացած կտուցից դուրս էին գալիս աղեխորով հառաչանք ու հեկեկանք: Տեսնելով խալիճին և վէգերին, — որ նմանապէս վստահացել էր իւր թագաւորի հետևից երթալ — բուն ուրախութենից սաստիկ ճիչ բարձրացրեց. թեւերով սրբեց աչքերը և — մեծ զարմանք — մարդու ձայնով ասաց արաբերէն. «Արաբ, հազար բարի եկաք, սիրական արագիլներ. ձեր գալուստը ինձ բարի գուշակութիւն է, իմ համար ասած է, որ արագիլները բերելու են ինձ մեծ երջանկութիւն»:

Երբ որ Խալիճի զարմանքը փոքր ինչ մեղմացաւ, վէգը ծռեց, երկայն ոտները ուղղեց և ասաց.

Ով բուս, քո խօսքերից երևում է որ դու մեզանից օգնութիւն ես սպասում: բայց քո ակնկալութիւնը միանգամայն ի զուր է: Մեք խնամային մեր գլխով անցած փորձանքը, կը տեսանէիր որ մեք հազարապատիկ առաւել թշուառ ենք քեզանից. մեք ինքներս կարօտ ենք միւսների օգնականութեան:

Բուն խղճից պատմել նոցա գլխից անցած բաները, և Խալիճը մանրամասնաբար պատմեց ինչ որ մեք արդէն գիտենք:

Երբ որ տեղեկացաւ բուն Խալիֆի և վէզիրի Թշուառութեանը, ասաց. Խմացած եղիք, որ իմ տարաբախտութիւնը ձեւրից պակաս չէ:

«Իմ Հայրս Նզուսաանի Թագաւորն է. ես նորա միակ զա-
«ւակն եմ, անունս Ռուզա. նոյն իսկ Քաշնուր կախարդը իմ տա-
«րաբախտութեան պատճառն է: Մի օր եկաւ նա հօրս մօտ և ինձ
«իւր որդու համար կին խնդրեց: Հայրս բարկացկոտ մարդ էր.
«երբ որ լսեց նորա յանդուգն առաջարկութիւնը, հրամայեց ծա-
«ռաներին, որ սանդուղքից ցած գլորեն նորան: Բայց կախարդը
«կերպարանքը փոխած, նորից հնար գտաւ մեր ապարանքը մտա-
«նելու:

«Մի օր պարտիզումը մեն գալով, սաստիկ ծարաւեցայ. հրա-
«մայեցի որ ջուր բերեն ինձ. կախարդը, ոսկուվի կերպարանք
«առած, տուեց ինձ ջուր, որից յանկարծ այլակերպվեցաւ դէմքս
«ու երեսս, և այն օրից մնացինս բուի ձև ստացաւ:

«Ալեից և ապարանքից ուշաթափ եղայ, և այդ թմրու-
«թեան ժամանակ կախարդը բերեց ինձ այս տեղ և սոսկալի ձայնով
«ասաց.

«Այսիր այդպէս տգեղ և անճոռնի. թռչ գարշելի և զզուելի
«քեզանից նաև անբան ապարաճքը մինչև այն օրը, երբ որ կը գտան-
«ուի մի մարդ, որ յօժարակամ կընտրէ քեզ իւր կին. թէպէտ
«դու այդպէս սարսափելի տգեղ էիր: Դու և քո Հայրը իմացիք
«թէ ինչպէս վրէժխնդիր լինել դիտէ Քաշնուրը»:

«Կերպարանափոխութեան օրից անցան շատ ամիսներ. ճգնա-
«ւորի պէս կենում էի այժմ վրաստանների մէջ. ատելի և սարսա-
«փելի մինչև վայրի գազաններին: Նոսութեան դեղեցկութիւնը իմ
«համար յաւիտեան ծածկած է. պատճառ, ցերեկով ես ոչինչ չեմ
«տեսանում. և երբ որ լուսնի աղօտ լոյսը փայլում է, այն ժամանակ
«միայն, իմ աչքերը կարողանում են մի բան տեսանել»:

Երբ որ բուն իւր պէսով անցած տարաբախտութիւնները պատմեց պրծաւ, նորից սրբեց իւր թևով աչքի արտասուքը. պատ-
ճառ, նա չէր կարողանում առանց ցաւի մտաբերել իւր առաջին երջանկաւէտ վիճակը և այժմեան թշուառութիւնը:

Լսելով ալքայազն աղջկայ պատմութիւնը, սաստիկ սիրե-
ցաւ Խալիֆը և ասաց.

— Իմ կարծիքը այս է, որ իմ և սորա վիճակը մի գաղտնի յարակցութիւն ունին միմեանց հետ. բայց ոչ կարող է իմանալ թէ ի՞նչպէս է, կամ ինչո՞ւ է այդպէս:

Ռուն պատասխանեց. «Ոչ թագաւոր, ես էս այդպէս եմ կարծում. մանաւանդ քանի որ միտքս է գալիս, որ մանկութեանս ժամանակ մի իմաստուն կին ինձ գուշակել էր, թէ իմ բախտաւորութիւնս լինելու է սրագիրի ձեռքով: Գուցէ այն կինը նախազդացել էր, որ մի օր մեք միմեանց պիտոյ է հանդիպինք և իրեարու օգնենք:

Ալի խօսքերը շատ զարմացուցին Խալիֆին և նա ասաց.— ի՞նչպէս կարող է այդ պատահել:

Աբթայաղն աղջիկը պատասխանեց. «Ախտարդը որ մեր թշուառութեան պատճառն է, ամեն ամիս գալիս է այս աւերակների մէջ: Ալի տեղից մօտիկ մի ընդարձակ դահլիճ կայ, այդ տեղ լինում նա իւր ընկերների հետ: Վաղիցս ես լսել եմ նոցա խօսակցութիւնը: Նոքա իրեար պատմում են իւրեանց ամօթալի գործերը, և կարելի է որ այդ խօսակցութեան ժամանակ կը յիշեն այն կախարդական խօսքը, որ դուք մոռացել էք»:

— Ով իմ անգին դշխոյ, աղաղակեց Խալիֆը, շուտով ասա, ինձ ինչ է գալու կախարդը, և ո՞ւր է այն դահլիճը, որ դու դիտես:

Ռուն փոքր ինչ լուռ մնաց և յետոյ ասաց.

«Մի բարկանար իմ վերայ, տէր իմ, եթէ այդ գաղտնիքը չյայտնած ձեզ առաջարկեմ իմ պայմանը, առանց որին անհնար է կատարել ձեր խնդիրը»:

— Ի՞նչ է այդ պայմանը, ասաց Խալիֆը. պահանջիր, հրամայիր ինչ որ սիրտդ կամենայ. ես ամեն բանի յօժար եմ:

Աղջիկը պատասխանեց. «Ինչպէս դուք, նոյնպէս և ես ցանկանում եմ ազատուիլ այս ողբալի վիճակից. իմ խղճը այն ժամանակ միայն կարող է կատարվիլ, եթէ ձեղանից մինը յանձն առնու իմ հետ ամուսնանալ»:

Ալրաքիների մարմինը փշաքաղ եղաւ այս առաջարկութենից. Խալիֆը աչքով արեց վէզիրին, և երկուքը միասին դուրս դնացին:

«Ա՛խ վէզիր, ասաց Խալիֆը, ինձ անյարմար է այսպիսի յիմարական ամուսնութիւն: Յօժարիր սորան կին առնուլ քեզ»:

— Ներող վայ իմ դշխոյն, ասաց վէզիրը. ես ամուսնանամ դորա հետ. բայց մի՞թէ դու չդիտես, որ իմ կինը աչքերս կը հանէ,

եթէ մի նոր կին առնեմ: այդ ևս բաւական չէ. ես տալիքս առած մարդ եմ: իսկ դու, տէր իմ, ոչ ծեր ես և ոչ ամուսնացած. առաւել յարմար և վայել է քեզ պսակուիլ այս մատաղահաս և գեղեցիկ աղջկայ հետ:

— Այդ է խնդիրը որ ես չգիտեմ, արդեօք մատաղահա՞ս է նա, թէ ոչ, ասաց Խալիֆը հառաչելով: Ես սովորութիւն չունիմ ապրանքը չտեսած գնել:

Այսպէս երկար վիճաբանութենէն իրեարու հետ. վերջապէս տեսանելով որ վէզիրը աւելի պատրաստ էր իւր բոլոր կեանքը պատմել ճնշալ, քան թէ բուի հետ պսակուիլ, Խալիֆը յանձն առաւ ինքը պսակուիլ նորա հետ: Ուրն շատ ուրախացաւ նորա առաջարկութեան վերայ և ասաց, որ եթէ գործը շուտով չվճռվէր, նոցա ազատութիւնը պիտոյ է շատ յետաձգուի. պատճառ, այսօր հաւաքվելու են աւետարանը կախարդը և իւր հանմտահներըը:

Այս որ ասաց, իսկոյն տարաւ արագիլներին դէպ ի վերոյշնալ դահլիճը: Երկար ժամանակ դնուեցին նորա մոտ անցքերի մէջով. վերջապէս մի քանդուած պատի ճեղքից տեսան պայծառ լոյս:

Նըրը որ հասան այն տեղ, որ տեղից դուրս էր գալիս լոյսը, բուն խրատս տուեց արագիլներին, որքան կարելի է տեղերուամբ հանդարտ նստել, ճեղքից նայել և տեսանել ինչ որ կը պատահէր դահլճի մէջ և լսել ինչ որ կը խօսուէր այն տեղ:

Նորա տեսան մի սիւնազարդ, կամարակապ և ընդարձակ դահլիճ շքեղ զարդարած, որ լուսաւորած էր գոյնագոյն լապտերներով, որոնցից լոյսը ինչպէս արեգակից էր բղխում: Դահլճի մէջ կար մի բոլորշի սեղան, որի վերայ շարած էին անօթներ և ամեն տեսակ համադամ և անոյշ կերակուրներով լցրած. սեղանի մօտ կար մի բազմոց որի վերայ նստած էին ութ հոգի. նոցա միջից միևին արագիլները ճանաչեցին որպէս այն մանրավաճառը, որ նոցա ծախել էր կախարդած վոշին: Ուազմականներից միևը խնդրից նորան պատմել իւր վերջին օրերի կատարած սխրագործութիւնը, և մանրավաճառը պատմեց նոցա Խալիֆի և վէզիրի կերպարանափոխութեան պատմութիւնը: Նրը որ նոցա պատմածը լսեցին ամենքը, հիւրերից միևը հարցրեց մանրավաճառից.

«Ո՞ղջոյն է այն խօսքը, որ նորա մոռացել են»:

Մանրամասնաբար պատասխանեց։—Այդ խօսքը [illegible] ստիպուց է և շատ դժուար պատասխանելի, որ ունի այսպիսի բացահնչութիւն. Մոպասէօր։

Այս լսելով, փոքր մնաց, որ արագիլները ուրախութենից խելացնոր լինէին. իսկոյն դուրս եկան աւերակներից և այնպէս արագ սկան վազել, որ բուն դժուարաւ կարողանում էր նոցա հետևից հասանել։ Երբ որ արձակ տեղ հասան, Խալիֆը ասաց բուին.— Ով իմ ազատիչ, դու փրկեցիր մեզ այս տարաբախտութենից. ի նշան երախտագիտութեան, ես կամենում եմ քո ամուսինը լինել։ Այս որ ասաց, գարձաւ դէպ ի արևելք, և վէզիրի հետ միասին երեք անգամ երկրպագութիւն տուեցին արեգակին — երբ որ նա փառաւորապէս բարձրանում էր սարերի հետևից — և ասացին Մոպասէօր։

Նոյն իսկ րոպէին ստացան նոքա իւրեանց առաջին կերպարանքը։ Ուրախութենից չգիտէին թէ ինչ անեն. մին գրկախառնում էին միմեանց, մին լալիս էին։

Բայց անհնարին է խօսքով յայտնել նոցա զարմանքը և ուրախութիւնը, երբ որ յետ նայեցան և տեսան մի անպատմելի գեղեցկութեամբ աղջիկ զարդարուն զգեստ հագած, որ ժպտելով ձեռքը տուեց Խալիֆին և ասաց. «Ես իմ, չճանաչեցիր[illegible] քո բուին»։ Խալիֆը միանգամայն ապշեցած նորա գեղեցկութեամբ, ասաց բարձրաձայն. Ով, ինչպէս երջանիկ եմ ես, որ արագիլ էի։

Երեքը միասին գնացին դէպ ի Բաղդադ. Խալիֆը իւր գրպանում գտաւ ոչ միայն կախարդած փոշիով տուփը, այլև քսակով արծաթը, որով պիտոյ էր վարձել մի կառք քաղաք հասանելու համար, ևս և գնել ճանապարհի պաշար։ Այսպէս, կարճ միջոցում հասան Բաղդադի դրան առաջև։ Նոցա անակնկալ վերադարձը ամենին զարմացուց, և ժողովուրդը անսահման ուրախութեամբ ընդունեց իւր սիրական թագաւորին։

Իսկ Մէրջանին (որ խարդախութեամբ և դաւաճանութեամբ յափշտակել էր նորա աթոռը) ժողովուրդը քարշելով դուրս հանեց ապարանքից և կախարդի հետ միասին բանտը ձգեց։ Խալիֆը հրամայեց որ առնուն ծեր կախարդին և տանեն աւերակների մէջ, և այն դահլիճում ուր նստած էր տարաբախտ բուն, կախ տան։ Իսկ նորա որդուն, որ իւր հօր չափ չարագործ չէր, առաջարկեց կամ հոտոտել կախարդած փոշին կամ մահով դատապարտուիլ։

Մինչեան իսկոյն ընդունէց առաջինը, այսինքն հոտառել փաշին։ Ա՛ն վերջը առաւ նորան փաշին, հրամայեց ասել Տ՚ա-պաքէր, և մնացածել սրտակիլն մասին։ Ապա թէ Մինչեան ասել էր Տ՚ա-պաքէր, իսկոյն սրտակիլ գարձաւ։ Խալիֆը հրամայեց փակել նորան երկաթի վանդակի մէջ, և տանել դնել պարտիզումը։

Հետո ժամանակ երջանկապէս ապրեց Խալիֆը իւր գեղեցիկ կնոջ հետ։ Երբ որ յետ ձաշուն ըստ սովորութեան գալիս էր նորա մօտ մեծ վէզիրը, նորա հաճութեամբ յիշումէին իւրեանց գլխի անցքը։ Ժամանակ առ ժամանակ, երբ որ Խալիֆը ուրախ էր, նա ծիծաղելով ձեւացնումէր վէզիրի սրտակիլ լինելը. նորա պէս ծանր լսաքայլ մարդ էր գալիս, ոտները բարձրացնելով, նորա պէս թեւերը ցրկումէր միմեանց, երկայն վիզը դէպ ի սրևելք դարձուցած, անօգուտ աղաղակումէր մեռ մեռ մեռ։ Ետյս պատմութիւնները լսելով դշխոյն և նորա երեխայքը, ծիծաղից թուլանումէին։ Բայց եթէ նորա կատակները չափից դուրս էին գալիս և ձանձրացնումէին վէզիրին, սա զգուշացնումէր Խալիֆին, ապառնալով, եթէ լուռ չկենայ, ապա իսկոյն կը յայտնէ դշխոյին թէ Խալիֆը չիսմէր պակվիլ բուի հետ, և իւրեան խրատ էր տալիս ինքը կին առնուլ նորան։

Ալիմ-Բարութը տատրեց իւր պատմութիւնը, և վաճառականները նորանից շատ գոհ էին։ «Ժամանակը այնպէս արագ անցաւ, ասաց նոցանից մինը, բարձրացնելով վրանի վարագոյրը և դուրս նայելով, որ անզգալի կերպով վերայ հասաւ երեկոն. ժամանակ է ճանապարհ ընկնելու. երեկոյեան հովը արդէն սկսել է»։ Ընկերները հաստատեցին որ նորա ասածը ճշմարիտ է. հրամայեցին վրանները ժողովել, ուղտերը և ղրատանները բեռնաւորել, և կապրանքը ինչպէս յառաջ կարդով ճանապարհ ընկաւ։

Նորա սովորաբար դիշերով էին կատարում իւրեանց ճանապարհորդութիւնը, որ ցերեկի անտանելի տօթից ազատուին. այդ պահուն օդը զովարար էր ճանապարհորդների համար և փայլուն աստղները լուսաւորումէին նոցա ուղին։ Ա՛յնջապէս մի այնպիսի տեղ հասան, որ իջևանելու շատ յարմար էր։ Խոկոյն վրանները շինվեցան և ամէնքը սկսան հանգստանալ։ Մեծ յարգանք և մարդասիրութիւն ցոյց էին տալիս վաճառականքը օտարականին և ինչպէս բարեկամի հետ վարվումէին նորա հետ. մինը տալիս էր նորան իւր բարձը. միւսը իւր վերմակը. երրորդը իւր ծառ անները. մի խօս-

քով, օտարականը կարող էր կարծել, որ իւր սեպհական տան մէջ է։ Երբ որ ցերեկի ամենատաքուկ ջերմութեան ժամանակը վերայ հասաւ, ձանապարհորդները արթնացան քնից. անհնարին դողով ձանապարհը շարունակել, միաբերան որոշեցին մինչև երեկոյ մնալ։ Երբ որ ձաշն աւարտեցին, նատան միասին, ինչպէս որ երեկեան օրը, երիտասարդ վաճառականը ասաց. «Երեկ Սելիմ-Ռաուքը իւր պատմութեամբ մեզ մեծ զուարճութիւն պատրաստեց. ի՞նչ կը լինէր, եթէ բարեհաճէր պատուելի Անդէոը իւր գլխի անցքերից մինը մեզ պատմել։ Աշխարհի երեսին երկար ապրելով, անտարակոյս շատ բաներ տեսած ու լսած է, ուրեմն շատ հաղուագիւտ բաներ գիտէ նա»։

Ընկերը քանի մի ժամանակ լուռ կացաւ, որպէս թէ մտքում մը պատմութեան նիւթ էր որոնում, և յետոյ ասաց.

«Սիրելի բարեկամք, մեր ձանապարհորդութեան ժամանակ դուք հաւատարիմ ընկեր էիք ինձ. նմանապէս պարոն Սելիմը իւր քաղցր կենակցութեամբ արժանի է սիրու և յարգանքի։ Ուրեմն ես կը պատմեմ ձեզ իմ կեանքի մէջ պատահած մի անցք, որ հաղիւ երբէք, և այն, իմ ընտրած մարդերին եմ ասում։ Պատմութիւնս, սեռաջ նաւորդներէ կախարդած նաւէ մասին է»։

(Շարունակութիւնը յետոյ։)

Մխայել Վայելեան։

ՏԱՂԱՁԱՓՈՒԹԻՒՆ։

ԸՂՐԱՑ ԸՂՄԻԿ։

Ա՛ղ առաւօտուն, զարթեցայ մի օր
Ահել երազից, որ մարդ բաղդաւոր
Երբէք կարող չէ կեանքում տեսանել.
Եւ մինչ արեգակն դեռ ևս չէր ծագել,
Իմ սովորական լեառն ես գնացի։

Երբ բնութեան հետ նորից զարթելով,
Մանուկ Թռչունը քաղցր երգերով
Փառաբանումէր իւր տեղ բնատուր
Եւ մայրն բերումէր նորան կերակուր,
Աչքըս լցուեցաւ դառն արտասուքով։

Ո՛հ, ինչո՛ւ չունիմ ես ևս մի մայր,
Ո՛հ, ինչո՛ւ ոչ ոք չէ դառնում ինձ հայր,
Ո՛հ, ինչո՛ւ ես չեմ այս Թռչնիս նման,
Ինչո՛ւ աշխարհումս չունիմ ոչ մի բան,
Ինչո՞ւ ինձ այսպէս զրկել է բնութիւն։

Օրօրոց անգամ ես չեմ ունեցել.
Մի քարի վերայ մանուկ են գտել
Ինձ փոքրիկ գիւղում, եկեղեցու դրան,
Ցրտում, միայնակ, անտէր, անպաշտպան,
Այն քարն ևս իմ չէ. այս ինչ պատիժ է։

Ծնողներիցս հեռու գոլով աքսորուած,
Չգիտեմ ճաշակ ծնողի գգուանաց.
Եւ փոքրիկ մանկունք, որ գիւղումս կան
Չեն խօսում իմ հետ երբէք ոչ մի բան,
Եւ ինձ քոյր անուն երբէք չեն տալիս։

անցիքը յիշեցնումին նորա յոյն լինելը, որից շատով պիտի ազատվէր: Երբ որ տուն դարձաւ, Ծննդեան երկունքը սկսան, և նա ծնաւ որդի, որ ի յիշատակ իւր նախնիքից մինին անուանվեցաւ Նապոլեօն:

«Այս մի կամակոր և հետաքրքիր տղայ էր». այս խօսքերովս սկսումէ Նապօլէօնը իւր մանկական հասակի պատմութիւնը: Երբ դարձեալ եթէ սկսեալ այդ հասակից քննելու լինինք նորա բնաւորութեան ամնումը, անհնարին է, որ չնկատինք նորա մէջ այնպիսի նշաններ, որոնք միայն հնչակաւոր մարդերի երեխայութեանը յատուկ են: Նորա բնաւորութիւնը կռուասէր, հրամայող և հպարտ էր: Մի անգամ առանց դանդաղելու հօրն օր շարունակ սասակի պատուհաս կրեց այն դիտումամբ միայն, որ իւր Եղբայր քոյրը ծնողական յանդիմանութենից ազատէ: Մի ուրիշ անգամ, երբ որ նոցա տան առաստաղի գերանը կամէր ցած խորտակվել և տանեցիք լըրտեսատես սենեկից դուրս էին փախել, նա մենակ մնաց վառնդատուր սենեկումը և փոքրիկ ձեռները բարձրացուցած, արհամարհում և հայհոյումէր անհրաժեշտ վտանգը: Իւր երեց Յովսէփի եղբօր վրայ անսահման իշխանութիւն ունէր: Ծաճձումէր նորան ջարդչալ, ատամներով սասակի վէրքեր էր հասուցանում նորա մարմնին. դանդատր հասանումէր մօր ականջին, մայրը յանդիմանումէր, բայց Յովսէփը բերանը և ս չէր կարողանում բանալ, որ գանգատէ: Նոցա հօրեղբայր Լուկիանոսը, (Lucien) Ելյաչջոյի առաջատրկաւագ, նախազուշակել էր թէ այս անհնազան անցքերը մի օր լինելու են յառաջաբանը մի քաղաքական պատմութեան: Իւր մահուան մահճի մէջ դրած, եղբօրորդիքը իւր ջոջ կողմը ժողոված, ասաց նա Յովսէփին «Դու դերդաստանի անդրանիկն ես, բայց Նապօլէօնը նորա դլուխն է. հնդ տար, որ նորան մոլիցդ չհանես: Նորա ապագայ վիճակի մասին չէ պիտոյ մտածել, նա ինքն կը հոգայ իւր դլխի համար»: Ելս անցքը, Նապօլէօնի կարծիքով, այնպէս էր, ինչպէս Նոսաի անդրանկութեան իրաւունքը վաճառել Յակովբին:

Մենք չենք կամենում այս անհնազան դիպուածներին պատմական նշանաւոր ծանրակշռութիւն տալ. բայց դիտելի է, որ նա երկու տարեկան հասակում մկրտուեցաւ իւր Մարիամ-Աննա քոյրեր հետ (որ ծնած էր 1771 ին և փոքր ինչ ժամանակից յետոյ վախճանեցաւ): Չանի որ քահանան մկրտութեան ազօթքը կարդումէր,

Նապոլէօնը կնքահօր և կնքամօր հետ միասին հանդիսաւոր ծուխը վառած մնում էր. բայց երբ որ տեսաւ թէ քահանան կամենում էր իւր փաքրիկ քոյրը պլնին ջուր ածել, զարհուրած տեղից վեր թռաւ և սկսաւ բարձրաձայն աղաղակել և ասել. «Մի թրջէք քոյրս». շատ ջուրթիւն դրծ դրեցին նորա ճնողքը և աղաչանքը, մինչև կարողացան իջուցանել նորա մանկական բարկութիւնը, որ արդէն դուշակում էր հետագայ բնութիւն։ Վանի մի տարուց յետոյ փաքրիկ կոխ ծագեցաւ Ազաչէօ քաղաքի և նորա շրջակայքի երեխաների մէջ. Նապոլէօնը միշտ զօրագլուխ էր ընտրվում այդ պատերազմներում, ուսոի շատ անգամ յաղթանակումներին ծանր հետևանք։ Ազաչէօացոց առաջնորդ լինելով, ստէպ ստէպ յաղթել է իւր թշնամիներին ոչ այնքան իւր հասկացողութեամբ, որքան խորամանկութեամբ և ճարպատր շարժուածներով։ Մինչև այս օրս նորա յիշատակը մնացել է Ազաչէօացոց մէջ։ Մինչև տասն տարեկան հասակը Նապոլէօնը մնաց իւր երկրացիների մէջ։

Թէև Նապոլէօնի հայրը քաղաքական շատ դործերով զբաղված էր, բայց և այնպէս անտես չէր առնում իւր զաւակների դաստիարակութիւնը։ Ինչնորդութեամբ Մատբեօֆին, (որ կղզու կառավարիչն էր) հրաման առաւ ուղարկելու իւր որդի Նապոլէօնը դէպ ի Ֆրանսիա Ռրիէննի զինուորական դպրոցը մտանելու։ Այս մանուկի չքաւորութիւնը, ինչպէս երևում է, շատ անգամ ստիպել է նորան լուռ ու մունջ կուլ տալ իւր ընկերների արհամարհանքը. նորա կորսիկական օտար արտաբերութիւնը շատերին ատելի է տուել նորա վերայ ծիծաղելու։ Այս վիշտերը նորա բնաւորութեանը տուեցին մի կերպ խստութիւն և թաղնութիւն, որով նա ամենեցուն աչքին անախորժ էր երևում թէ իւր ընկերակիցներին և թէ դաստիարակիչներին։ Ի վերայ այսր ամենայնի նա գիտէր ականջ ակնածութիւն դէպ ի իւր անձը ազդել նոցա մէջ, որոնք առաւել մտից նկատում էին նորան, և այդ ազդեցութիւնը յառաջացնում էր նա թէ իւր կամքի հաստատութեամբ և թէ իւր օտարոտի դնացքով։ Ստատիկ սիրելով Պլուտիկայի (իւր հայրենիքի) պատմական ատանդութիւնները, զայրացնում էր նորա սիրտը տեսանելով որ նորա ծննդական երկիրը մեռնելով Ֆրանսիայի հետ կռուում է իւր ազգային անկախութիւնը։ Այս մտածմունքը ստիպում էին նորան միշտ միայնակեաց կեանք վարել։ Ամեն յաջողակ դիպուածում նա մինչև երկինք էր բարձրացնում Պաօլիու քա-

ջամբական դիմադարձութիւնը, և մի օր նորա բերանից դուրս եկան այս խօսքերս թէ «Ընթրիք չեմ նկերելու հօրս, որ Պաօլիու օգնական էր, այն մասին որ իւր յօժարութիւնը ցոյց տուեց Կորսիկան Ֆրանսիայի հետ միաւորելու։ Նա պէտք է մանուկից լինէր Պաօլիու Թշնամու բախտին և նորա հետ միասին կործանուէր»։ Այդ, ուրեմն, այդ վէհ զգացմունքը նորա մանկութեան, ժամանակով տեղի տուեցին մի այլ զգացման. նորա ազգասիրութիւնը փոխուեցաւ անձնասիրութիւն.... Այդ այդ կը տեսանենք նորա կեանքի յետագայ տարիներում։

Մի օր Նապօլէօնը դպրոցի սրահում տեսանելով դուքս Ռուազիօլի պատկերը, թաւօծագին դէմքով մօտեցաւ նորան և ուսից բարձրաձայն. «Ահա այն օրը, երբ դու ինձ կը տաս այն արեան հաշիւը, որ թափել ես դու հայրենիքում և այն ազատութեան որ խլել ես մեզանից»։ Այս ազգասիրական խօսքերը սաստիկ բորբոքեցին վարժապետների բարկութիւնը մանուկ Կորսիկացու վերայ։

Ռօնապարտէն շատ շուտ ուսաւ Ֆրանսիական լեզուն. չգիտենք, ինքնասիրութիւն էր արդեօք, թէ դանջանքի տպաւորութիւն իւր մայրական ձէին, միայն թէ նա երբէք չընտելացաւ Ֆրանսիական լեզուի ուղղագրութեան կանոններին։ Առելով ատուածը լատինական լեզուն. բայց նորա հանճարի աջողակութիւնը փայլեցաւ մաթեմատիկական ուսմունքի մէջ, և այդ մասին իւր ամեն դասակից ընկերների մէջ գերազանց հանդիսացաւ։ Ընհաշտ թըշնամի էր չնչին գրքերի ընթերցանութեան. նա իւր պարապ ժամերը նուիրում էր նախնի ականատես մարդկերի վարքագրութիւնքը կարդալու։ Նորա սիրած մտաւանքն էին Պլուտարքոս, Պօլիբիոս և Պլուտարքոս հեղինակքը. բայց մեծ կշիռ և յարգանք չէր տալիս Պօլիռոս Վռւրտիոսին։ Ոչինչ սէր չունէր դեղեցիկ դպրութեան, երաժշտութեան և կերպարանող ճարտարութեան հետ։

Մի օր վերատեսուչը, որ խիստ և կոշտ բնաւորութեան տէր մարդ էր, մի թևիև յանդգնութի համար հրամայեց նորան խեղկատակի հագուստով սեղանատան մուտքի մօտ ծունր դրած ճաշել. շատերին յայտնի է, որ այսպիսի պատիժը դպրոցներում մեծ անպատուութիւն է աշակերտին։ Նապօլէօնը, որի սրտի մէջ խոր տպաւորուած էր անձնասիրութիւնը և պարտաճանաչութիւնը, շատ զայրացաւ այս պատուհասի վերայ, թէպետև հնազանդեցաւ

իւր մեծաւորի հրամանին։ Բայց նոյն լոպէին, երբ գաւազանը պէտք է կառաւորէր նորա վերայ. մահառիթ դունատութիւն պատեց նորա երեսը և նա շնչասպառ դեպ ի գետին գլորվեցաւ։ Գլխաւոր կառավարիչը, որ այդ միջոցին նորա մօտից անցանում էր, տեսանելով այդ, ազատեց Նապոլէօնին այդպիսի խայտառակութենից, սաստիկ յանդիմանելով վերատեսուչը, և հայր Պառթօլոը, նորա մաթեմատիկայի ուսուցիչը, շտապով վերայ հասաւ և սաստիկ բողոքից, որ մի ընչին բանի համար ոտնակոխ են առնում նորա ժրաջան աշակերտի պատիւը։

Ահա անցքից յետոյ հին վերատեսչի տեղ եկաւ մի նոր. դա մի երիտասարդ էր, Ֆրանշ Կոմթէի հողագործների ազգատոհմից. իւր ձրիավարժ ուսման ընթացքը աւարտելով Բրիենեում, նոյն դպրոցի մէջ քաղաւածապետ կարգուեցաւ։ Սա մեծագիր էր Ֆրանչիսկոսի կրօնաւորութեան կարգը մտանել. բայց ՚ի Պառթօլոի յորդորանքով մնաւ թնդանօթաձիգ զօրքի մէջ և քաղաքական յեղափոխութեան ժամանակ արդէն սպորին սպայի աստիճան ունէր։ Ահա նորընտիր վերակացուն էր ՚ի Բրիենդիայի նուաճողը, անունը Պիշեգրիւ։

Թէև դպրութեան մէջ Նապոլէօնը մեծ աջողակութիւն չէր ցուցանում, բայց և այնպէս նորա մի քանի շարադրութիւնները զուրկ չեն հանճարեղ իմաստից. նորա ուսուցիչը գեղեցիկ դպրութեան, իւր գեհաւհաս աշակերտի մեծաւոր պարզացումը նմանեցնում էր մի հրաբուղխ սարի կրակով ջերմացուցած որձաքարի (granit chauffé au volcan)։ Սակայն Վերմանացոց գրականութեան մէջ ոչինչ յառաջադիմութիւն չէր ցոյց տալիս։ Այդ անընդունակութեան պատճառով պարոն Բաուէրը, Վերմանացոց լեզուի դասատուն, միանգամայն աչքից ձգել էր նորան։ Մի օր պարոն Բաուէրը դասատուն մտանելով, չգտաւ այն տեղ Նապոլէօնին, և երբ որ հարցրեց թէ ո՞ւր է նա, նորան պատասխանեցին որ Նապոլէօնը հարցաւորմի մէջ է։ «Վախճ արդեօք նա մի բան» հարցրեց գերմանական լեզուի վարժապետը ծիծաղելով։ Ի՞նչ էք ասում, պարոն, պատասխանեցին նորան, դպրոցի մէջ նա երևելի է իւր խորին մաթեմատիկական գիտութեամբ։ «Եթէ այդպէս է, ուրեմն իմացէք որ, իմ, նոյնպէս և շատ մարդերի կարծիքով մաթեմատիկոսը մի անպիտան մարդ է աշխարհիս երեսին»։ —Եթէ այդ խօսքերից յետոյ սրբեա քան տարի ապրէր, ասած է Նապոլէօնը, հաւանական է, որ պարոն Բաուէրը կը փոխէր իւր կարծիքը։

Յետագայ նկատողութիւնը, որ արել էր Վէրաչիօն, զինուորական դպրոցի տեսուչը 1784 թուականին, կարող է մեզ ըմբռնողութիւն տալ թէ ի՞նչ կարծիք ունէին Բրիէննում Նապօլէօնի վերայ: «Պարոն Նօնապարտէն (Նապօլէօն) ծնած է օգոստոսի 15ին 1769 թուականին. չորս ոտնաչափ, տասն մատնաչափ եւ տասն գծաչափ հասակ ունի. չորրորդ դասատան աշակերտ է. մարմնի կազմուածքը ուժեղ է. առողջութիւնը պատուական. բնաւորութիւնը հնազանդ, հաւեստ, երախտագէտ եւ վարքը բարեխառն. նորա աջողակութիւնը մաթեմատիկական ուսմունքի մէջ գերազանց է: Ձափաւոր դիտութիւն ունի պատմութեան եւ աշխարհագրութեան մէջ: Բայց շատ տկար է գեղեցիկ հնութիւնների եւ լատինական լեզուի մէջ: Դա ժամանակով կարող է հմուտ նաւորդ դառնալ. արժանի է, որ իւր կատարելագործութեան համար, փարիզի զինուորական դպրոցը մտանէր»: Ա՛յս կարճ խօսքերից երեւում է որ Բրիէննում ոչ ոք չէր հասկացել եւ ոչ իսկ մտքով դուշակել էր թէ գեռահաս Նապօլէօնը ի՞նչ պէտք է լինի մի օր: Միայն Պր. Լէդուչը, որ նորա պատմութեան դասատուն էր, այսպէս է նկարագրում իւր մանուկ աշակերտի բնաւորութիւնը. «Ի ծնէ կորսիկացի, դա շատ յատուկ ազգութիւն կ'առնէ իւր կեանքի առաջարկուած, եթէ միայն պայմանքը յաջողեցնին: Բայց այդ միջոցում ինքը Նապօլէօնը իւր բախտից շատ չափաւոր պահանջմունք ունէր: Հայրենական ամենին ասում էր, որ եթէ մի օր ազմ բանիզ զօրքի հրամարտիս դառնայ, ուրիշ ոչինչ իզձ ունենալու չէ աշխարհիս երեսին: Եւ յիրաւի, եթէ քաղաքական յեղափոխութիւնը վերայ չհասանէր, որ նորա առաջարկը հասնոր ըստ պաշտօն բացէց, Նապօլէօնը շատ երջանիկ պէտք է լինէր, եթէ իւր պաշտօնից արձակուլը ստանար հրամարտիսի առաջնորդով եւ սուրբ Լուդովիկոսի պատուանշանով:

Նապօլէօնը իւր մանկական հասակից սկսած, ստատիկ սիրում էր զինուորական կոչումը, եւ իւր Բրիէննեական ընկերների հետ երեխայական խաղերով նախապատրաստում էր այն կոչումների համար, որ մի օր պիտոյ է հրաւիրէին նորա անունը: Շատերը տեսած կը լինին այն պատկերը, ուր նա նկարած է իւր ընկերակիցների հետ երեխայական պատերազմի խաղալով. այդ խաղերում նորա ամենայն պատերազմական կամքը եւ նիւթքը ձիւնից էին պատրաստել, թէ պատնէշները, թէ մարտկոցները եւ թէ գնդակները: Ա՛յս անոքը

պատահեցաւ 1783 և 1784ին։ Նապոլէոնի խորհրդով աշակերտները շինել էին պարիսպներ, փորել էին խրամներ և կառուցել էին դղեակներ. ամենք պիտի պաշտպանէին ամրոցը, միւսները ուժգին յարձակմամբ պիտի ախրէին նորան։ Գնդապետը կառավարիչը Նապոլէոնն էր. այս փոքրիկ պատերազմները կէս տարի տևեցին, մինչև որ ձիւները հալվելով վերջ դրեցին նոցա երևակայական զբօսանքին։

Նորա բարոյականութեան խստութիւնը ամենին զարմացնում էր։ Միայն մի հատիկ ցանկութիւն տանջում էր նորա հոգին, այսինքն դալոց ազգերի սրտումը անմահ յիշատակ թողնել իւր համար։ Առաջին հաղորդութեան խորհուրդը ակնածութեամբ և ջերմեռանդութեամբ կատարեց։ Երբ որ եկեղեցուց դուրս եկաւ, իսկոյն մի երկարաձիգ նամակ գրեց իւր հօրեղբօրը Ջեհշին (որ յետոյ կարդինալ դարձաւ) որ պատմնակում էր նորա մանուկ սրտի ազնիւ զեղմունքը և ունէր իւր վերայ բարեպաշտ եռանդի հինք։ Այդպէս զինուորական կեանքի աղմուկները և այն դարուս ապականիչ օրինակները շատ աւերեցին նորա մէջ այդ պատանեկութեան ազնիւ զղացմունքը։

1784ին Լօնապարտէն մտաւ Փարիզի զինուորական դպրոցը։ Նորա տեղ, Բրիեննի դպրոցը մտաւ նորա Լուդովիկոս եղբայրը, իսկ փոքր ինչ յետոյ նորա քոյր Մարիաննան (Էլիզան) մտաւ Սէն-Սիր անունով երիտասարդանոցը։

Դեռ էս նոր էր մտած Փարիզի դպրոցը, և ահա սկսաւ դուրս հանել իւր զօրաւոր խնացականութեան ապացոյցները։ Նա տեսաւ որ այդ դպրոցը, ուր փոխանակ նկրքին բարեկարգութեան թագաւորութեան զեղմութիւն և փառահեղութիւն, առաւել յարմար էր թագաւորի համար պճնասէր զրանիկներ պատրաստելու, քան թէ տէրութեան համար օգտաբեր ապագներ։ Հոգիս թէ տասն և հինգ տարեկան հասակը առած, մի յիշատակագիր յօրինեց և առաջարկեց իւր ուսուցիչներին և նորա մէջ ցոյց տուեց թէ մինչև ո՞ր աստիճան վնասակար էր նոցա դպրոցի ուղղութիւնը։ Այդ գրուածի մէջ սաստիկ զինուրված էր նա դպրոցումը առած դասախարակութեան ընդդէմ, ասելով թէ. «արքունական աշակերտքը, գրեթէ ամենքը ազգատ ծնողների որդիք, փոխանակ իւրեանց սիրտը կրթելու դպրոցի մէջ, առանուամեն չնչին փառասիրութիւն կամ առաւել ճիշտ ասած — անախտաւութեան և ուսումնասիրութեան զղացմունք, այնպէս որ առաւոտեալ ուսման ընթացքը և վերադառ-

նալով դէպ ի ծնողական տունը, փոխանակ նոցա պարկեշտ ապրուստը ուրախութեամբ վայելելու, պիտի տանջեն իւրեանց ծնողները և պիտի արհամարհեն նոցա պարկեշտ կեցութիւնը»:

Ինչպէս որ Ռիւինին, նոյնպէս և Փարիզի դպրոցի մէջ շատ թշնամիներ ստացաւ Նապոլէօնը իւր ազատախօս և ճշմարտասէր բնաւորութեան համար, այնպէս որ, երբ 1785 ին Վ. լա Փէյռ ի թնդանօթաձիգ զօրագնդի մէջ պարապ պաշտօն բացուեցաւ, ամէնքը ուրախութեամբ առաջարկեցին նորան տալին տեղակալի պաշտօնը, որպէս զի նորա ձեռքից օր յաւուր ազատուին: Անմեկնելի ուրախութեամբ ընդունեց Նապոլէօնը այդ յանձնարարութիւնը: 1787 ին Նապոլէօնը հասաւ լէյտենանտի աստիճանի, և նոյն իսկ տարում հրամայեցին նորան Վալենսի թնդանօթաձիգ գունդը մնանել, և այդ կերպով նա շատ տարիներ կացաւ Վալանսում:

Վ Քանի որ Նապոլէօնը անձնատուր էր Կորսիկայի օգտին, օր ու գիշեր նորա հոգին զնայլված էր Պաօլիու սիրազործութիւնների վերայ. նոյնպէս և Պաօլին միշտ յարգանքով խօսում էր նորա վերայ: Երբ որ Նապոլէօնի մասին խօսք էր բացվում, նա միշտ ասում էր «Նապոլէօնի մարմնակազմութիւնը անտիկական է. կը գայ մի օր, երբ դա կը դառնայ Պլուտարքոսի քաջաշնական մարդկերից մինը»: Քանի որ Պաօլին ընդդիմանում էր Ֆրանսիայի սիրասէրութեանը, Նապոլէօնը նորա մէջ տեսանում էր մի աստուածնեղէն մարդ. բայց երբ որ վերջում ծերունի զօրապետը իւր փառքը նահանջից, Ընդհակառակ ձեռք մատնելով Կորսիկան, այն ժամանակ Նապոլէօնը դարձաւ նորա սիրելիմ թշնամին, և այնուհետև որքան ոյժը հասանում էր, ջանք ու ճիգ էր տանում, որ իւր հայրենական աշխարհը Ֆրանսիայի հետ միանայ: Ընդ այդ օրից, Ֆրանսիացիք իրաւունք ունին կարծելու, որ Նապոլէօնը ամենայն սրտով դարձաւ Ֆրանսիական ազգին հարազատ, և այդ սէրը դնալով մեծացաւ և ամրացաւ նորա մէջ:

Տիկին Վերգոլօնբիէն, թէև յիսուն տարեկանի մօտ կին, բայց իւր խելքով և գովելի վարքով Վալանսի հասարակութեան մէջ բարձրիգլուխ անձն, շուտով չափեց ու կշռեց մանաւանդ Նապոլէօնի արժանաւորութիւնքը, որ այն ժամանակ զանազան աստիճանի և կոչման մարդկերի հետ միասին ելումուտ էր լինում նորա ապարանքը: Այս սիրելոջ միջնորդութեամբ Վալանսի բնակիչ ըն-

մէր տուները բացվեցան Կոլսիկացու առաջև. այդ յաճախ երթևեկութեամբը, նա թողեց իւր առաջին վայրենի և ախտամած բնաւորութիւնը, որ մինչև այն օր սահպուածը նորան ամենից վախ չէր: Այդ ընկերական ժողովները շատ դիւր էին դալիս Նապոլէոնին. նա ամենի ուշքը և միտքը իւր վերայ էր գրաւում իւր ընդհատ, կցկտուր և անկանոն խօսակցութեամբ. բայց և այնպէս նորա զրոյցը հանճարեղ և հատու էին: Նապոլէոնը իւր պաշտօնից ձնացած պարապ ժամերը չէր վատնում անօգուտ զբօսանքով, այլ մտանադիր մի գրավաճառի խանութում առանձնացած, ուշի ուշով սերտում միջին և նոր դարերի պատմութիւնը, և անձանձիր ուսանումը անցած օրերի քաջ տղամարդերի վարքն ու գործը: Ոչնչալն խորհրդով Լիծնի ճեմարանը մի ուսումնական խնդիր առաջարկեց, պարգև խոստանալով լուծանողին. այդ խնդիրը այսպէս էր. Թէ ի՞նչ հնարով կարելի էր զբրջա ածելցնել վիճակը հասարակաց Հատ ուսումնականներ հանդէս եկան յաղթութեան պսակներն գրաւելու այդ գովելի առաջարիզում: Բայց Նապոլէոնը, որ այդ միջոցին տասն և ութ տարեկան էր, միայն արժանի գտանվեցաւ այդ պարգևին իւր զեղեցիկ շարադրութեան համար: Բայց այս երկրորդ պարգևն էր, վասն զի դեռ ևս Բրիեննի դպրոցում մնանելով մի այլ պատուաւոր մրցանքի մէջ ստացել էր ուրիշ պարգև: Օրլէանի դուքսը 1783 ին նկատելով այս հանդիսին, իւր ձեռքով պսակել էր Նապոլէոնի գլուխը կաղնու ոստերից հիւսած պսակով. և ոմն կարող էր գուշակել, Թէ Բուրբոնի ձեռքով ձեմարանական ատեանին պսակած ճակատը, մի օր պսակուելու է Լուսովիկոս ԺԶ երրորդի թագով և Լանթարդիու թագաւորների հին երկաթակուռ պսակով:

Այդ միջոցներին Նապոլէոնը իւր պահպան գլխով երբեմն գնում էր կենում և երբեմն Օքսոնում, իսկ երբեմն պաշտօնից ժամանակաւոր արձակուրդ ստանալով, վեց վեց ամիս անցուցանում էր Փարիզում: Ոչնչալը նորա հետ սերտ սիրով կապուելցաւ, և իւր բոլոր ճիղը գործ դրեց, որ նա վարժ սիրեն Լնդհակլօպէդիասներին նեղ նեղ թղթապահական փիլիսոփայութիւնը. նորա խրատները անպտուղ չմնացին. Նապոլէոնը առ ժամանակ մի թուլացաւ դէպ ի գիտութեան սրտեռանդ և մեծ եռանդով պարապումը դպրութեամբ, և յոյս ունէր իւր ապագայ դրութիւնը մտահնարքութեամբ ապահովել: Բայց արդէն հասել էր ժամանակը, երբ հայ-

բնիկքը նորա անցած փառասիրութիւնը անսպառելի անունդ պիտի պատրաստէր, և նորա խղճը — գալոց սպկերի յիշողութեան մէջ անմահ մնալու — շուտով պէտք է կատարուէր։ Ֆրանսիայի քաղաքական յեղափոխութիւնը սկսել էր խոստեցուցիչ ցոլմունքով դուրս փայլել, հին միապետութեան հիմունքը քայքայվում և խորտակվում։ Քաղաքական յեղափոխութեան առաջին օրերից, Լօնտապատոն հասարակապետութեան կողմը բռնեց, վասն զի այդ նորանոր գաղափարները յուսապլումէին իրագործել այն իր մտաճաճոյ ցնորքը, որոնց ընդելացել էր երևակայութեամբ, Տիտոս Լիվիոսի և Պլուտարքոսի գրուածքը կարդալով։ Միապետութեան կողմնակիցները շատ յորդորեցին նորան թողնել հայրենիքը և դեպ ի օտար աշխարհ պանդխտել, բայց նա, իր անվճռեպ խորհուրդներին հաւատարիմ ճնալով, անտես արեց նոցա թախանձանքը։ «Քաղաքական յեղափոխութիւնը որ կայ, ասումէր նա, մի յաջողակ պիպուած է քաջ և հանճարեղ զինուորականի համար. եթէ սպառնալեաց թագաւորին կուսակից լինի, էքսուլ լեյտենանտը պարտական է իր անձը այդ յեղափոխութեանը նուիրել»։ Յանկալի էր իմանալ, երբ Նապօլէօնը միապետական սահմանի հասաւ, թէ ինչ աչքով էր նայում նա այն լեյտենանտների վերայ, որոնք այդ օտարոտի դառնունքն ունէին։

Նապօլէօնը արձակուրդ առած, գնացել էր Այաչէօ. երբ որ 14ին յուլիսի 1789 թուականի պատահած քաղաքական յեղափոխութեան լուրը հասաւ այն տեղ, Այաչէօի բնակիչքը մեծ յօժարակցութիւն ցոյց տուեցին Ֆրանսիայի քաղաքական յեղափոխութեանը. բայց կղզու ուրիշ բնակիչքը սահմանութեամբ ընդունեցին այդ լուրը։ Նապօլէօնը, որ եռանդուռ կողմնակից էր նոր իդեաներին, իր բոլոր ձիգը գործ դրեց, որ ժողովրդի սիրտը վառէ. իր յաճախ եղբօր հետ միասին Այաչէօի բնակիչների բերանից մի խնդրագիր գրեց Սահմանադրող ժողովին (Assemblée Constituante), առաջարկել առաց ամենին այն խորհրդով, որ այնուհետև Կորսիկա կղզին Ֆրանսիայի անբաժան մասն համարուի։ Վասն մի ամսից յետոյ թողեց Կորսիկան և նորից գնաց բնակելու Վալանսում։

1790 ին, Յունիսի 25ին Այաչէօի մէջ ապստամբութիւն ծագեցաւ։ Նապօլէօնը որ այն միջոցին նորից Կորսիկա էր գնացել, ժողովրդի պարագլուխ դարձաւ և խաղաղութիւն հաստատեց նորա մէջ։ Յուլիսի 14ին Պաօլին հասաւ Մաղինաժօ և կղզեցի-

նրբից մեծահանդէս ընդունելութիւն տուաց։ Վաղաքական յեղափոխութեան խռովութիւնների ժամանակ, երբ Ե֊յաչէօն վեր ի վայր էր լինում, մի մաղ միաց, որ ժողովրդի շփոթի մէջ Նապօլէօնը և նորա Յովսէփ եղբայրը կեանքից զրկուէին. մի մարդ, անունը Տրէնտակօստ, աղատեց նորանց այն մեռահաս վտանգից։ Սորա վերայ շատ ժամանակ անցանելուց յետոյ, Նապօլէօնը միաք բերեց այդ մարդը (որի վարքը շատ անգոհունելի էր) և անտառնելի վերատեսուչ կարգեց, ասելով. «Նրա խստապահութիւնը այնպիսի առաքինութիւն է, որ պիտոյ է մոռանալ տայ մեղ մարդերի վատ գործերը և յիշեցնէ միայն լաւերը»։

1792ին Նապօլէօնը Փարիզի մէջ էր, և մի չքաւոր ու անհնշան սպայի կեանք էր վարում։ ամեն առաւօտ մի նոր հնարք էր մտածում իւր դրութիւնը բարւոքելու և իւր ապրուստը ապահովելու համար։ Մի օր իւր ընկերի հետ, որի անունը Ռուբրիեն էր, շահատացութեան դիտաւորութեամբ մտադիր էր քաղաքում մի նոր թաղ շինել. բայց հողատեարքը և տանուտեարքը անտասնելի ծանր պայման դրեցին նորա վերայ. այդ դիտաւորութիւնը թողեց և Մօնթօլօն փողոցում շատ բնակարաններ վարձու կալաւ և առաւել մեծ շահաչատութեամբ վարձու տուեց ուրիշներին։ Ե֊յսպէս դատարկաշունչ և բախտախնդիր կեանք վարելով Ռօնապարտէն, մի օր ականատես եղաւ այն հռչակաւոր, յունիսի 20ին պատահած կռռնոսական ոճրին, երբ քաղաքացւոց բնակիչները, ժիռօնդի կուսակիցներից դրգռած, ոտնակոխ արեցին միապետական կառավարութիւնը, և անբարդ Լուդովիկոս ԺԶ֊ի գլուխը դրեցին կարմիր գդակ։ Երբ որ Ռօնապարտէն տեսաւ այս գարշելի խաժամուժ ամբոխը, որ ցնցոտի ձորձերով, ծաղրաշարժ սպառազինութեամբ, բերաններից յիշոցք և սպառնալիք ժայթքելով փողոցի փողոց մեն էր գալիս, սաստիկ զզուեցաւ քաղաքական յեղափոխութեան վատթար հետևանքից, և ինչ որ այն րոպէին մտքումը դրեց, մենք կը տեսանենք որ նա ապագայումը գործ դրեց։ Բայց առ այժմ նա շատացաւ այս խօսքերով, թէ «Ես զարմանում եմ, ինչպէս հետևցաւ Լուդովիկոս ԺԶ֊ը Տիւյլերիի մէջ ներս թողնել այս աւազակները. միթէ չգիտ, հինգ հատ թնդանօթ չունէր որ դրանց որպէս փոշի ցրուէր իւր աչքի առաջից։

Ռօնապարտէն մի նոր արձակուրդ ստացաւ և եկաւ իւր դերդաստանի մէջ բնակելու։ Աղեցիք երկու հակառակ բաժին էին

ձեղքուած. վինը Ֆրանսիայի կողմն էր պահում, իսկ միւսը կամենում էր Պորտիկայի անկախ և ազատ կառավարութիւնը, և իւր պարագլուխն էր ընտրել Ճերունի Պաօլին. Ներնապարտէն իսկոյն մուտ Ֆրանսիայի կուսակիցների դլուխն տակ: Այս գործից տեսանում ենք որ նա Ելբիւնի դպրոցում ունեցած խորհուրդները վաղուց հանել էր մտքից: Կուսակութիւնը սկսան ծաւալվել ժողովրդի մէջ: Ներնապարտէն իւր հրամանի տակ առած կորսիկացի ինքնակամ զինուորների գունդը, աստիճ կուռեցաւ Պաօլիու կողմնակիցների հետ և Այաչչոն խլեց նորա ձեռքից: Բայց այս քաջագործութիւնը նորան յանցանք համարուեցաւ, և նորան յետ կանչեցին Փարէզ, որ իւր գլուխը արդարացնէ այդ ամբաստանութենից:

Այդ միջոցին Ֆրանսիայի դուռս ուներում սոսկալի անցքեր էին կատարվում: Միապետական կարդերը ամբողջ կէս դար քայքայվելով, առանց խնամքի թողած նաև նոցանից, որոնց սրբազան պարտականութիւնն էր յարգել և պաշտպանել նոցա իրաւունքը, միանգամայն թուլացած, անցան մանուկ Լուդովիկոս ԺՕ-ի ձեռքը: Նորընտիր թագաւորի սիրտը բորբոքված էր հայրենիքի սիրով. նորա դիտաւորութիւնքը ազնիւ էին, նորա սիրտը արդար էր, նորա բարեպաշտութիւնը անկեղծ և անխորդակ: Ընտրակ իշխանների և ազգականված ժողովրդի անբարոյականութիւնը պատուհասելու համար, բայց ի այս անարատ ողջակէզից կը գըտանվի արդեօք մի ուրիշ անմեղ զոհ...

Ո՞նչ հարկաւոր է պատմել այն կատաղի փոթորիկը, որ հիմքից կործանեց Ֆրանսիական թագաւորութիւնը, ազնուականների դասը, քաղաքական կարգերը և սուրբ եկեղեցին: Այդ բոլոր ազետալի պատահարքը շատ կամ սակաւ ամենեցուն յայտնի են: Պտոյանից կ'առնունք մեք այն անցքերը միայն որոնք շատ մօտ շօշափումն Նապօլէօն մեծի գործերը կամ նոցանով բացատրվում են նորա գործողութիւնքը:

Պաօլին Կորսիկա կղզին Ընդվզացոյց ձեռքը մտանեց: Այդ խառնակութեան ժամանակ Այաչչօ քաղաքը կրակվեցաւ, բոլը անխնայաբար ձարակեց այն տունը, ուր Նապօլէօնը տեսել էր իւր կեանքի լոյսը: Նորա ծնողքը և ազգականքը թողեցին հայրենի երկիրը և Մարսէլում պատսպարվեցան. թէև այն տեղ գտան հիւրընկալութիւն, բայց մեծ տառապանքի և կարօտութեան մէջ էին ապրում:

Լուդովիկոս ԺԴ. երրորդի վերջին օրերում, Նապոլէոնի վրայ բարձրացել էին մեծամեծ ամբաստանութիւնք այն խոովութիւնների պատճառով, որ կատարել էին Կորսիկացիք նորա առաջնորդութեան տակ, Պաօլիոս Համախոհների ընդդէմ: բայց նա յաւաջ բերելով Կորսիկացոց ապերասան բնաւորութիւնը, հաշիւ կարողացաւ արդարացնել իւր անձը: Ժիռօնդիստների պատրաստելի հետ միացաւ. բայց մօտից տեսանելով նոցա փառասիրութիւնը և նենգաւոր հնարները, սաստիկ գարշեցաւ նոցանից: Ականատես լինելով սեպտեմբերի 2ին պատահած կոտորածին, զզուելով Թողից Փարիզը և Մարիաննա քոյրը իւր հետ առած, գնաց Կորսիկա: Մարսէլ որ հասան, փոքր մնաց, որ խաժամուժ ամբոխը սպանէր նորանց, և այս թշուառութեան պատճառը այն էր, որ նորա քուրը գլխարկի վերայ գարդմանակ տեսան, և կարծեցին թէ ազնուապետանել էին նոքա: Երբ որ Կորսիկա հասաւ Նապոլէօնը, նորա և Պաօլիոս մէջ սաստիկ գժտութիւն ծագեցաւ այն պատճառով, որ Պաօլին միտք ունէր Կորսիկան Գրանսիացոց ձեռքից թափելու: Օհիոուորական նախարարից պատուէր ստացաւ Սէն-Գլօրան երթալ և այն տեղի մարակոցները կործանել. երբ որ Կօրսէ հասաւ, Պաօլիոց հրաման ստացաւ յետ դառնալու և Սարդինիայի վերայ պատրաստած արշաւանքին մասնակից լինելու. թէև այդ մեծամեծ արշաւանքը չյաջողեցաւ, բայց երիտասարդ Նօնապարտէին շատ պատուհոութիւնք տուեց, ուր նա կարողացաւ իւր հոգու զօրութիւնը և անվհատութիւնը ցոյց տալ: Պաօլին—ինչպէս արդէն յայտնի է—կամենում էր Կորսիկան Գրանսիայից թափել, իսկ Նապոլէօնը հակառակ էր այդ դիտաւորութեանը. երկուքի մէջ տարաձայնութիւն ծագեցաւ և սպառ սաստիկ ջարդ և կոտորած. Նապոլէօնը մի քանի անգամ զարկվեցաւ իւր թշնամիներից. բայց տեսանելով որ նոցա հանախոհների թիւը օրէ օր բազմանում է, իսկ իւր օգնականները սակաւանում էին կամ թէ դասալիք են լինում, սիրեվեցաւ թողնել Կորսիկան և ընտանիքը իւր հետ առած, նորից Գրանսիա գնաց բախտ որսալու: Հասարակապետութեան երկրորդ տարին էր: Երիտասարդ Նօնապարտէին մի քանի անուանի կորսիկացի մեծատուններին միջնորդութեամբ նորից մտաւ պատերազմիկ զօրքի մէջ:

Այն ժամանակներին ամենեցուն խելքն ու միտքը զբաղած էր Տուլօնի պատնէշ պաշարմամբը: Հասարակապետութեան թշը-

նամինելը այդ քաղաքը մատնել էին Անգլեսացոց ձեռք: Ազգաբին ժողովը զօրք էր ուղարկել Կարսոյ զօրապետի իշխանութեան տակ և պատուիրել էր չեռ խնդրել այն: Այդ զորձի յաջողակ կերպը թնդանօթաձիգ զօրքից էր կախած: Վասն և չորս տարեկան Նապօլէօնը վաշտապետ էր կարգած և պատահական էր խնամք տանել պաշարման սկսոյքին: Այս տեղ յառաջ բերելով Նապօլէօնի սեփական խօսքերը, կարող ենք մեք ճիշդ ըմբռնողութիւն առնել թէ այն ժամանակի մարդերի և թէ պէսպէս պայմանների մասին:

«Նապօլէօնը հասաւ զօրքի դէնաւոր բանակատեղը. մօտեցաւ Կարսոյ զօրապետին, որ մի մեծամարտ մարդ էր, ոտից մինչև գլուխ ռակեզործ զրհանների հագած. զօրապետը հարցրեց նորան» ինչո՞ւ ես եկել. ի՞նչ գործ ունես»: Երիտասարդ Նօնապարտէն պարզեշաւթեամբ ցոյց տուեց նորան իւր վկայագիրը, որով պատահական էր նորա իշխանութեան ներքոյ գտանվել և թնդանօթաձիգների դօնողութիւնը ուզել: «Ո՞համոզմանդ տեսլորդ էր այդ, ասաց Կարսոյը ընդացքը ոլորելով. այժմ սուեն բան պատրաստ է, Տուլօնը թշնամիների ձեռքից խլելու. բայց և այնպէս բարի, հազար բարի է քո գաղափարը. յեզուց դու հաղորդ կը լինես մեր փառքին, անմահն լինելով մեր տարած գժուարութիւններին»: Ու խնդրեց որ այն երեկոյ նորա մօտ ընթրիք առնէ: Երեսուն հոգի սեղան նստան: Ո՞իայն զօրապետը կշտացրնել կերաւ — մնացեալ բազմականքը սոված մնացին: Այս կապիտ հիւրասիրութիւնը շատ զարմացրեց նորա լսիկ հիւրին, մանաւանդ այնպիսի ժամանակ, երբ որ ամենքը միաբերան հաւատացրութիւն էին շատախօսում: (Ամենքդուն յայտնի է, որ Գրանսիայի ընտարակալաութեան կուսակիցների առաջը այս երեք խօսքս էր. Ազատութիւն, Հաղարութիւն և ընտարութիւն): Ո՞իւս օր, առաւօտուն զօրապետը առաւ իւր հետ Նապօլէօնը և իւր աջակից սպաներին, ամենքը նստան կառք և գնացին զննելու պաշարման պատրաստութիւնքը: Երբ որ անցան բարձրաւանդակը և նորա աչքի առաջև բացուեցաւ նաւահանգիստը, կառքից ցած իջան և մնան մի պահուան»: Ո՞յս են մեր մարակոցները, հարցրեց զօրապետը իւր աջակցից: — Այո՛, տէր իմ, պատասխանեց նա: «Ո՞ւր են մեր զէնքի և պաշարի տեղը»: — Չորս քայլափոխ հեռի է մեր կայքի տեղից: — «Ո՞ւր են մեր ջերմացուցած ռումբերը: Ո՞րճակայ տանպանոցումն

ին, ուր երկու դասակ զինառոլ այսօրեան առաւօտից սկսել են ջնռուցանել: «Ասացէք, խնդրեմ, ի՞նչ հնարով պիտի կարողանանք այդ ջնռուցած ռումբերը այս տեղ բերել: Այս հարցումը մեծ վարանքի մէջ ձգեց ԹԷ զօրապետը և ԹԷ նորա աջակիցը, և ոչ մինը նոցանից չգիտէր ԹԷ ի՞նչպէս պիտոյ էր յաղթել այդ դժուարութեանը: Նապօլէօնը լսելով այս խօսակցութիւնը, իւր ականջնեին էջը հաւատում, և կարծումէր ԹԷ տոքա կամ ծաղը են առնում իւր վերայ, կամ ԹԷ յիմար ձևանալով, կամենումէին նորա խնացածը փորձել: (Զօրապետի տգիտութիւնը հասկանալու համար, պէտք է ասել՝ որ այն տեղը, ուստի մտադիր էր նա ռմբակոծել քաղաքի պարիսպները և տուները, մի և կէս մղոն հեռի էր թշնամիներից): Ալ՝ երջապէս Նապօլէօնը տեսաւ որ այսպէս պաշարելով, անհնարին է քաղաքին տիրել. իւր լեզուի ճարտարութիւնը, իւր դիտութիւնը և փորձառութիւնը գործ դրեց, որ կարողանայ ապացուցանել նոցա այդ գործի անպատուաղ ելքը. բայց ի զուր: Ալ՝ երջապէս յորդորեց նորանց ջնռուցած զնդակների տեղ սառերը գործ ածել: Դրը որ այդ փորձը կատարեցին, զօրապետը հասկացաւ Նապօլէօնի խօսքի ճշմարտութիւնը, ինչու որ ռումբը հայելի ԹԷ քառորդ բաժինը որշեալ տարածութեան անցաւ: Այլ այդ բնական անյաջողութիւնը նոքա, այսինքն Պարոն և նորա աջակիցը, ընծայեցին Պարսիկներուց և աղնուապետներին, ասելով ԹԷ անշուշտ նոքա վատօրէ աւերել էին: Այդ միջոցին վերայ հասաւ Գասպարին ազգային փոխանորդը, որ պատերազմական դործերում փորձառու և հմուտ մարդ էր: Նապօլէօնը, որ հասկացել էր ձախորդութեան սոյդ պատճառները, ամեն բան պարզօրէն մեկնեց փոխանորդին, յորդորեց նորան, որ պաշարման բոլոր խնամքը և պատասխանատուութիւնը իւր կանքին թողուն, համարձակ և անտրտունջ փառերով հաստատեց ԹԷ ոչքան տգէտ են այդ դործին կառավարիչքը և ոչքան սխալական է նոցա ընթացքը. և այդ րոպէից, պաշարման բոլոր խնամքը և վերակացութիւնը յանձնվեցաւ Նապօլէօնին, և այնուհետև ամենայն ինչ նորա բացարձակ հրամանով էր կատարվում:

Տուլօնը ծովի կողմից անառիկ էր. ցամաքի կողմից պաշարանած էր ամուր պարիսպներով և բարձրաբերձ դղեակներով. իսկ Ֆրանսիական զօրքը մեծ կարօտութիւն ունէր ԹԷ պատերազմական հանդերձանքի և ԹԷ հմուտ կառավարիչների. և այդ պատ-

ձառով Տուլօնի մէջ փակուած Թշնամիքը արհամարհութեամբ էին նայում Հասարակապետականների, նոցա պատրաստութեան և ապառնալիքի վերայ: Բայց Նապօլէօնը ոչ մի բանի վերայ չէնկատում իւր ուշադրութիւնը, օր ու գիշեր անձամբ իւր գործն էր յառաջ տանում: Հաղիւ մի և կէս ամիս անցած, Նապօլէօնը արդէն շատ կարևոր հանդիպումներ և կազմածք ձեռք բերեց և Թնդանօթները կարգի դրեց: Բայց անքանքար ղօրապետը (Կարնօ) անդադար ձանձրացնում էր նորան, ասելով. Պաշարումը շատ դանդաղաբայլ է: Նա որպէս պի վերջ դնէ այդ կարծեցած ծանրաշարժութեանը, նենգաւոր հնարներով տէրութեան կողմից վճիռ բերել տուեց, որ Նապօլէօնը սկսէ ռմբակոծել քաղաքը և Թշնամիների նաւատորմիղը հրձիգ առնէ, բայց ինքը յանձնառու էր յարձակվիլ պարսպի վերայ, և այդ կերպով խոստանում էր երեք օրի մէջ տիրել քաղաքին: Նապօլէօնը լաւ գիտէր որ ամրացուցած բերդաքաղաքը ոչ հրամանագրով և ոչ հրովարտակով կարելի է առնուլ, այլ խիստ կանոններով պատնէշ պաշարման, ուստի ուշ չդարձուց այդ խելացնոր հրամանի վերայ և սկսաւ իւր գործը յառաջ տանել: Այդ միջոցին, նորա բախտից, Ազգային ժողովը Կարտօնին պաշտօնից հանեց և նորա փոխանակ կարգեց Կարնօժիէ ղօրապետին, որ ընդունակ և անվեհեր հոգւով մարդ էր. դա բացարձակ իշխանութիւն տուեց Նապօլէօնին. միւս կողմից ազգային փոխանորդը (Կոմպարին) հովանաւորութեամբ նորան և անդուլ աշխատութեամբ բոլոր արգելքը և դժուարութիւնը հեռացնել նորանից:

Ֆրանսիացոց դէմ մի անառիկ դղեակ կար, Միւլգրաւ անունով, որ Անգլիացիք Փոքրիկ-Գիբրալտար էին տուել, և ամենայն հնարք գործ էին դնում, որ իսկական Գիբրալտարի պէս անառիկ և անմերձենալի կացուցանեն: Այդ դղեակի դէմ Նապօլէօնը մի մարտկոց շինեց որ պիտոյ է ռմբակոծէր նորան: Անգլիացիք կամելով նորա մարտկոցը անպիտանացնել, օր ու գիշեր կարկոի նման թափուէին նորա վերայ ռումբեր և գնդակներ: Ֆրանսիացոց կացութեան տեղը այնպէս վտանգալի էր, որ ոչ ոք չէր համարձակվում ոտք կոխել այն տեղ: Բայց Նապօլէօնը իւր շինած մարտկոցի անունը դրեց Անկիւրիդների մարտկոց և այնուհետև նորա հրամանի տակ գտնված մարտիկը, վախենալով մի գուցէ նոցա անունը երկնտա, փոքրոգի դուրս գայ, արհամարհուէին Թշնամիների սպառնալիքը, և մինչև բերդի առումը անխոնջ

և աներկիւղ աշխատութիւն ամէն միրը իւր տեղում և պաշտօնում։ Իսկ Նապօլէօնը բարձր պատնէշի վերայ կանգնած, իւր օրինակով քաջալերում էր թնդանօթաձիգ պատերազմողքը և ուղղում էր թնդանօթների բերանը։ Յետադայ փոքրիկ անցքից կը տեսանենք, որ նորա քաջալերական օրինակը անօգուտ չմնաց նորա ստորադրեալների համար։ Պէտք եղաւ մի օր հրաման դրել այդ դործի համար. բնքը Նապօլէօնը պատեհ ժամ չունէր։ Լսեցէք որ մի դպիր գայ և նորա բերանացի ասածը թղթի վերայ դրոշմէ։ Մի երիտասարդ յիմնապետ (սէրժանտ) ներկայացաւ։ Նրբ որ նա նստած դրում էր, յանկարծ Անգլիացւոց ատձական ռումբը նորա առաջև ընկաւ, և գրողին, և նորա գրածը հողով և փոշիով ծածկեց։ Ռաջասիրտ յիմնապետը ծիծաղելով ասաց. «Հ՚աա յարմար ժամանակ էր այս ռումբի դալը. պատճառ, ինձ աղատեց աշխատութենից գրած թղթիս վերայ աւազ ցանելու»։ Ն՚յսպիսի անխոով խաղաղութիւն հոդու յայտնի ապացոյց էր նորա անընկճելի արիութեան։ Ռօնապարտէն իսկոյն գնահատեց նորա առաքինութիւնը, և մի ժամանակից յետոյ նորան պետական բարձր աստիճանի հասցրեց։ Ն՚յս յիմնապետի անունը Ժիւնօ էր։

Նրբ որ Փոքրիկ Գիբրալտարը առնուեցաւ, Նապօլէօնը կամեցաւ թշնամիների նաւատորմիղը ոմբակոծել, բայց Անգլիացիք յառաջուց վախել էին նաւահանգստից և այրել էին Ֆրանսիական տորմիղը։ Ն՚յն ժամանակ Ֆրանսիացոց զօրքը յաղթութեամբ մտաւ Տուլօն և աղգային փոխանորդքը, Գիլերօն, Ռաբրաս, Պալիսէատի, Ովիկօրդ և Ռօբէսպիեր կրտսերը սոսկալի անգթութեամբ վարվեցան ապստամբած քաղաքացիների հետ։ Հաստատակամութեանների կոյր վրէժխնդրութիւնը միևչև այն աստիճան հասաւ, որ խառը չառնելով յանցաւորի ու անմեղի մէջ, ամենեսեան առհասարակ մահով դատեցին. չսպասեցին անգամ էշաֆօտի (գլխատութեան բեմի) կառուցմանը, Թշնամականները շարեցին թնդանօթների բերանի առաջև և այնպես ապանեցին նորանց։ Ն՚յդ վատթարութեան յիշատակը անհետացնելու համար քաղաքի անունը դրեցին Պօռթ դէօ լա Ռ՚օնթայն։ Բայց Ռօնապարտէն ոչ խօսքով և ոչ գործով մնռնակից էր այդ սոսկումների ընթացքին. նա իւր վերադարման կոչմանը և պաշտօնին հատատարիմ մնաց, միւսերին թողնելով դատաւորի պարտքը։ Բայց երբ նա պատեհ միջոց էր չտեսնում, միշտ աշխատութիւն դահիճների ձեռքից աղատել անմեղների կեանքը։

Դեղօմիէն, Հասարակաց Ապահովութեան Կոմիտէն (Comité du Salut public) հաշիւ տալով, շատ գովեց Նապոլէօնի գործունէութիւնը, որ նա ցոյց էր տուել Տուլօնի պաշարման ժամանակ: Նրբիտասարդ Բօնապարտէն իւր քաջութեան համար վարձատրուեցաւ հարաբարեի պատուով և թնդանօթաձիգ գոլքի հրամանատարութեամբ: Նա նոր արդիւնակատարութեամբ ապացոյցներ տուեց, որ իսկապէս արժանի էին այդ պարգեւին: Վերջապէս Հասաւ թերմիդոր 1) 9 երորդ թիւը, Ռոբեսպիերը ընկաւ Ազատ դատաստանի տակ, Մօնտանեարների գլխատուելը նմանապէս կորուսին իւրեանց իշխանութիւնը. այդ նշանաւոր օրին ժողովը Ազգնուէմը մեծամեծ փոփոխութիւններ կատարուեցան, և վերջապէս, այդ օրին Նապոլէօնը ցոյց տուեց իւր անօրինակ հանճարը: Բայց նորա ոխերիմ թշնամիքը սաստիկ զգայարութիւնք յարուցին նորա վերայ, և Ալբիսաիու և Սալիսէտաիու աչքում կասկածելի կացուցին: Նապոլէօնը արգելանքի մէջ ընկաւ. բայց նա շուտով արդարացրեց իւր անձը այդ տուած ամբաստանութիւնից. դատաւորները ուշադրութեամբ քննեցին նորա գործքը և վարքը, տեսան որ նա անմեղ էր և իսկոյն ազատեցին բանդից: Քանի մի օրից կառավարութիւնը կամեցաւ վանդէ ուղարկել նորան. բայց Նապոլէօնը չկամեցաւ այդ գործը. և Հասարակաց ապահովութեան ատենը հանեց նորան պաշտօնից: Այս անակնկալ տապալութիւնը նորից սասիկց Նապոլէօնին անգործ կեանք վարել այն միջոցին, երբ նորա եռանդոտ հոգին անյագաբար փառք և գործունէութիւն էր որոնում իւր հայրենիքի մէջ:

Այսպէս շատ ժամանակ պարապ անցուց Նապոլէօնը. շատերին խնդրից, որ իւր կարողութեան չարմար մի գործ տան. ոչ ոք ուշադիր էր նորա խնդրին, ոչ ոք կամենում էր հաւատալ նորա յորդորմանքին. այս անիրաւութիւնը սաստիկ զայրացրից նորա հոգին: Նապոլէօնը այնպիսի մարդկից էր, որոնց համար գործունէութիւնը կենսական մնում է. ամբոխի կեանքով ապրելը, աննշան կեանք վարելը — նորա համար բարոյական մահ էր: Նա մտադիր էր հրաժարվել Ֆրանսիայից. վաղուց սրտէն նորա հեռանալու

---

1) Տան և մի երորդ ամիսը Ֆրանսիական Հասարակապետութեան օրացոյցի տարին Յուլիսի 19 ից մինչև 19 Օգոստոսի:

թիւնը թափառումէր Ալեւելեան աշխարհներում, որ նորա վաստերութեան համար ընդարձակ ասպարէզ էր, և այդ դիտառութիւնը անդադար քարշումէր նորան դէպ ի Կոնստանդնուպոլիս. բայց Նախախնամութիւնը թոյլ չտուեց կատարելու ոչ այդ, ոչ ուրիշ դիտաւորութիւններ շատ: Այդ միջոցին նա յանձնա ելաւ մեռա էր լինում տիկին Տալլեենի մօտ. այս տիկինը նշանաւոր էր պէսպէս քաղաքական իրողութիւններով, որոնց տղբիւրը բացվել էր նորա սրահում: Ռօբեսպիերի բանդադրելութիւնը և անկումը, Էշաֆօսի կոլծանումը, Տիրրորիսմի վերանալը. ահա տոքա էին որոնց վերայ առաջին անգամը խորհումէին այն տեղ բաւեվիա մայրիկ: Նոյը որ Նապօլէօնը մնաւ տիկին Տալլեենի տուն, առաւել մօտից ծանօթացաւ Ռարրասի հետ, որ ինչպէս յայտնի է, այն ժամանակներին անդամ էր Հասարակաց ապահովութեան տեսչին. և այդ ծանօթութիւնը, ինչպէս շուտով կը տեսանենք, նորան մեծ ծառեց օգուտներ բերից:

Ընդէն ժամանակը հասել էր, երբ բաղդը պիտոյ է դուրս հանել հանճարեղ Ռօնապարտեին այն անյայտութենից, որ օր ու գիշեր մաշումէր նորա հոգին:

Նոյը որ Լուդովիկոս ԺԲ. կորդը գահճի սրի տակ փչեց վերջին շունչը, լուսաւորեալ աշխարհը երկար և ծանր ճիչ արձակեց: Ֆրանսիայի սահմանագլուխքը լցուեցան թշնամիներով, նորա սահմանակից գաւառները ողողվեցան արիւնով: Պրուսսիան շտապելով Ռէյն գետի կողմից, անցուց իւր հինօրեայ լեգիոնները, այն հոյակապ լեգիոնները, որոնք Ֆրիդրիկոս մեծի ձեռքի տակ սովորել էին մեռանել և ոչ յաղթվիլ, և որոնցից Եւրոպան ահ ու սարսափանք էր ղդում ամեն անգամ, երբ որ տեսանումէր. Գերմանիայի կայսրը դունդ դնդի հետևից ուղարկումէր այն տեղ իւր զօրքը և զօրապետները. բոլոր Ռասլեայի վոքրիկ տէրութիւնները ոտքի վերայ կանգնեցան. Հիւսիսի և սվիկիանոսի կողմից Հոլանդիան և Անգլիան սպառնումէին. Պիրինեեան սարերից Սպանիան յուսաջ էր բերում իւր զօրքը. Ռուսաստանը իւր ամեն ջանքն ու ճիգը դործ էր դնում, որ Ֆրանսիան կորուսանէ իւր քաղաքական կշեռը և ընդմիշ եւրոպական տէրութիւնների կարգից: Այս թշնամիների յոտաջապահքը կացուցանումէին Ֆրանսիացի դաղթականք և արտաքսած իշխանները, որք կամենումէին վերականդնել

կրծանած ակրոմէթիւնը և յետ ստանալ իւրեանց կորուսած իրաւունքը: Ահա այս էր այն փոթորիկը, որ արտաքուստ ապառնում էր Ֆրանսիային:

Իսկ ներքին վտանգը առաւել սարսափելի էր: Թագաւորի դիմադրութեան պատճառով արևմտեան և Լօար գետառափնեայ դաշտերը բարձրացան: Վանդէայի զօրքը քարոզքանդ արեցին Պուատու, Անժու, Բրէտայն և Մէն քաղաքները. ամեն տեղ հասարակապետութեան զօրքը փախչումէին կատաղած շինականներ ի առաջևից, բայց սոքա յաղթութեամբ յառաջ էին գնում լայ ու աղօթք կատարելով: Ամեն տեղ քաղաքական կռիւ էր, ամեն տեղ սով, ամեն տեղ մահ կամ սրինհեղութիւն: Այսքան մեծամեծ արգելքների, այսքան բազմութիւ և բազմազան թշնամիների յաղթելու համար Ազգային ժողովը բոլոր յոյսը մի թշուառ տղի վերայ էր, որ մանկացած էր թղթեղէն արծաթով և պատակած ներքին խռովութեամբը: Նա ինքը Ազգային ժողովը ի ր թան կագին ժամերը կորուսանում էր, ամեն օր նորանոր անզգամներ ընտրելով և հինները դլխատելով: Այլ և այնպէս փառք և պարծանք Ֆրանսիական ազնիւ ազգին: Ազգային ժողովը անսանկով իւր աղետքը չսարսափուեցաւ, չզարհուրեցաւ, չվհատեցաւ, այլ մանաւանդ այդ իւր յուսահատ դրութենից նոր ոյժ ստացաւ:

Պարզ մինչդուռմ տասն և չորս զօրաբաժինք կազմվեցան սպառազինվեցան. թշնամին յաղթուեցաւ Ժէմմապ և Վ_աշմի գետերի մօտ, բայց ուրիշ տեղերում յաղթեց Ֆրանսիական զօրքին սոցա անփորձութեան և զօրավարների անհմտութեան պատճառով, և աւերեց հիւսիսային, արևելեան և հարաւային դաշտանները. թշնամին երկար չկարողացաւ այն տեղ ոտք հաստատել. Ֆրանսիացիք շուտով արտաքսեցին նորան: Ռևղեան նուաճուեցաւ և Ֆրանսիայի հետ միաւորուեցաւ. նոյն բաժինը հասաւ Սավոյիային և Նիցցային: Ընդհ ու յաղթութիւնները, որ կատարեցին Ֆրանսիացիք իւրեանց թշնամիների վերայ, սոսկեց դաշնաւոր թշնամիքը Ռհնի մօտ միաբեր. հարաւումը, ինչպէս տեսանք, Տուլօնը խլուեցաւ Անգլիացոց ձեռքից. Պիեմոնտը ոտնակոխ եղաւ Ֆրանսիական զօրքից. Սպանիացիք ջարդուեցան և սոսկուեցան նորից Պիրինեէան սարերը անցանել և իւրեանց հայրենի աշխարհի մէջ պատսպարվիլ. Պիշեգրիւն նուաճեց Հոլանդիան. հարիւր հազար հոգի պահպանեցին Լիճնը և յաղթելով քաղաքացիների քա-

ջաղնական դիմադարձութեանը, տիրեցին նորան. Վ՚անդէն, Հռոմայական կայսերութեան ոսկերիմ թշնամին, որ նորա համար հարիւրապատիկ անգամ սոսկալի էր, քան թէ բոլոր թշնամիները միանգամայն, Վ՚անդէն ևս նուաճուեցաւ և ոտնակոխ եղաւ քաղաքական յեղափոխութեան կուսակիցներից և լողաց իւր հարազատ որդիների արիւնի մէջ: Փարիզի մէջ ևս պակաս չէին արիւնահաղախ կռիւները: Պուբներում և ժողովներում ամէն օր նորանոր երկպառակութիւններ էին ծագում, ամէն օր արիւնհեղութիւն էր պատահում. թէ յանցաւորի, թէ իշխանի և թէ սորակարգ զինուորի, բոլորեցուն վիճակը կախած էր մի ընչին, մի անհիմն ամբաստանութենից. սատակիչ Գիլօտինը անդադար շարժման մէջ էր: Վ՚երնիօի դուշակութիւնը կատարուեցաւ. Հռոբեսպիեռրի՚ն, ընդէս ի անյոռութիւն կոտոր, կլանուեր էր ինքն ինքեան զաւակները:

Երբ որ Ռոբեսպիերը և նորա համախոհքը կեանքից զրկուեան և Ֆրանսիական ընդհ յաղթութիւնք Ֆրանսիան մի կարճ ժամանակ հանդիստ ստացաւ, Ազգային ժողովը սկսաւ մի նոր կառավարութեան ձև որոնել, և գործ դնել այն հասարակապետութեան սկզբունքը, որոնք տակաւին մնացել էին անհնակ: Որպէս զի ի սպառ անհետանային միապետական կառավարութեան ամանդութիւնները որ շատ վտանգաւոր էին հասարակապետութեան համար, Ազգային ժողովը կամեցաւ օրէնութեան հոգաբարձութիւնը երկու տեսակ կառավարիչների յանձնել. մի տեսակը դոյանից պիտոյ է ասվէր, խորհրդարան ալեւորներէ, իսկ միւսը խորհրդարան հինգ հարիւրէ. միայն թէ այն պայմանով որ նորա $\frac{3}{4}$ մասը բաղկանայ իւրեանց անդամներից: Այս դիտաւորութիւնը սատիկ շփոթի և աղմկի մէջ ձգեց փարիզեան ժողովուրդը. քաղաքացոց մեծ մասը հակառակ էր այդ կանոնին, ուստի ապստամբեցաւ Ազգային ժողովից: Նորից բորբոքեցաւ քաղաքական կռիւը: Հազիւ թէ քանի մի օր անցել էր, յանկարծ Թագաւորի կողմնակիցները (Ռոյալիստքը) դուրս բարձրացուցին, և սպառազինութեամբ, ահեղ սպառնալիքով կամենում էին յարձակուիլ Հասարակապետական-ների վերայ: Նորա նորահասուն, բայց անվեհեր և եռանդուն զօրքը քաւասուն հազար հոգի էր, մինչ ժողովի պաշտպանողների թիւը հազիւ հազ 8000 էր հասանում: Ընդհանուրն արդէն պատրաստ էին Թուիլերի պալատի վերայ (ուր հաւաքված էր Ազգային ժողովը) յարձակմանը առնել, և միայն սպասում էին, որ առաւօտը

ծաղէր։ Վ֊անդիմիերի 12ն էր, չորրորդ տարին ֊ասպարակապետութեան (1795, Հոկտեմբերի 4)։

Ընդհանուր ժողովը տեսաւ իւր մեծահաս վտանգը։ Օրէնքի իշխանութիւնը յանձնեց Խարրասին. և Խարրասը զգալով իւր տկարութիւնը այդ ծանրակշիռ գործի մէջ, Ներսնապարտէն իւր օգնական ընտրեց, և բացարձակ իշխանութիւն տուեց նորան որ միտ դնելով պայմանների պահանջողութեանը, այնպէս վարվի, ինչպէս բարւոք կը համարէ։ Ընդհն կէս գիշեր էր։

Ներսնապարտէի առաջին և գլխաւոր գործը այն եղաւ, որ իւր կողն հրամայեց Մուրատին առնուլ հեռը իւր ձիաւոր վաշտը (escadron) և շուտով գնալ և բերել թնդանօթները, որ այն միջոցին գտանվում էին Սաբլօն կոչուած տեղում (Փարիզի մօտ)։ Մուրատը սիրա Մուրատը կայծակի պէս թռաւ իւր երեքհարիւր հեծեալների հետ և կարճ միջոցում քառասուն թնդանօթ բերեց, որոնց թշնամիները սպասելով էին համարել տիրել։ Ներսնապարտէն հրամայեց այդ թնդանօթները Փարիզների պալատի չորս կողմը շարել։

Ինչպէս ասացինք, Թագաւորի կողմնակիցները բաղկացած էին 40,000 հոգուց. իսկ ժողովի պաշտպանողները 8,000 հոգ. բայց վերջինքս վարժ և ընդհատացած էին պատերազմական արուեստին։ Վ֊անդիմիերի 13ին առաւօտեան պահուն թշնամիները Վանդիմիական և Փիւբոյի առաջնորդութեամբ սկսան յառաջ խոյանալ։ Ներսնապարտէն իւր զօրքը այսպէս էր շարել։ գլխաւոր մասը դասաւորել էր Փիւիլերիու ձախ կողմում. իսկ միւս մասը կանգնեցրել էր Անթ֊ֈօնորէ փողոցի հանդէպ։ Այս ծոհմի հնարով, Փիւիլերին, որպէս մի միջնաբերդ, ամեն կողմից ապահոված էր թշնամիների յարձակմունքից։

Թշնամիները բազմաթոիս դունդերով սկսան յառաջ գալ։ Ներսնապարտէն հրամայեց թնդանօթները ուղղել ընդդէմ նոցա և ամեն կողմից պժոխային կրակ փսխել նոցա վերայ. ապստամբները դադարեցին և շուարվեցան. այս օրհասական րոպէից շահուելով ֊ասպարակապետութեան զօրքը, յառաջ վազեցին, և ուր որ թնդանօթի գնդակը չէր հասել, հոն այն տեղ հասուցին իւրեանց հրացանի սուինը (baionette). թշնամիները քաճակները դարձուցին և փախան, և պատապարվեցան, որը եկեղեցւս և որը վանքի մէջ. բայց ֊ասպարակապետութեան զօրքը ամեն տեղ վազեցին նոցա հետևից և սատիկ կոտորեցին. ի վերջ քաջալերութիւնն միմեանց, ի վերջ

կամենումէին դիմադարձութիւն առնել. Թնդանօթների հարուածներից աչքերը չէին կարողանում բանալ: Սպանվածների թիւը հասաւ մինչև 400 ի, նոցա մեծ մասը փարիզեցիք էին որոնց վերայ Նապօլէօնը հրամայել էր անխնայաբար թափել և ռումբեր և գնդակներ: Երբ որ ապստամբները շուարված փախչումէին, որպէս զի նորից խելքի չդան և իրեարու հետ չմիանան, Նապօլէօնը պատուէր էր տուել անդադար թնդանօթ արձակելու նոցա վերայ, բայց առանց գնդակի: Այս հնարովը ապստամբները հնազանդվեցան: Միւս օր նոցա ձեռքից խլելով զէնքերը, ընդհանուր թողութիւն շնորհեցին: Այս անցքից յետոյ գլխաւոր կառավարութիւնը անցաւ Բարրասի ձեռքը, Նապօլէօնը ստացաւ երկրորդական իշխանութիւնը: Քանի մի օր անցած, Ազգային ժողովը հրաժարվեցաւ իւր իշխանութիւնից և նորա տեղ սահմանվեցաւ նորաձև կառավարութիւն, որ կոչվեցաւ Դիրեկտօրիա:

Ա՛նդիմիերի 13 ից քանի մի օր անցած, Նապօլէօնը պատուեցաւ Յոզեֆինա տիկնոջ հետ, որ Բօհարնէ զօրապետի այրին էր. իսկ ինքը Բօհարնէն Տերրորիսմի ժամանակ էշաֆօտի վերայ սպանուած էր: Երբ որ սկսել էին, ապստամբ քաղաքացիքը զինաթափ առնել, մի տան և չորս տարեկան պատանի, անունը Եւժէն, ներկայացաւ Բօնապարտիէին և յետ պահանջեց իւր հանդուցեալ հօր սուրը: Օ՛օրապետը զմայլեցաւ այս պատանու գործովը, որ յայտնի ապացոյց էր նորա հոգու աղնուութեանը, իսկոյն հրամայեց որ նորա խնդիրը կատարեն: Տիկին Բօհարնէն եկաւ Բօնապարտէի մօտ, որ իւր շնորհակալութիւնը յայտնէ նորան, որ նա իւր որդուն այդպիսի շնորհ է ցոյց տուել: Այդ այցելութիւնը առիթ տուեց նոցա նախ ծանօթանալու և ապա պատուելու: Բայ ի այդ որդուց, Տիկին Բօհարնէն իւր առաջին ամուսնուց ունէր մի դուստր ևս, անունը Հորտենսիա: Տիկին Բօհարնէն միամտաբար պատմումէր որպէս թէ նորա մանկութեան ժամանակին մի կախարդ դուշակել էր թէ մի օր նորա գլուխը պիտի պատուի Ֆրանսիայի թագուհիների թագովը: Այս թէև բարձր աստիճանի հասաւ, բայց երբէք չմոռացաւ իւր հին ծանօթները. ոչոք առաքինի կնանքը նուիրած էր թշուառների ապիտքը թեթևացնելու: Ֆրանսիացիք դորա անունը յիշելով, միշտ միաբերան կը բերուի այն քաղցր ողորմասրտութիւնը, որ կրկնապատիկ վայելուչ թագի փառաւորութիւն աշխարհիս կարող մնալոցի գործը:

Պահկից յետոյ տասն և մի օր անցած, Նապոլէօնը Դվրիք-ոօրիայից հրաման առաւաւ, որ անյապաղ Իտալիա երթայ և այն տեղի զօրքի գլխաւոր հրամանատարութիւնը իւր ձեռքը առնու։

(Շարունակութիւնը յետոյ։)

Մխիթար Պ. Այեւեան։

ՊԱՆԿՐԱՏ ԹՈՒՐՔԵՐ

ԿԱՄ

ՎԱՍՆ ԿԵԱՆՔԻ, ԱՒՈՂՋՈՒԹԵԱՆ, ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ, ԾԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՀՈՒ։

Ամենայն վարքի պատմութիւն ախորժ է լսել և կարդալ։ Միշտ պատմուածնք միւսերին մեր յաւուրկ կեանքի անցքերը և զօրաձերը, որպէս զարձեալ նոքա պատմուածն մեզ. ինչ որ ապաճ ու փորձած էին։ Յօժարութեամբ ունկնդիր է մարդս իւր ընկերին որ պատմուած ոչ տաղտկալի, այլ զուարթացուցիչ կերպով։

Մենք ունինք շատ հազարնեւով վարքի պատմութիւնք կամ վարքագրութիւնք հռչակաւոր մարդկի։ Ստուածաշունչ գիրքը արդէն պատմուած Աբրահամի, Յովսէփի, Մովսէսի, Դաւթի վարքը։ Ինչպէս բորբոքուածն դորա մարդու սիրտը և երևակայութիւնը։ Դորա գրաւուածն մեծի ու փոքրի ուշադրութիւնը և մանաւանդ։ Ա՛յլև, շատ հեղինակների գրուածների վերայ յաւելացնուածն մի հատուած վարքագրութիւն, և շատ մարդիկ ընթերցասիրուածն սորան նախապատիւ յօժարութեամբ։

Ա՛յո, Գերմանիայում սովորութիւն կայ պահել մի առանձին գիրք որի մէջ ամենայն տարի հրատարակուածն վարքագրութիւն-

քը բոլոր ականատես մարդկերի որ պատկանելով ընդհանուր գերեզմանական աշխարհի այս կամ այն ժողովրդակարգին և պաշտօնի վճռակին, մեռած են մի տարու միջոցում: Ա՛յս վարքագրութիւնքը են այնուհետև մի տեսակ չիշատակարանք հանգուցեալների մասին, և իրատական չիշատակարաններ կատուցանել մի դեղեցիկ բան է:

Ա՛ենայն վարքի պատմութիւն և այն պատճառով արժանի է ուշադրութեան, որ ամեն մինը նոցանից է առ հասարակ կեանքի, և ապա նոյնպէս մի առանձնականի պատմութիւն. այլև այն պատճառով, որ մեք մի քանի փոփոխութեամբք գտանում ենք նորա մէջ մեր սեփական անձը: Ե՛ս ամեն մի վարքի պատմութիւն առիթ է տալիս մեզ օգտակար բաղդատութիւնք շատ գործելու: Ո՛չ մի մարդ չկայ, ապրում չէ և գործում չէ այնպէս, ինչպէս միւսը, թէև արդարև շատ ու շատ նման լինելը նորան: Կա գտանելու է, որ միւսերը իւրեանց մտածութեամբ և գլխի անցքերով երբեմն որպէս դիտաւոր աստղեր մօտենում են արեգակին, երբեմն դարձեալ շատ հեռանում են նորանից:

Որպէս նիւթ վարքի պատմութեան, սովորաբար ընտրում են մի հռչակաւոր մարդ կամ այնպիսի անձն, որ հասնելով մեծ փառքի արժանաւոր, ղեր օրինակ մի քաջ պատերազմող, կամ մի հռչակաւոր քաղաքագէտ կամ թէ մի գերօրինակ ուսումնական կամ ճարտարապետ: Բայց այդպիսիքը շատ հեռի են մարդերի ա՛ռաւել մեծ մասից և յաճախակի, ընթերցողը բուն ներհակն են: Կամ թէ ընտրում են մի անձն, որին պատահել են զարհուրելի անցքեր ծովի ու ցամաքի վերայ. բայց սոցա խորհուրդը այն է առաւելապէս, որ գրգռեն մեր նորասիրութիւնը, քան թէ լինին մեզ իրատական: Ունինք մեք նոյնպէս վարքագրութիւնք շատ աշխատասէր և հարստացած վաճառականների և ֆաբրիկանտների, յաջողակ արուեստաւորների, այո՛ և շինականների, ղեր օրինակ վարքագրութիւնը իմաստասէր շինականի, Ա՛լեքսեոզ անունով Ձիւբիխեան Կանտոնի մէջ. արդարև սոքա աւելի մօտաւոր են մեզ:

Երբեմն որպէս օրինակ հանդէս են բերում մի վարքագրութեան մէջ այն մարդը, որի մասին խօսք ու զրոյց կայ ձառի մէջ: Ա՛յնուհետև ուսումնականը պարտ է ընտրել իւր գրուածի նիւթ մի ուսումնական, պատերազմականը մի պատերազմող տղամարդ, գուցէ տապետ Բայեարդը, որին ասում էին մի անեղկիւղ և անբասիրելի տապետ: Բայց եթէ կամենինք լոկ և միայն նիւթ առնենայն

տեսակ ծանօթութիւնների, ապա կարելի էր առնուլ և մի աւազակ Աբել-լենօ մարդը։ Այդ այդպիսի մարդ նիւթ ընտրել վարքագրութեան, լինելու էր անկեղ դործ, որովհետև կարող էինք մեք աւելի լաւ և աղնիւ տղամարդիկ դառնել այդ խորհրդով։

Այնու ամենայնիւ արժան էր նիւթ առնուլ վարքագրութեան մի մարդ, որ իւր անձը նշանաւոր է կացուցել որ և իցէ բանով, մի քանքարով, մի յաջողակութեամբ, մի առաքինութեամբ, մեծութեամբ, ուժեղութեամբ, գեղեցկութեամբ։ Այլ մեր պատմութեան հանդիսացողը տղամարդը գրեթէ ոչինչ բանով նշանաւոր չէր։ Նա ունէր մի ամենօրեայ խելք միայն, մի սովորական արդարացութիւն և այլն. և նորա գլխի անցքերը ցուցանում են շատ փոքր գերօրինակ բաներ։ Այլ սորանով իսկապէս նա մօտենում է շատ մարդերի և — անտարակոյս շատ ու շատերին մեր ընթերցողներից։ Ուրեմն հարկաւոր է, որ ամենայն մարդիկ գերօրինակ մարդիկ լինեին. պատճառ, ոչ ամենայն իրողութիւնք գերօրինակ են։ Շատ կամ փոքր առանձնութիւնք ունի ամենայն մարդ. ոչ մի մարդ այնպէս չէ, որպէս միւսը. և այս պատճառով կարելի է բոլոր մարդերի մասին պատմել մի սեփական բան։ Առանձնականութիւնը բալք ու վարքի մէջ յառաջացնում է առանձնականութիւնք մարդուս գլխի անցքերի կամ պատահարների, և դորանից յառաջանում է դարձեալ մի նոր կարեկցութիւն այն ճշմարտութեան որ նիւթ է պատմութեան, և նորա կեանքի անցքերին։ Այնուհետև հարցուած է լինում արդարև, այդ առանձնականութիւնքը ազդո՞ւմ են դառնալով խառնակելով միւսերի խաղաղութիւնը կամ անհամոյ լինելով շրջակայքին, թէ մի մարդ ունեցել է այդ առանձնականութիւնքը իւր համար միայն։ Այլ և փոքրիկ անշան բաներ որ ծնացել են առանց հետևանքի, կարող են ախորժելի լինել. գերմանական բանաստեղծ Գօսը պատմում է մեզ իւր շինական բանաստեղծութեան մէջ «Լուիզէ» մականգրով, լուկ մանր ու մունը բաներ, բայց — սրտի յօժարութեամբ կարդում ենք դորանց։ Այսպէս և Վոսիէն իւր «Հերման և Դօրօթէա» գրուածի մէջ։ Փոքրիկ բաներ, քաղցր և զարդարուն կերպարանքով պատմած, կարելի է ամենևին դեղեցիկ և ախորժ կացուցանել։ Ուրեմն մարդկութեան բարեկամին և հոգեծանօթ մարդուն գրաւիչ է ամենայն մարդկեղէն բան։

Ա՛յս Թորլեթի ամենից աւելի մեծ առանձնականութիւնը էր նորա խորին ծերութիւնը. նա իւր հայրենի քաղաքի մէջ, ուր բնակուէն 9500 հոգի, դարձաւ ամենահին առաւել հաստակառոյցը: Ա՛յս առանձնականութիւնը առացաւ նա ոչ յառաջ, եթէ ոչ իւր ամենախորին ծերութեան մէջ, այսինքն զրեթէ իւր կեանքի վերջումը, և այն իրողութեամբ առացաւ, որ ամենքեան, նորա հետ միասին և նորանից յառաջ ծնած լինելով, մեռան նորանից յառաջ: Ա՛յնու հետև սկսան մարդիկ աչք դարձուցանել նորա վերայ, որ յառաջ զրեթէ ոչ ոք նկատել չէր: Յառաջուց նայում էին նորա վերայ հարևանցի որպէս մի փոքրիկ լապտերի վերայ. և մի աւելի բան չէր նա:

Մեք հիանում ենք ամենայն գերօրինակ բանի վերայ, ինչ և լինէր դա: Ենթէ ցոյց տայիս մեզ ամենամեծ, ամենակշռո, ամենաղօրեղ, ամենաճոխ, ամենագիտուն, ամենագեղեցիկ մարդը մեր հայրենիքի կամ թէ մեր երկրագունդի, ապա մեր զըմայլելը սկսում ծուվելու էին դէպ ի այդ կողմ: Բայց եթէ ցուցանէին մեզ ամենաբարեպաշտ, աւելի առաքինի մարդը երկրի բոլոր հաղարաւոր միլիոններով մէջ, որպիսի երկիւղած պատկառանքով պիտոյ էր մեզ զըմայլ մերկացնել նորա առաջև: Կ՛ մանաւանդ մի առանձին սրտով նայում ենք ամենածեր ալևորի, մի հարիւրամեայ մարդու վերայ որպէս մի հին բուրդի վերայ:

Ա՛յդարև, ամենածեր հաստին և ս մի առանձնական բան է, և միևը միայն կարող էր հաստած լինել դորան: Ա՛նա կանգնած է այն տեղ որպէս մի ասպետական ամրոց նախնի ժամանակների, աւելի մանուկ անների մէջ, և կարող է ասել Ա՛ամենասպայի պէս. Ես ձեր ամենիներից յառաջ էի: Թէպէտ նա, ունելով միայն մի բուռն աւելի օրեր քան թէ նորանից երկրորդ ամենածերը, և կանգնելը առ հաստատակ լինելով մի կոյտ փոշի ու պատիճներ որ հողմը չիր ու ցան է առնում, թէպէտ նա ինքն ըստ ինքեան չունի մեծ արժանաւորութիւն, այնու ամենայնիւ, որպէս ուժեղութիւնը, դեղեցկութիւնը, քաջասահմութիւնը, հարստութիւնը, բնական ձիրք է կամ թէ նախանձաժամութեան առարք և այդ պատճառով ընդհակառակ արժանի: Ա՛ւ խելքը և իմացականութիւնը, այո՛ և առաքինութիւնը և երկիւղածութիւնը են կամ անհրաժեշտական պարգևք Աստուծոյ, կամ թէ, անտարակոյս, ձեռք բերելի են ստացած ձիրքով:

Մեզ յայտնի չէ ոչինչ իսկական վայելքագրութիւն մի մարդու, որ այն խորհրդով միայն գրած լինէր, ըստ որում նա ամենաօձելին էր հաստատով: Նա ոչ ևս այդպէս է մեր գործը: Բայց մեր Թուրքերին այն պատճառով մանաւանդ ընտրեցինք մեք մեր ճառի նիւթ, որ նա առիթ է տալիս մեզ, մարդկային կեանքը նորա բոլոր ասպարէզների մէջ, այսինքն սկսեալ օրօրոցից մինչև մեռ հասիւսամեայ հասակ, հետաքննել, ուրեմն և խօսք ու զրոյց առնել կեանքի ամենայն տեսակ պարկեշտութիւնների և պատահարների վերայ: Ընդհակառակն, պիտոյ է Թուրքերը լինի մեզ իսկապէս մի լոկ հաստատութեան, իրական հիմքի և ամենակատարեալ կէտ. ուրեմն այդ պատճառով կարող ենք միմեանց հետ խօսել առողջութեան և հիւանդութեան վերայ որ անտարակոյս պիտոյ է գրաւեն ամենեցուն ուշադրութիւնը, որովհետև մի մեծ մասը մարդկի տարութեան մէջ այդ երկու պարկեշտութիւնների մէջ: Ծախ այսպէս և թէ պղպէս, նորանով ստանում ենք այն օգուտը, որ մեր մտածութիւնքը բոլոր մարդկեղէն բանների վերայ դատելումն առնելի փորձական և ազատով, մեր հայեացքը և խրատատութիւնքը չեն կախուած օդի մէջ, այլ ունեն լաւ հիմք և յատակ, որովհետև ամենայն, ինչ որ մեք Թուրքերի մասին պատմում ենք մի առասպել կամ բանաստեղծութիւն, և ոչ իսկ մի միջակ բան ճշմարտի ու սուտի մէջ տեղում, այլ մի ստոյգ պատմութիւն:

Այլև կամենք ուսուցանել գործական խոհեմութիւն և իմաստութիւն, թէև հակառակի. և զի Թուրքիա Թուրքերը թող լինի մեզ խօսքի առիթ. նա կարող է այդ պաշտօնը կատարել: պատճառ, նա շատ խոհեմ և բարի մարդ էր, և այդ պատճառով ևս արժանապատում:

Բայց կարելի էր բարի խորհրդով մեղադիր լինել մեզ, որ մեր մտածութիւնքը կապել էինք մի այդպիսի աննշան մարդու վերայ, չէինք ընտրել մի աւելի մեծահշիւ, ուշադրութեան արժանաւոր անձն. բայց մեք կարծումենք, որ մի խոհեմ և բարի մարդ հերիւքաթաթ արժանի էր բոլոր խոհեմ և բարի մարդկերի ուշադրութեանը:

Եւ այսպէս այն դիտաւորութիւնը որով գրումենք մեք, եւ բնութիւն ամենևին բարի և գովանի. ապա թէ ոչ և գրել չկամէինք:

Պոնչոպ Թուքերը, հարազատ զաւակ մի մտավածատի, հինգև-

ըորդը 9 երեխաների միջից, ծնաւ 1731 ին Ս. Գալլեն քաղաքում, որ գլխաւոր տեղն է այժմեան, Ս. Գալլեն անուն կանտօնի մէջ հիւսիսահայեաց Շվեցիայում: Ուրեմն նորա ծննդեան տեղը էր աւելի մի խոշոր քան թէ մեղմ, և շատ նեղ ձոր խոտաւէտ սարեր մի մէջ, որ մի կողմից սահմանակից են Թուրգաու կանտօնին, միւս կողմից Ափենցել կանտօնի դրացի լեռնադաշտակին: Այդ ձորը դէպ ի արևելք ցած է վաղում Բոլշախ սահմանի ուղղութեամբ մօտենալով Կոդենզէ ծովակին, բայց դէպ ի արևմուտք վերևում, երկու մինչև երեք ժամի ճանապարհ ձգվում Ցիւրիխի ուղղութեամբ: Քաղաքը ունի իւր անունը Սուրբ Գալլոսից, որ այս տեղ իւր խորին ծերութեան օրերում օթեան է պատրաստել իւրեան մի հանդարտ անտառի անապատի մէջ: Կա է մինը Եւրոպայի առաւել բարձրադիրք քաղաքներից, աւելի քան թէ երկու հազար ոտնաչափ բարձրանալով միջերկրական ծովի վերայ: Նորա չորս կողմում էկայ երկրագործութիւն իսկապէս, այլ միայն բանջարատունկութիւն և մարդագետինք: Ծրդի ծառեր շատ կան: Անտառները բաղկանում են միայն ասղատերև ծառերից, որոնց ձիւթային արտաշնչութիւնքը գոլատանվում են որպէս վրկաէա, թոքերի համան: Ձմեռները երկար ու ցուրտ են, ամառները երբեմն ջերմ, իսկ երբեմն պաղ, այնպէս որ սակաւ ամիսներ միայն ապահով էին բնակիչքը ձիւնի երեսից: Շատ մեռախուղների պատճառով, ձմեռը, յետագայ ցուրտերի պատճառով և գարունը, եղանակի արագ փոփոխականութեան պատճառով, ամառը, և վաղ մեռախուղների ու ցուրտերի պատճառով աշունը ևս համարում են ոմանք վատառողջ: Այդ տեղ, ինչպէս Շվեցիայի առաւել մեծ մասում, վատ դրութեան մէջ է ցորենի և գինու անկարկութիւնը: Այլև քաղաքը չունի հող, ուստի նորա բնակիչքը պարտ են ամեն մի ցորեհատիկ, ամեն մի կոտոր հայ, ամեն մի կաթիլ գինի գնել կամ բերել տալ դուրսից: Քաղաքը է մի լոկ, վաճառականութեան և վաստակի պարապող տեղ և այդպէս ունի յարակցութիւն շատ աշխարհների հետ: Երբ որ ծնած էր Թոդլերը, այդ քաղաքը չունէր տակաւին ոչինչ ճանապարհներ սայլաշնացութեան, և այդպէս ոչ սայլեր և ոչ կառք. բոլոր վաճառքը դուրսից բերվում էին ծանրաբեռնաց ձիանների վերայ և նոյնպէս դուրս էին ուղարկվում: Ճանապարհների փոխանակ ունէին միայն խոր, ցեխոտ և քարուտ խրամներ: Ով որ կարող չէր ոտքով գնալ կամ թէ չկամէր ձիին-

թացիկ լինել, պիտոյ է ձանապարհորդել պատգարակով, մի ձի յառաջուց և մի ձի յետքից լծած: Ողջ ցորեանը առանումէին ինչպէս և այժմ Շ֊վաբենզանդիայից, այսինքն Ռավարիայից և Ս֊իւրտեմբերգիայից, որ դրած են Ռոդենզէ ծովակի հիւսիսա֊կողմում: Ամեն հինգշաբաթի օր այն տեղից ծովակի վերայով գա֊լիս են ցորենավաճառքը դէպ ի Ռոշել, որ իբրև մի հարուստ, մեծ տեղ Ռոդենզէի եպիսքոսի, ցորենի վաճառահանդէս էր: Ա֊յս պատճառով դիմումէին և դիմումեն այն տեղ ցորենավաճառք, ա֊զգէպանք և հացեվեաղքը ցորեան գնելու:

Ա֊յս բոլորը պիտոյ է մեզ յառաջ բերել, որովհետև կէս մի այս պայմանների տեղեկութեամբ միայն կարող կլինի այս և այն բանը հասկանալի լինել, և կէս մի այն տեղը ուր բնակումէ մարդս, շատ բանի պատճառ է, որ նորա մէջ կամ նորա շրջակայքում գտան֊վում է և որովհետև դրանից կախ է նորա բոլոր մեծութիւնը, կամքը, գործառնութիւնը և տատապանքը, նորա ձախատագիրը, նորա կեանքը և մահը: Երկինք ու երկիր, հողմ ու արև, կլիման և դրանից կախ եղանակը կեցութեան, կենցաղակցութիւնը և շա֊հատացութիւնը, բոլոր պարտագայքը և որպիսութիւնքը, որ ըս֊կսեալ օրօրոցից շրջապատումեն նորան, շատ անգամ ներգործումեն նորա վերայ շատ կանուխ և վճռելով նորա բոլոր կեանքի ընթաց֊քը: Մարդս անկախ չէ, ինչպէս նա գուցէ կարծումէր կամ թէ երազանումէր: Նա առաւել կարող էինք ասել, որ նա ոչինչ զգ֊դեցութեան ընդդէմ փակած չէր: Թէպէտ կարող էր նա իւր շրջա֊կայ պայմաններին հրամայել, բայց և առքա հրամայումեն նորան: Ա֊յնուհետև առնել զօրեղը յաղթող է լինում: Ով կարող է մտա֊ծել, թէ մեք ծնած լինելով Ղ֊ոնդոնի, այն համաշխարհական մայ֊րաքաղաքի մէջ կամ թէ պեկինում Չինաստանի մէջ, կամ թէ Կոստանդնուպօլսում որ Ցամքինների մայրաքաղաքն է, կամ թէ մի փոքրիկ քրիստոնեայ գիւղի մէջ կամ թէ բարձր ալպեան սարի վէ֊րայ մշանջենաւոր սառնամանիքի, խլուրդների և այլ լեռնային ա֊նասունների մօտակայքում, կամ թէ այն զարհուրելի չոր ու ցա֊մքած աֆրիկեան Սահարա աւազաւազաշի մէջ, լինելու էինք ուղղակի այնպէս, ինչպէս մեք այժմ ենք: Թէպէտ մարմնին անկախից հոգին լինելով անապական բնութեամբ, բայց և տակաւապիտա դիպուած֊ներից, և միշտ որպէս հոգի հատասար, այսինքն մի և նոյն դ֊ոյու֊թիւնը և գիտակցութիւնը իւր անձին, բայց նթէ ամենայն բան, որ

հոգու մէջ կայ, փոխոխական է, ապա մեր փորձառութեան հա-
մար մի և նոյն է, արդեօք նոյն ինքն հողին փոխոխած էր, թէ ոչ:

Թէ ինչ պատճառով ծնողքը տուած էին նորան անունս Պանկրատ, չգիտենք մեք: Նա ծնած է Հուլիս ամսոյն 27 ին և ոչ մայիսի 12 ին, այսինքն Պանկրատիոս սուրբի օրին: Մանեք ծնողք, երկար չմնալուս պատճառով, տալիս են իւրեանց զաւակներին այն սրբի անունը, երբ ծնած էր կամ մկրտուէր մա-
նուկը, օրացոյցի ցոյց տալով: Մի-սերը տալիս են կնքահօր կամ թէ ազգականների անո-անք: Դուցէ այսպէս ևս, կամ թէ այն ժա-
մանակի սովորութեան պէս, պատահած է Պանկրատի անուանա-
կոչութիւնը: Բայց մի քանի հայրեր շատ մեծավայրի են անուննե-
րի ընտրութեան մէջ և կարծումեն, թէ անունի մէջ գրած էր երե-
խայի համար մի բարի կամ չար դուշակութիւն, մի զգուշացուցիչ խրատ կամ քաջալերութիւն: Որպէս թէ մի Յվենգէլ պիտոյ է լի-
նէր բնիթօրմատօր, մի Դուստաս Ադոլֆ արքայատոհմիս քաջ պա-
տերազմող, մի Պղատոն, փիլիսոփայ, մի Ռափայէլ, պատկերահան, մի Գրիգորիոս, դուցէ պապ և այլն: Այո, երբեմն տալիս են մա-
նուկներին որ և իցէ սուրբի անուն, որ այդպէս այն սուրբի և մանուկի մէջ գոյանայ մի տեսակ խորհրդաւոր կապակցութիւն, այն սուրբը գառնայ երեխայի պաշտպան տէր, նորա պահապան կամ փրկիչ հրեշտակը վաճառէ, անբաղդութեան և փորձանքի մէջ:

Պիտոյ էր երեխային գառնալ այնպիսի ոք, որի անունը կրու-
էր նա. կամ թէ լինելու էր նա այնպէս, ինչ խորհուրդ ունի ա-
նունը: Բայց երեխան դուցէ ոչնչացնուէր անունը նոյն իսկ օրօրո-
ցի մէջ մրճէն: Մի՞թէ աւելորդ փիլիսոփայ գառնալու էր ձիա-
սէր. մի՞թէ մի Մարգարիտա գոհար էր: Ի հարկէ արժան է պատ-
ուելի կացուցանել մի գեղեցիկ անուն: Տգեղ անուններ ոչ մի ծնող տալիս չէ իւր զաւակներին և ոչ ոք չկամի դորանից: Պան-
կրատ կամի ասել ամենիշխան, ամենատէրոջ: Այս զօրաւոր անունը պիտոյ չէր տալ նորան, որովհետև նա ոչ ոքի վերայ իշխան էր, եթէ ոչ իւր վերայ յաղթական, և նորա իշխանութիւնը տարած-
ւում էր ոչ երկնքի և ոչ երկրի վերայ. նա չունէր մինչև մի սեփա-
կան տուն անդամ: Այլև անունը ոչինչ ազդեցութիւն չունէր նո-
րա վերայ. նա մնաց միշտ հաւեաս և խոնարհամիտ: Բայց կան շատ մարդիկ որ մեծամիտ են անուննների վերայ միայն, կամ թէ ևս առաւել չնչին բաներով: Ասած է. «Հանգերձքը շինումեն մար-

դիկ». երևումէ, որ և անուններըը կազուցանուումեն մարդիկ։ Երբեմն միշտ ասկես էին իւրեանց զաւակներին խորհրդաւոր անուններ։ Մովսէսը կամի ասել «ջրից հանած, և Սամուէլը» Աստուծուց խնդրուածքով ստացած»։ Մեր Պանկրատը, որպես հաւանական է, չլինելով յոյն լեզուին տեղեակ, երբեք դիտեցած չէ իւր անունի խորհուրդը և ոչ իսկ զարմացած է թէ ինչ էր նշանակուամ իւր անունը, ուրեմն և նա ընթացել է այդ բանի մէջ, ինչպէս մարդերի և ազամրդիների առաւել մեծ մասը։

Պանկրատի հայրը կրուամէր ազգատոհմի անուանօծոլեր. Թոբել, Շվեցիայի դերմանական լեզուով կամի ասել ծերպ կամ թէ խոր իջևան զառիթմեր տեղերի և սարերի մէջ։ Ով որ այդպիսի տեղում բնակուամէր, կարող էր ասվել Թոբլեր։ Ազգատոհմերի անունները կարելի չէ փոխել. ապա թէ ոչ, շատ մարդիկ իւրեանց տզեղ, երբեմն և խայտառակ անուններից պիտոյ է հրաժարվիէին։ Անասունների անուններ, զոր օրինակ առիւծ, գայլ, արջ, ձի ունին դեռ ևս մի փոքր մեծ և ազնիւ բան, ինչն ըստ ինքեան, բայց անասնաբս կիսատ ուն, ուզտ, փիլ ամենևին տեղի են։

Ինչպէս քաղդրահնչիւն են ամենայն մարդու ականջի ազգանունաբս Բոդենթալ (վարդերի հովիտ), Լիլիենթալ (շուշանների հովիտ) Մորգենսթեռն (առաւօտեան աստղ), Լինդ (գարուն), Ջօմիներ (ամառուն), Մայ, (մայիս) և այլն։ Գրանսիացիք ունին տեղի բարեձայնակ անուններ, բայց և այս ու այն չհմարտականը։ Իտալացիք ունին առաւել դեղեցիկը, Հայերը ևս բաւական ճոխ են սիրուն հնչեանուտական անուններով։ Մի հոլանդացի պատկերահան ունեցել է այսպիսի խայտառակ անուն «Հունդեքօթեր» (շան կղզեցը)։

Բայց թէ երբ Յոբելների նախահայրը իւր Թոբելից (սարի ծերպից) դուրս էր սողացել, և վերև դէպ ի քարաք էր եկել և այն տեղ օթևան ու շէնք էր պատրաստել իւր համար, կարող չենք ասել. բայց նորա պատկերից միևը արդէն 1433 թուականին, ուրեմն 300 տարի Պանկրատի ծնանելուց յառաջ էր քաղաքացի իւր երկրի մէջ։

Պանկրատի ծննդեան հանդամանքը և նորա կեանքը օրօրոցի մէջ ոչ ոք կարող չէ ասել մեզ։ Ոչ ոք դրով աւանդել չէ այդ բանը. ոչ ոք մտածել չէ նորա վերայ, թէ հարիւր տարի յետոյ մի

մարդ շինելու էր նորան մի գլխի նման։ Այլ երբ որ մեք կամինք դրեալ նորա վերայ, ոչ ոք չկար այն տեղ, որից կարելի էր հարցու փարձ առնել։ Անհնարին մեռած էին։ Եւ ոմ կարող էր գուշակել, որ նորածին մանուկը, այն տեղ օրօրոցի մէջ, ինչպէս մի այլ մա նուկ, միևչև իւր մեռանելը, օրօրոցից միևչև գերեզման պիտոյ է վազէ գրեթէ հարիւր տարու երկար ու ձիգ ճանապարհ։ Խնդիրը, թէ ինչքան երկար ապրելու էր մի փոքրիկ մանուկ, աւելի դժուար լուծանելի է քան թէ այն խնդիրը թէ ինչ պիտի յառաջանար մա նուկից։ Յաւական է ասդէն, եթէ կարելի էր երեսայն շարժողու թիւններից եղրակացուցանել — կայտառութիւն, կարմիր թշերից առողջութիւն, դէմքի գծագրութիւնից խնայականութիւն, և փոք րիկ աչքերից հանճար։ Այլ անտեսանելի կենսական թելը երկա րութիւնը, սոյն իսկ կենսական թելը պիտոյ չէր հետաքննել, և բո լոր գուշակողութիւնը այս մասին մի այնպիսի մութ և անհաստա ատ բան է, որ եթէ այն խնդիրը թէ ինչքան երկար ապրելու է այս փոքրիկ պանկրատը, շինած լինէինք մի վիճակ և ձգած լինէինք մի ամանի մէջ և այնուհետև դուրս եկած լինէր այսպիսի պատաս խանի «թէ նա ապրելու է գրեթէ հինգտաս և հօթն տարի» ասած պիտոյ է բոլոր ընթերակայքը նորա օրօրոցի բարձր ձայնով ծի ծաղած լինէին։

Աւրեմն, թէ Թոդլեր մանուկը, որչափ մարմնաւոր այժ և ա ռողջութիւն բերել էր իւր հետ աշխարհ, չունինք տեղեկութիւնք։ Այլև անհնարին է հաւաստի կերպով եղրակացութիւն առնել սկզբից տարագոյն մասին։ Մի քանի մանուկներ ունին շատ նուրբ ոսկրաշինք և սկզբնաբար աւելի անզօր բնութիւն, բայց հասանու մեն խորին ծերութեան. միւսերը ծնած լինելով որպէս յաղթան դամ ՝ելքուչեք և առատ ու զեղուն կենսական զօրութեամբ, մեռանումեն արդէն օրօրոցի մէջ։ Խնդիրը դրած է այն բանի մէջ, որ ամենից փոքր ընկնումէ տեսութեան տակ։ Կենսական կարող ու թիւնը փակած չէ ոսկրների և մկնամիսների մէջ. սրբա հնարաւո րութեամբ միայն մարդուս ներքնծութիւնը դէպ ի դուրս և նորա անդրադարձ ազդեցութիւնքը մեքենական ընդդիմութիւնների վե րայ դուրսից։ Աւելի մեծ և ամուր յատկութիւն ունի առողջ ութեան և երկարակեցութեան հետ ջիղերի համակարգութիւնը։ սա ամենաթոյլ կերպով կապակից է կեանքի, այո՛ նոյն իսկ հոգու հետ։ Եւ սիրտը, փորը, թոքերը, ուղեղը, այս խորհրդաւոր կեն-

սական գործարանները կամ օդանները չեն պահանջում ոսկրների համակարգութեանը. սքա են ուրիշ, որ տալիս են հնարաւորութիւն մի առողջ և երկար կեանքի: Ուշյց ջերերը և այս բոլոր օդանները պէտք է կարողանան ընդդիմանալ կերակրի և կլիմայի ազդողութիւններին, սիսեռի և կիլքերի բոլոր վնասակարութիւններին: Նուրբ թելերը կարող են ջուրս լինել և դրեթէ անպատասխան: Երեխայք, որ ծնանելուց յետոյ ունեցած են 12, այո 15 ֆունտ կշիռ, ուրիշ հակայորդիք, թոյլ էին և մեռան շուտով: Սորա հակառակ, հասարակ անդլիական բնագիտ Նիւտոնը երկու ամիս, ժամանակից վաղ ծնած լինելով, այնպէս փոքրիկ էր, որ նորա մայրը յետոյ ժամանակում սովոր էր ասել յաճախ, թէ Նիւտոնը կարող էր տեղաւորվել մի գարեջրի փոքրիկ տափորի մէջ. այնուամենայնիւ նա դարձաւ մի ալեւոր մօտ 80 տարիքով: Նորա մէջ պէտք է եղած լինի մի ամենայաղթող կենսական զօրութիւն: Ալև սովոր են մարդիկ ասել, ինչ երեխայ հիւանդոտ էր, հասանում ծերութեան: Եւ արդարև ոմանք մարդիկ սողումն, սկսեալ օրօրոցից ահա, գերեզմանի չորս կողմով, այնուամենայնիւ 70 մինչև 80 տարի ներս չեն ընկնում: Մի ասեն, որոնց օրօրոցը երեւում շատ ու շատ հեռի գերեզմանից, մի ոսոխունով էին արդէն նորա մէջ: Նոցա բնութիւնը դիմացկոտ չէ: Ուշյց գոանեվումն և կատարի նման ջուրս կեանքեր. նոցա կենսական արմատը երեւում մի սոսնձանիւթ որ կարելի է քաշել և ձգել ինչպէս Տիրօլեան ապակեզործ Էրմինը մի գունդ ապակուց կարող է մանել շատ հասարակ կանդուն ապակեթել: Շատ հասարակ բնագնիք չեն կարողացել մինչև այժմ յայտնի կացուցանել թէ ինչ բան էր կեանքը և կենսական զօրութիւնը: Նոքա գոանում են միշտ, այս ամենասուր խոշորացոյցներով, այնպիսի նիւթեր միայն, որոնց մէջ ամփոփած է կենսական զօրութիւնը, և որոնց ձեռքով ներգործում նա, այլ ոչ նոյն իսկ կենսական զօրութիւնը, այս անտեսանելի բանը: Ամենայն զօրութիւնք անտեսանելի են, որպէս հոգիքը: Ա՛յո՛ ոչ ոք չգիտէ անդամ, թէպէտ մեր գիտութիւնը համարվում են այնքան բարձրանիստ և համեմատվում երկնքի աստղերի հետ, և թէպէտ բոլոր բուսականքը, ընտանոլքը և մարդիկը ապրում են, կենդանի գոյացած են, նոքա իւրեանց կեանքը մեր աչքի առաջև պարզում են և հանդիսացնում են, ապա թառամում են և կորուսանում իւրեանց կեանքը, այսինքն մեռանում — այնու

ամենայնիւ ոչ ոք չդիտէ թէ ինչպէս հաշիւ ու համար տայ իւրեան այլ մասին: Միշտ և հանապազ յառաջ են բերում այս իղձը թիւնը որպէս մի լոկ համեմատութիւն կամ մի գոյացութիւն, որով ոչինչ հայեցական տեսութիւն և ոչ իսկ մի մասնաւորական նկարագիր յառաջանում չէ մէջ, այլ միայն մի բառի ըմբռնողութիւն կամ մի շղթանակ առանց պատկերի: Ընդարձակ, մեք այս տեղ, ոչինչ տեսանում չենք. և այս պատճառով յաճախ լինում սխալ դատողութիւն: Պատճառ, մի, ըստ երևութին կենսական զօրութեամբ զեղուն և թաթախուն, արագ և առատ աճեցուն ծառի մէջ չէ դրած ուռող մաշող որդը: Ուր այս պատճառով կարելի է արդէն որպէս մանուկ, ամենազեղեցիկ ծաղկափթիթ հասակում, այսինքն նոյն իսկ բացուող բողբոջն, կամ թէ մանուկի և երիտասարդի ուրախ աճելութեան ժամանակի մէջ, չափից դուրս շոյտ աճողութենից, ուրեմն կենսական զօրութեան ձոխութենից մեռանել, և ինչ որ շոյտ դէպ ի վեր է աճում, սովոր է նոյնպէս շուտով թառամել: Կաղնի ծառը աճում շատ ծանր, մօտ 500 տարի, բայց և հասանում հազարամեայ ծերութեան. նա դառնում մի ձշմարիտ Մաթուսալա: Խաղող ծառը Նոյեկատանի մէջ դէ բազանցում նորանից շատ ու շատ. սա աճում տարողջ հարիւրատար տարիներ դրեթէ անկատելի փոքր. կարծում, թէ այն տեղ եղած են բաօբաբները Ադամի ժամանակից: Ինչքան երկար կանգնում են մայրիքը Լիբանանի վերայ. կարծում, որ այն մայրիքը որ մինչև այսօր գոյանում այն տեղ Աստուածհօրդիները, մնացած են Նոյեմեան ժամանակից:

Այնու ամենայնիւ չկամինք մեք մտածել, թէ, ինչպէս մինը մեր ժամանակներում ասած է, կարող էին մարդիկ աւելի ծերանալ, եթէ նոքա ծառերի պէս, միանգամայն հանգստութեամբ կայնին և միայն յառակի մէջ: Որպէս չէ ծառ. նորան ի բնէ սեփականն է շարժողութիւն և նորա ոտերը արմատացած չեն հողի մէջ:

Աչխոյքը և մանուկները երբեմն սկսը և այն շատ հիւանդոտ են. բայց կերպարանագործութեան տարիներում մեծանում են, տարածում են, ստանում են քաջառողջութիւն, միայն թէ այնքան ամուր էին, որ կարող էին պատշաճապէս ընդդիմանալ հանակի փոփոխութեան — այս առաջիկ հրեշտակի միառակալ ազդեցութիւններին զանազան տեղերում, շատ տեսակ մթնոլորտի նիւթերի կորստական ազդեցութիւններին, այս մանկաղելքին մար-

դուս կեանքի համար: Այլ մեք համարձակութեան ունինք ենթադրելու, թէ պանկրատը մի առողջ բնաւորութիւն իւր հետ բերել էր աշխարհ:

Նորա հայրը չհասաւ ծերութեան հասակի, այլ մեռաւ արդէն 40 տարեքով: Մի հին փորձ է, որ երեխայքը ժառանգութեան իւրեանց մօր քան թէ հօր առողջութիւնը և հիւանդոտութիւնը: Շատ անգամ, նորա նմանութեան աւելի իւրեանց պապերին և մեծ մայրերին, քան թէ ծնողներին, ինչպէս այդ բանը յաճախ հանդիպում և միւս շատ խորհրդով: Եւ Պանկրատի նախածնողքը եղած են առողջ բնութեամբ և հասել են ծերութեան: Այլ ինչ պատճառով մարդս շատ անգամ աւելի երկարակեաց է քան թէ նորա բոլոր եղբայրքը և քոյրերը. այո՛ մինչև նորա բոլոր նախահարքը, այսինքն ապգատոհմի արմնակիցքը: Մխանգամ վիճակմուն մի երկարամեայ հասակ, զոր օրինակ 80 տարի, բոլոր եղբարցը և քոյրերին, և անառնութիւնը ասես թէ յաւիտեան կամէր տևել աշխարհի վերայ. միւս անառնութիւնքը մեռանում են արդէն երեխայութեան մէջ: Նորա կենսական շունչը կարճ էր: Ո՛չ. ունինք երեխայք մեռանում են իսկապէս այն տեղ, ուր գոյացել են, և ինքը մայրը լինում նոցա գերեզման: Որանից վաղ կարելի չէ մեռանել: Մխաները ծնանում են, և կատարում են լոկ մի քանի շնչառմակութիւնք: Շարժարանը կամ սիրտը իսկոյն դադարում վերանին: Մի մայր Գերմանիայում իւր մեռած մանուկը, քարացած, կրել է արգանտում չորս տարի երկար, մի այլ մայր մինչև քսան և ութ տարի: Ա՛յս մայրերը չկարողացան ծնանել անդամ: Նորա մեռան վերջանում և նոցա մանուկները դատն քարուկիր դարձած, մայրական արգանտի մէջ:

Երբ որ ծնանում մի երեխայ, ծնողքը սովորաբար փափաքով նայում նորա վերայ, քննելով, արդեօք ունէր նա բոլոր անդամները և ոչինչ այլանդակ կերպարանք չկար նորա վերայ: Ինչպէս զարհուրելի բան, եթէ կայ մի այլանդակութիւն երեխայի վերայ, և ինչպէս ուրախացուցիչ, եթէ նորա կերպարանքը գեղեցիկ և վայելուչ էր: Մի անճոռնի ծնած երեխայ զարշելի բան է, մի անբաղդութիւն, և յոյսը կամ ուրախութիւնը դառնում այնուհետև յուզ և տրտմութիւն: Այնպէս է ուղղակի, որպէս թէ դերդաստանը մի ձոխ վաճառական նաւի պէս, ծովասոյզ էր լինում այն րոպէին, երբ որ պիտոյ է հասանէր ցամաքին:

Ինչ թշուառութիւն, երբ որ մանուկին պակաս էին մատները, բազուկները, ոտքը, երբ որ պակաս էր նորան ղլուխը: Շլխայի մէջ, մի մայր ծնաւ մի երեխայ. սա բազկանուաէր միայն ոտերից և մարմնի ստորին մասից: Ինչ ուրախութիւն, եթէ նկատումնք, որ մանուկը բարւոք տեսանում է և բարւոք լսում: Մեք կարծումնք թէ այս բանը ինքն ըստ ինքեան հասկացվում. այնու ամենայնիւ ինչքան յաճախ չէ հասկացվում դա ինքն ըստ ինքեան: Ինչ ուրախութիւն, եթէ մանուկը ցուցանում է իմացականութիւն:

Ամենայն տարի ծնանում են շատ հազարաւոր անդամալոյծներ և երեխայք ամենայն մոտածելի կերպով խեղված. ամենայն տարի աշխարհ են դալիս հազարաւոր կոյրեր և խուլեր, ամենայն տարի նոյնքան էս ամենևին կամ կիսով չափ պակասամիտք: Խրութիւնը ունի որպէս հետևանք անբանութիւն, պակասամտութիւնը անպիտանութիւն կեանքի համար, և մի անհերքելի այլանդակութիւն մարմնի ըստ մեծի մասին շուտահաս մահ, որ բաղդատութիւն է:

Ով ծնողներ. ուրախացէք, եթէ Աստուած պարգևում է ձեզ մարմնով ու հոգով առողջ և բարեկերպարան զաւակներ, եթէ ոչ մինը նոցանից այլանդակված չէ: Աստուածն միայն փառք տուէք: Եւ ով որ մարմնով ու հոգով վայելուչ կերպարանված է, թող նոյնպէս փառք տայ Աստուածն իւր սրտի խորքից: Կնաշատաշած ամենիւ կերպարանքը է մի ազատ պարգև Աստուծոյ և մի անեզրական բարերարութիւն: Նորան ընծայեցէք և այդ պատիւը: Նա միայն կարող է տալ առողջութիւն և ուղիղ անդամներ, կամ չտալ և առածը վերստին առնուլ:

Սուրմեն թէ ինն, այսինքն այնքան երեխաների մէջ, ինչքան եղած էին Ծորլերի գերդաստանում, սովորաբար միևը շատ յանախ է դառնում միւսներից: Այդ կան գերդաստաններ բազմաթիւ երեխաներով, որ ամենեքեան միմեանց հետ ելևէջ են առնում իւրեանց ամենիւ մարմնաւոր կերպարանքով և վայելչութեամբ, մինչ դորա հակառակ միւս գերդաստանների մէջ գրեթէ կամ թէ այդ բոլոր երեխայքը կոյր, խուլ և անմիտ են: Զարմանալի բաղխոզութիւն — օտարոտի առակ: Այդ մեք չունինք հանդիսակութիւն մեր ձեռքերը վեր բարձրացնել և աղաղակել դէպ ի երկինք.

ինչ է քո ապաճը, Տէր, ինչու՞ համար իմ երեխաս պիտի լինի ա-
նօթի անարդութեան, կամ թէ միւսինը պիտի լինի անօթի պատուա-
կանութեան: Այնքան յաճախ լսումենք, թէ չքաւոր մարդերի,
այո մինչև մուրացկանների և ցիգանների երեխայք շատ անգամ
էին զարմանալի դեղեցիկ և բարեձև: Այոյդ է այդ, որ համեմա-
տաբար, աւելի յաճախ հանդիպումեն մեղ մեծատուն գերդաս-
տանների մէջ ապշամիտ երեխայք. դորա հակառակ, քաղցած ու
ծարաւ աղքատների մէջ այլանդակ կերպարանքով երեխայք շատ:
Մինչակ ժողովուրդը և նոքա որ ապատ, ուրախ բնութեան մէջ
ապրումեն թէև մուրալով, ունեին առաւել բարեկերպարան և ա-
կառ ապշամիտ երեխայք: Այոյդ ինչ տեղ երեխայքը արդէն օրօ-
րոցի մէջ մարմնով ու հոգով անկենսամ են ծնում և աւելումեն,
պիտոյ է մարմնապէս, ապա և հոգեպէս նուաղէին, մեռանէին,
թշուառանային:

Ուրեմն Ծնողքերը էր մի մեծ գերդաստանի զաւակ, և ինչպէս
ասացինք, հիմնագործքը նոն երեխաների մէջ: Մի հատ զաւակ,
ասումեն սովորաբար, զարհուրելի բան է. չորս զաւակ ամօթումեն
մի ժողով և կազմումեն արդէն մի օրինաւոր գերդաստան. վեց հա-
ստ համարվումէ արդէն շատ, բայց տասն, տասն և հինգ մինչև
քսան երեք — որ Եւրոպայում և Ասիայում շատ անգամ պատա-
հած են — սոցա վերայ ինչպէս պիտոյ էր նայել: Մեք կարդումենք
Աստուածաշնչի մէջ Աբրահեմի մասին թէ ունեցած է եօթանա-
սուն որդիք: Մի պարսկական դիւցազն Ռուստեմի մէջ, մեր ժամա-
նակներում, ունէր նոյնքան: Ամենի մեծ բաղդաւորութիւն է, շա-
տերի քան թէ սակաւների հետ միասին դաստիարակվիլ, և սովո-
րաբար դասելով, շատ երեխայք միասին դաստիարակվումեն ամե-
նի բարեր, քան թէ սակաւք միայն: Շատ զաւակների դաստիա-
րակութիւնը շինումէ ծնողքը բազմահայեաց. միայն մի հատ,
կամ երկու զաւակը շատ անգամ վատթարանումեն. ծնողքը վար-
վումեն նոցա հետ յաճախ կամ չափից դուրս խիստ, կամ թէ չա-
փից դուրս մեղմ: չափից դուրս խիստ, երբ որ չեն հասկանում
հարկաւորութիւնը թէ պիտոյ էր յարմարվիլ շատ սրտերի հետ.
չափից դուրս մեղմ, երբ որ կարող չէին նկատել թէ կարդ, օրէնք
և ազատութիւն անթողուլ կարևոր էին: Շատ երեխայք, շատ
հոգսեներ, ասումէ առածը: Ով որ շատ զաւակներ ունի, ու-
սանումէ շատերի համար աղօթել, աշխատել և հաւատարիմ լի-

նել դէպ ի Աստուած: Աւելի մեծ դերդաստաններուն մէջ, ևթէ նո-
քա օրհնաւոր էին, գոհանալէ ևս աւելի մեծ սէր: Ամենայն երե-
խայ, ինչպէս ասացինք, իւր բաժինն սիրը իւր հետ բերուն աշխարհ:
Այլև սէրը մի աւելի մեծ դերդաստանի մէջ անընդհատ պատճհ-
նելով և վարժութեամբ օրէ օր զօրանուն և պնդանուն: Մի ա-
մենևին այլ տեսարան է, երբ որ մի դերդաստանի հայր մեծ բազ-
մութեամբ երեխաներուն կատարուն իւր երկեցման աղօթքը. այ-
նուհետև նա կանգնած է Աստուծոյ առաջև որպէս մի նահապետ
իւր սերնդովը, որպէս մի փոքրիկ քահանայապետ իւր փոքրիկ ժո-
ղովուրդ իսրայէլովը: Նա աղօթուն վոխանակ ամենեցուն. դա
քաղցր է նորա սրտին: Եւ առանին ուրախութիւնքը և գերդաս-
տանի ծնեները. արդարև շատերի հետ կարելի է նոյնպէս մի մեծ
իրողութիւն մեծվայելչութեամբ ծնեսխորհել, և առ ի սրտէ ուրա-
խանալ, ըստ որում ամեն մինը բերուն իւր հետ իւր բաժինն ու-
րախութիւնը: Այլև շատ ու բազմօրինակ փորձերը օգտակար են
ամենեցուն: Այլև, սովորաբար, հայր ու մայրը աւելի սրտակից
են միմեանց հետ, ըստ որում ամեն մի նոր ծնած երեխայ դառ-
նուն մի նոր շղթայակապ նոցա մէջ. ոչ թէ նոցա սէրը իւրեանց
հատարակաց սիրով դէպ ի երեխայքը աւելի ամրանուն ծնողների
մէջ, այլև նոցա հատարակաց հոգածութիւնքը և պարտականու-
թիւնքը շենուն և պահուն նոցա սիրտը աւելի սիրալից:

Թոռլերը էր հինգերորդ մանուկը իննի միջից. և այս չէր ան-
խորհուրդ. պատճառ անպրանիկներուը, կրտսերքը և միջին երեխայքը
ունին միմեանց հետ մի շատ անհատատար առընչութիւն: Առա-
ջին, անդրանիկ զաւակի վերայ շատ և շատ ծնողք փորձուն իւր-
եանց դաստիարակութեան ձարտարութիւնքը, ինչպէս մի նորընծայ բժիշկ, քահանայ և իրաւագէտ ուսումնական փորձուն իւր
հմտութիւնքը: Նորա փորձուն այն հմտութիւնը որ ուր և
իսկ կարդացած էին: Երկրորդ և երրորդ զաւակի դաստիարակու-
թեան մէջ վերահասու են լինուն, որ աւելի խելացի էր միտ գնել
փորձառութեանը քան թէ զրքերին: Հասս երեխաներից ամե-
նակրտսերի կրթութեան մէջ չեն այնքան ձգտութեամբ գործ դնում
իւրեանց դաստիարակութեան սխալմունն. դա չէր յարմարաւոր
ամենեցուն, և սխալմունքան դաստիարակութիւնը ձանձրացուցել
էր նորանց: Անդրանիկ զաւակը, ևթէ դա ժառանգաւոր արքա-
յային է, շուտով ուսանուն պարտն գառնալ աւելի կրտսերների վե-

բայ. նա իւր աւելի մեծ մասնեաւոր զօրութեամբ իշխանութիւն է գործ դնում նոցա, առաւել տկարների վերայ, և չարից պուրս մեծամասնութեամբ դորանով: Նորան չէ կարելի գործ դնել որպէս վերատեսուչ կրտսերների վերայ, այլ խելացի էր օգտակար կացուցանել որպէս վերատեսուչք, աւելի չափահասակ աղջիկները: Առաւել առատապանքի տակ էին ամենակրտսերքը, եթէ նոքա չգտանէին միշտ պաշտպանութիւն և արդարութիւն ծնողների կողմից: Ով որ միևն է միջին զաւակներից, կարող չէ իշխել, բայց և չէ սրբատական անպայմանապարտ հնազանդել առաւել չափահասներին: Նա գտանվում այն ոսկեղէն միջասահմանի մէջ. բայց և վատ չէր միանգամ դրած լինել երկուսակը կրակի մէջ:

Ամենապատշաճ արշաւանք եղբայրակիցներից միևի վերայ, չափահասի կամ կրտսերի վերայ, մի յարձակումն զօրագնդաբար, չեն հանդիպում դերդաստանների մէջ. բայց եթէ լինն երեխաների մէջ երբէք չդառաջանար մի վէճ, անկարելի է: Մանկութիւնը շատ զուարթ ու դիւրագրգիռ է. նա յօժար է յարձակվիլ և զարկել, բայց նոյնպէս շուտով դարձեալ հաշտարարան է: Եղբօրների և քոյրերի մէջ կարող է խաղաղութիւնը շուտով դարձեալ նորոգվիլ ծնողների ձեռքով: Բայց, սրտարև շատ անգամ պիտոյ էր ծնողներին գործ դնել ամենայն հնար, որ ոչնչ անմիաբանութեան հոգի կերպարանք չառնուր, ոչնչ երկպառակութիւն չարմատանար: Աստուածը է խաղաղութեան աստուած, դերդաստանի հայրը պարտական է նոյնպէս լինել աստուած խաղաղութեան, ոչ թէ միայն դէպ ի երեխայքը, այլև նախ և յառաջ դէպ ի մայրը, ապա և դէպ ի ամն կենակից քը և սպասաւորքը:

Թոռների իմացական ընդունակութիւնքը, երևում, թէ և շատ են սովորական տեսակից և մեծութենից: Նշանաւոր էր միայն նորա յիշողութիւնը, բայց և նորա հասկացողութիւնը բարւոք էր և նորա բնութիւնը զուարթ, այս կատակասէր: Նա կարող էր շուտով վճռել մի առաջարկութիւն, բայց դէպ ի բարկութիւն երբէք բնաւորված չէր և այդ պատճառով երբէք ոչ հակամիտ: Նորա հնազանդութիւնը սրտարև շատ մեծ էր, նորա համբերութիւնը անպատուելի, նորա բարեպատութիւնը սակաւադիւտ: Յիւրաքանչիւր և այս պատճառով նորա եղբարքը և քոյրերը սիրում էին նորան, թէպէտ եղբայք ու քոյրեր, շատ փոքր է պատահում, որ վերահասու լինէին միմեանց բարու ոք յատկութիւններին և պատա-

կանուխենները։ Ա՛րդուս աչքերը սովորական բաներով սրված չեն։ Որպէս երեխայ պէտք է Թօրլերը սիրելի եղած լինի ամենեցուն. նորա աջողակութենից ապագայ օրերում յառաջացան ինչ ինչ օգտակար բաներ։

Ա՛ճախասակ չէր նա. նորան կարելի չէր դնել գրնապիրների մէջ. նորա մարմնի մեծութիւնը ունէր հինգ ոտնաչափ և չորս ձկոյթ. այլև չեղաւ նա հաստ և պարարտ։ Նորա ոսկրաշինքը էր այնպէս, ինչպէս սովորական մարդկերի մէջ. այնու ամենայնիւ նորա մկնաձների զօրութիւնը բաւական մեծ էր։ Կա, որպէս ազատ մարդ, կարող էր հեշտութեամբ վեր բարձրացնել մօտ 7 պուդ, բայց երբէք աշխատել չէ լինել աւելի ուժեղ քան թէ միւսները, կամ թէ երևել այդպէս։ Գործէ մարմնաւոր վարժութեամբ ստացած կը լինէր նա նշանաւոր ուժեղութիւն. բայց այդ վարժութիւնը դրած էր յետոյ նորա պաշտօնի վիճակի մէջ։ Ընդարձակ մարմնաւոր մեծութիւնը է մի դիզելիկ բան, բայց ջոկից դուրս, միւսների հետ անհամեմատութեան պատճառով, շինում անկենդակցելի, բազմապէտ և ծանրաշարժ, քան որում ոչինչ բան երկրի վերայ, ինչ որ առնուազն մարդկի, կարգած է հականների համար։ Բայց և թղուկները անպատշաճ են, այլև ծիծաղելի միայն։ Մի բարեվայելուչ մեծութիւն, միայն դնելով աշխարհի ձևին և սովորութեանը, ախորժելի է։ Մի մեծախօս թղուկ գուարճացուցիչ ծիծաղելի է, բայց մի մեծ մնապարծուկ անտանելի։ Մի այդպիսի մարդ արժանի էր Գողղոթայի պատահարին և սովորաբար ենթարկվում դորան։ Մի հսկայ, որի ուսերի վերայ հազիւ թէ կարող էր դնել իւր ձեռքը մի մեծահասակ մարդ, կանդնելով ոտքի ծայրերի վերայ, ասայ մեծամտութեամբ մի մծատկայ փոքրիկ մարդու. «Ասա ինձ, փոքրիկ դու, եթէ իմ կայսրս ունենար մի զօրագունդ այնպիսիների, ինչպէս ես եմ, ապա կարող էր նա միանդամայն ձեզ բոլորիքեանքդ և աշխարհը առնուլ դնել իւր ծոցի մէջ։» Ընդհակառակն ոչ, պատասխանեց փոքրիկը. բոլոր խորութիւնը լինելու էր այն, որ հրացանի դնդակը աւելի շուտով դիպչելու էր ձեզ։

Ա՛ճ մարմնաւոր զօրութիւն աւելի արժանաւորութիւն ունի քան թէ մարմնի երկայնութիւնը. նորան կարելի էր հաղարաւոր պատերազմի միջոցներում օգտաւէտ կացուցանել։ Ա՛ճութիւնը կարող է պաշտպանել փոքրիկներին, ոյժը ախորներին, բայց ոյժը մեծութեան հետ միացած, կարող է պաշտպանել և հզօրներին։ Իսկի

խորհրդով առաած է ամենայն բան: Բայց ամենայն տեղ գտանվումն այնպիսիք, որ չարաչար դործ են դնում իւրեանց մարմնի ոյժը. նոքա կամ որորվումեն նոյնպիսի ուժեղների, ինչպես ինքեանք էին, և այնուհետև յառաջանում ասես թէ ու ուժի պատերազմ վայրկեի ցլի հետ, կամ թէ կռիւը որձակների. մեք յօժարութեամբ նայումենք այդ տեսարանին և միամտոյ դրաւ ենք տալիս թէ յաղթելու է այս կամ այն կողմը, բայց կատարեալ ճշմարտութիւնը երբէք դեղեցիկ չէ: Կամ թէ ուժեղը որորվումէ մի տկարի տակին, և ամենևին անգօրի. ով վաստակ պատերազմ: Բայց ինչ պիտոյ էր ասել նորա մասին, որ պարծենումեն իւրեանց մարմնի հաստատութեամբ և ճանրութեամբ. մարդուս մարմնի կշիռը երբէք տկարի չէ եօթն պուդից. եթէ դորանից անց է կենում, տալա կարող չէ նա շարժել իւր անձը: Մի եղն կարող է մինչև յիսուն, տկարի էլ պուդ կշիռ ստանալ, մի ոչնչդէնբ, այն ի կիտառուին ութսուն ոտնաչափ երկայնութեամբ, մինչև երկու հազար հինգ հարիւր պուդ: Բայց անարժան է մարդուն այսպէս լինել, կամ ցանկանալ այսպիսի մարմնեղութեան: Կան տգեղ և անպէտ, օգտակար և անօգուտ երկրաւոր բեռներ: Միանգամ գլուխը մի մարմնեղ մարդ մի այլ մարմնեղի այսպէս. «Բարեկամ, մեք այն խորհրդով չենք աշխարհի վերայ, որ միասին խոտ ուտենք, և մեք կարող ենք մի տկարի տգիտակցութեամբ դէպ ի քուն դնալ քան թէ այն դիտակցութեամբ, որ մարմնով պարարտ էինք:» Այլև պիտոյ է ասել թէ պարարտութիւնը է մի տեսակ հիւանդութիւն, մի տկարութեան ծնունդ. ճարպի մէջ չկայ ոչ մինակային և ոչ կեղծային զօրութիւն: Պարարտութիւնը չէ ապահով կացուցանում հիւանդութեան և մահու երեսից: Կարելի է ճարպի մէջ խեղդվիլ. մեծութիւնը չէ նոյնպէս պաշտպանող. տկարի հեշտ պաշտպանող էր ամրութիւնը: Միջակ մեծութեամբ և խառնարմին մարդիկ ունին ամենաբարի և տկար մինակային զօրութիւն և մեծ կենդանական ամրութիւն:

Ծորերը ուսած էր իւր քաղաքի դպրոցում: Եթէ այժմուս շատ քաղաքային ուսումնարանների այո և գիւղական դպրոցների մէջ Կերմանիայում անչափ շատ բան ուսուցանումեն, այն ժամանակին յիրաւի գրեթէ ամենայն տեղ շատ փոքր են ուսուցած: Ծորերը ուսել էր միայն կարդալ, գրել և մի փոքր հաշուաբանութիւն: Հաշուաբանութեան մէջ ունէր յաջողակութիւն, որ և

մեռայ նորա մէջ անփոփոխ մնացէ ի խորին ծերութիւն. այլև դո-
րանով պարապումէր նա ժրաջան իւր ապագայ պաշտօնի մէջ։
Բայց ի իւր աշխարհքից կարդում էր նա շատ միւս գրքեր. և
գրելը շուտով բայց թողեց նա ամենևին, այնպէս որ յետոյ պատ-
մումէին թէ նա բոլորովին գրել չգիտէ և ոչ իսկ ուսած է։ Պիտոյ
է մտածել թէ, այն ժամանակին ահա, բոլոր բնակիչքը քաղաք-
ների մէջ, աւետարանի դաւանողք, ուսանումէին այնքան, ինչքան
ուսած էր Յովքերը, բայց շատերը դուրս գալով դպրոցից, գործ
չէն ածում իւրեանց ուսածը։ Եւ ինչ որ գործ չէ գրվում, մոռա-
ցվում շատ շուտով և թուշնում մտքից։

Ա՛յն ժամանակին դեռ ևս ուսուցանում էին ձևաբանութիւն
(մարմինների կերպարանքը որ ներս է բերել մանուիների դասախա-
րակութեան մէջ պետարոցցի մանկավարժը), այլ թողումէին աչ-
քին որոշել մարմինների ձևակերպութիւնքը և մտածել դոցա վե-
րայ։ Նմանապէս ուսուցանում էին ոչինչ գիրմանական լեզու,
մտածելով թէ ամենայն երեխայ ուսանումէր դորան մօրից և հօ-
րից և միւսերից. և ոչ իսկ երկրագրութիւն։ Ով կամենումէր ճա-
նապարհորդել դէպ ի Անգլիա, Հռոմ կամ Ասիա, թող որոնէր
ճանապարհը ինքը. նա կարող էր ճանապարհին հարց ու փորձ ա-
նել. եթէ նա մոլորվէր ևս ճանապարհից, պիտոյ է հասանէր ուր
և իցէ, և ամենայն տեղ գտանելու էր աշխարհ ու մարդիկ. Ա՛յն
ժամանակին ուսուցանում էին և ոչ պատմութիւն. անցած իրո-
ղութիւնների վերայ, ինչպէս մեռած մարդերի վերայ պիտոյ էր լաւ
խօսել կամ ոչինչ չխօսել. այլև հերիք գործ կար, ծանօթանալու
ներկայն։ Պիտի էր ուսանել երկրաչափութիւն. ա՛հ, ոչ ով չկար,
որ կարող էր ուսուցանել դորան. կամ թէ բնապատում պիտու-
թիւն. բայց բնութիւնը ամենայն տեղ է մեր շրջակայքում։ Թ ըս-
չունների թուչքը կարելի է տեսանել, երկրի անասունքը, որ հար-
կաւոր էին մարդուս, կարելի էր նկատել դաշտի ու ախոռի մէջ,
ճճիները և որդունքը ոչ ոքի ուշադրութեան արժանի չէին։
Գաշտն ու այգին տալիս են խոտ և կտաւամբ և տունները և փողոց-
ները հերիքապէս ցուցանումեն մեզ թէ ինչ օգտակար քարեր կան։
Բայց բնախօսութիւնը, որ ցուցանումէ մեզ Աբարիչը հոյակապ
տեսարանների մէջ, որ բացատրումէ մեզ աղեղը երկնքի վերայ, փո-
թորիկները, կարկուտը և այլ օդերևոյթք. ինչ հարկաւոր էր այդ
ուսումը. Աբարիչն ծանօթացնումէ Աստուածաշունչ գիրքը, միա-

բանները կան օրացուցի մէջ։ Ա յսպէս էին մտածում այն ժամանակ-ներին, դուցէ այժմ էլ այս և այն ստուերաբնակ ազգերի մէջ։

Ծէ ինչ տգիտութիւն նորա, այն յիրաւի բարեգնաց մա-նուկի վերայ ապած է կրծնի ուսումը դպրոցի մէջ, յայտնի չէ մեզ. դուցէ այդ ուսումը եղած է անչափ բեռնաւորած արտաքին ձևե-րով և չոր ու ցամաք դաւանաբանութեամբ. մեր ժամանակներում տեսանում ենք յաճախ դորա ներհակը. մարդս սովոր է միշտ մի ծայրից դէպ ի միւս ծայրը խոտորվել. բայց Ծորքերի մասին պի-տոյ է ասել, որ նա չէ չարչարվել մի բազմամանեայ կրծնի ուս-մամբ։ Նորա բոլոր հասկացողութիւնը կրծնի մասին, երևում է թէ այգպէս է եղած. Այժ և այժմ մի Հայր Ստուած. մի անգամ աշխարհ է եկել մեր Տէր Յիսուս Քրիստոսը. պիտոյ էր աշխատել և անառես լինել, խաղաղութեամբ ապրել և ոչ ոքի երբէք չար չառ-նել, այնուհետև լինելու է նորան բարի այժմ և յաւիտեան։ Ա յս փոքրիկ քրիստոնէական ուսմամբքս շատ լաւ անց է կացել նա կեան-քի ասպարէզը. Թոզ միւսերը իւրեանց շատագիտութեամբ այդ-պէս բարուք վճռարած լինէին իւրեանց կեանքը, եղած լինէին այն-պէս արդար և բարի, այնպէս երկիւղած և բաւական, ինչպէս նա։

Ծորքերը արդէն դուրս էր եկել ուսումնարանից և պիտոյ է ուսանէր մի հացատու արուեստ։ Ընդհանուր նորա անցային դաստիա-րակութեան ժամանակը անցել էր. բայց Թէ և այդ դաստիարա-կութիւնը ինչպէս է եղած, կարող չենք ասել. դուցէ կարելի էր եզրակացութիւն առնել որդուց դէպ ի հայրը և մայրը, և նորանից ինչ որ զաւակը գարձել էր մակաբերել այն բանը ինչ որ ծնողքը արած էին, կամ Թէ իմաստասիրել նորա դաստիարակութեան կեր-պը, այնու ամենայնիւ անհաւատարի է մի այդպիսի եզրակացու-թիւն։ Ա Թէ բոլոր լինն երեխայք դաստիարակվել են ամենևին հա-ւասարապէս, այնու ամենայնիւ, միտ դնելով նոցա զանազան ըն-դունակութիւններին և ձգտողութիւններին, պիտոյ է կիրպարան-ված լինէին շատ անհաւասար։ Դաստիարակութեան եղանակը չէ մի տախտակ, որի վերայ բոլոր երեխայքը կարելի է այնպէս պատրել, ինչպէս մի կօշկի կաշի, և դաստիարակութիւնը չէ ամենակարող։ Ինչքան յաճախ լսում ենք Թէատրանական բեմի վերայ և մանուկնե-րի համար գրած գրքերի մէջ «անհաւասար եղբարց» մասին, Թէ-պէտ նորա ստացել էին մի և նոյն դաստիարակութիւն։ Մի հռո-մէական կայսր ունէր երկու որդի, որ և յաջորդեցին նորա աթո-

ոը: Պոցանից մինը էր մարդկային աղբի ուրախութիւնը և պարծանքը, հօր պատկերի նմանութիւնը, միւսը մի արիւնածարաւ և խայտառակ իշխան: Պատիարակութիւնը գործ ունի զանազան մանուկների հետ, ըստ որում ոչ մի երեխայ այնպէս չէ, ինչպէս միւսը: Ինչպէս նիւթը, նոյնպէս և նորանից պատրաստած անօթը: Պատիարակութեան հնարները այնպէս են յաճախ, որպէս բժշկական դեղերը. մի հիւանդի վերայ ներգործութիւն օգտաւէտ կերպով, միւսերի վերայ վնասակար, և ինչ որ մինի համար մեղը է, միւսի համար թոյն է: Մի բարեպաշտ, բայց կոպիտ շինական սովոը էր ասել. նա ունի երկու աղայ, եթէ նա մինի վերայ նայուածքի խեթ աչքով, ապա կատաղութիւնը նա որպէս մի խելագար, որ կամէր ուտել նորան, բայց միւսի վերայ ոչինչ ներգործում չէր, թէև նորա կողերը կարմիր ու կապտած ջարդվում էին: Օ, արմատական իրողութիւն. մի և նոյն հայր ու մայր, մի և նոյն սնունդ և բոլորը հաւասար: Ասես թէ, այս տեղ մի և նոյն նիւթը զանազան տեսակ պատրաստվելով զանազան անօթների մէջ, յատուկացնուածին և այսքան տարբերութիւն:

Այայց և ակնյայտնի է, որ կարող չէր մի երեխայ ուղղակի այնպէս լինել ինչպէս միւսը: Ընդունակութիւնքը շատ տարբեր են. բայց ընդունակութիւնքը չեն ծնողների, այլ Աստուծոյ տուրք. Սա բաշխում է, ինչպէս կամի: Պիտոյ է լինի բազմօրինակութիւն աշխարհիս մէջ: Այս բանիս պարտական են ուշադիր լինել ծնողքը, և պատիարակութեան հնարքը տեսնել խմաստութեամբ, ինչպէս արդէն Պաւղոս առաքեալը ուսուցել է: Այայց բոլոր երեխայքը պիտոյ է հաւասար սիրով և ծանրութեամբ դաստիարակվին դէպ ի արդարութիւն և առաքինութիւն: Այլև պատահում յաճախ, որ այն տեղ, ուր գործ էր կատարվում այդպիսի հիմքերի վերայ, երեխայքը օգուտ չեն քաղում և ամենալաւ դաստիարակութենից և մինը նոցանից սլանդակվում միշտ: Չէ պատահում և այն, որ պատուական ծնողներ իսկ և իսկ անբաղդ են դաստիարակութեան գործի մէջ. մինչ զարհուրելի թերևսամիտ և նոյն իսկ արատաւոր ծնողք բաղդաւորվում են պատուական և առաքինի զաւակներով: Օ, արմանալի են Աստուծոյ ճանապարհները:

Ինչպէս ծաղիկների, նոյնպէս և մարդկերի մէջ երևում է բազմօրինակութիւն: Երանի՛ թէ մարդերը մարդու ձեռքի և աչքի տակ այնպէս բաղդաւոր լինէին, ինչպէս ծաղիկները Աստուծոյ ակ-

նարկոմիսեան և ձեռքի տակ: Մենք կարող ենք ենթադրել որ Թոռլերը դաստիարակված էր բարեպաշտօրէն և բարւոք, ըստ որում բաղդատւոր էր նա: Նորա եղբայրց ու քոյերց մասին չգիտենք ոչինչ:

Նորա հայրը մանավանդ էր, ուրեմն պատկանում էր ձեռնավաստակ արուեստաւորների կարգերին: Ձեռնավաստակ արուեստաւորի դաստիարակութիւնը չէ սովորաբար նուրբ, փափկային, մեծատունի պէս, այլ յաճախ կոշտ, երբեմն մի փոքր խոշոր, և այդ պատճառով ոչ այնքան փոխոխական, այլ աւելի յարմարաւոր կեանքի խոշորութիւններին: Մրրիկ ու փոթորիկ շատ անգամ անվեհեր յարձակվում են մեր վերայ. դաստիարակութիւնը պիտոյ է նախապատրաստէր մեզ դոյա ընդդէմ, սովորեցնէր մեզ խոշորութիւնների, ամրութիւն տար մեզ տանելու դոյա, վահան ու զրահ հագցնէր մեզ: Ինչպէս պիտոյ է մտածել, Թոռլերը չէր դաստիարակված նուրբ և քնքուշ, գոնեայ ապագայ օրերում բանի տեղ ձգած չէ բոլոր վանգները և չարչարանքը, և բաղդատութեան ու անբաղդութեան մէջ հաւասարապէս գոհունակ էր:

Գործ հօր պաշտօնի վճռակը, ըստ որում մանավանդ էր, մի փոքր խոշորացուցել էր նորա բոլքը: Ընտանիների զննումը կարող է յառաջացնել խստասրտութիւն. շատ մանավանդ ցոյցանումն այդ բանը, և յայտնվում է իւրեանց պաշտօնի վանդից Այս բանը կարող էր ապա փոխանցել դաստիարակութեան մէջ. դրանից գուցէ մի փոքր բան փոխադրվել էր մանուկ Պանկրատի վերայ: Ամենևին ոչինչ: Արդ նորա հայրը գերդաստանի մէջ դահիճ էր անտառնների, կամ թէ զաւակը ուսած էր փախչել արիւնոտ ձեռքերից: Թող այս. Թոռլերը առ ի սրտէ սիրող էր անտառնների. արդեօք նմանելով հօրը, թէ ամենման լինելով նորան, կարող էինք սահմանել: Հարմանալի բան է. շատ ու շատ անգամ, իսկ և իսկ հօրերի պաշտօնը չիամի հաւանելի լինել որդիներին: Գործ Թոռլերը հայրը այս և այն միջոցում բացայայտել էր միշտ իւր պաշտօնի անախորժութիւնը, տհաճեցուցիչ և բարկացուցիչ հանգամանքը միայն. գուցէ ասած էր նա և յաճախ. եթէ ունենայի ևս ասան որդիք, ապա արժան չէր ոչ մինին նոցանից լինել այն պաշտօնակատարը, որպիսի ես եմ: Թէ այսպէս, թէ այնպէս, Թոռլերի որդին չիամէր մանավանդ լինել. նա կամէր աղօրեպան դառնալ. մանավանդ մորդու գոյնը արիւնային կարմիր է, բայց կարմրային սպիտակ է աղօրեպանի գոյնը: Հայրը հաւան էր նորա

կամքին: Բայց ինչո՞ւ համար կամէր որդին անպատճառ լինել աղօթական. գուցէ ունէր նա մի ընկեր որ կամէր աղօթական դառնալ, կամ թէ մի այլ փոքրիկ պատահական իրողութիւն վճռել էր այդ գործը: Մանուկ, անփորձ երեխաների համար հարկաւոր չէ ոչինչ խորհրդաւոր պատճառ ընտրելու այս կամ այն ասպարէզը: Պանկրատը այժմ տան և հինգ տարեկան էր. ուրեմն պատշաճաւոր ժամանակն էր վճռելու իւր կոչումը:

Այդ աշակերտութեան տեղը երկու ժամի ճանապարհ միայն հեռաւոր էր իւր հայրենի քաղաքից: Այն տեղ պիտէր նա, և երբ որ պիտոյ է թողուր ծնողական տունը, ինչպէս երևում է, եղած չէ ոչինչ հրաժարական սեղան, կամ արտասուք հրաժարական ժամին. և հարկաւոր ևս չէր, միա դնելով մնաւոր ճանապարհորդութեանը և այն բանին, որ նորա ամեն օր կարող էին միամեայ տեսանել: Բայց հայրենական քաղաքի կարօտութիւնը իսկոյն ըստ կասւ տանջել Թոբլերին. և գուցէ թէ միայն անընտել էր նորան կենակցութիւնը օտար մարդկի հետ, անսովոր եղանակը կեանքի ու վարքի, նոր կերակուրը և այլն: Այսպէս, մի քանի շաբաթից յետոյ արդէն վերադարձաւ դէպ ի տուն. բայց նորա մեծ մայրը տեղիք չտալով նորա ընչին պատճառներին — թէպէտ մեծ մայրերը սովորաբար սաւելն տեղիք տուող են պատճառների, քան թէ նոյն իսկ մայրերը — դուրս վարեց նորան տանից և փայտը ձեռքին ճանապարհ ձգեց նորան: Սկսեալ այս օրից, անհետացաւ Թոբլերի կարօտութիւնը իւր հայրենական քաղաքին: Այնուհետև Պանկրատը տուն եկած չէ, մինչև աւարտվեցաւ նորա չորս տարու ուսման միջոցը: Այս բանից երևում է, որ Պանկրատը պիտոյ է ունեցած լինի մի հաստատուն ամուր վճռողականութիւն, մի արիութիւն սրտի, որ իւր օտար օթևանի տարերից տեսանելով հայրենական քաղաքի աշտարակները, իւր հայր ու մայրը և եղբայր ու քոյրը այդպէս մեծ լինելով նորան, այնու ամենայնիւ չորս տարու մէջ միանգամ ևս արած չէ իւրայիններին տեսութիւն. դորա համար պիտոյ է մի այնպիսի տակուն համբերութիւն որ անօրինակ է մանուկ մարդկի մէջ: Գուցէ նորա ծնողքը դնացած էին նորան այցելութիւն. բայց նոցա կողմից, ինչպէս երևում է, հրաւիրված չէ նա, տեսութիւն դալու իւրայիններին:

Ուրեմն Պանկրատը չորս տարուց յետոյ տուն եկաւ: Ընդառաջ ժողովից նա իւր ճանապարհի կապոցները, որ դնայ ճանա-

պարհոլդելու և աշխարհ տեսանելու։ Նա գնաց դէպ ի Բազել որ Հելվեցիայի երդմնաւոր դաշնակցութեան սահմանագլուխ և անկիւնաքար քաղաքն է Բէյն գետի վերայ։ Այն տեղ դիմումէ այս և այն պատանին, որ նայէ իւր ջրոս կողմը և ընտրէ իւր կեանքի ասպարէզ կամ Գերմանիան, կամ Ցրանսիան, կամ թէ Շվէյցարիան։ Նորա համար գրաւիչ են Բէյնի երկու գետեզերեայքը, որովհետև երկուքն էլ բուսաւցանումեն նորա համար ծաղիկներ. նորան սիրտզապէս հրաւիրումէ Շվէյցարիան իւր սառցապատ սարբերով, իւր լեառներով, իւր ալպեան վարդերով. Եղբայրք, վեր կացէք ընթերցու աշխարհ, սար ու ձոր ու դաշտ. ծաղիկ ու ծաղկիկներ անթիւ շատ։ Այսօր այս տեղ, էգուց այն տեղ։ Նա հասաւ այն տեղ և չէր այժմ աղօրէպանի աշակերտ, այլ մի աստիճան բարձր, աղօրէպանի մշակ. աղօրէպանի աշակերտից մինչև աղօրէպան աբբահատապետ մի մեծ ոստիւն է։ Ոտյց շուտով, արդէն ջրոս շաբաթից յետոյ ժողովեց նա իւր կապոցները, առաւ ձանապարհի մաղտլը և գնաց ի բաց. ընդէի ի բաց։ Որովհետև տհաճութիւն էր ունեցել աղօրէպանի կնոջ հետ։ Այո՛ ջրոս շաբաթի համբերել էր նա իւր դրութեան մէջ. և կարելի չէր յաւիտեան նստած մնալ մի տեղում։ բայց ուր կամէր նա գնալ։ Ամեն աշխարհը, ուր միայն դասնվում էին աղօրիք, բայց ու արձակ էր նորա առաջև։ Ամերիկաս ծովն ընկաւ. դէպ ի Հնդկաստան, Ամերիկա, Ռուսիա. ոչ. այդպիսի համաշխարհական հոգի օտար էր նորանից։ Նա կամեցաւ վերստին դառնալ դէպ ի հայրենիք։ Պարօտութիւնը իւր ընտանի աշխարհն պիտոյ է քարշած լինի նորա սիրտը։ Անպատ սրտարև հայրենիքի անձկութիւնը և ձմեռրիտ հիւանդութիւնը շվէյցարացի մարդերի, այնու ամենայնիւ Շվէյցարացին, որ չկարողանալով դիմանալ երկար պանդխտութեան, վերադարձել էր շուտով դէպ ի հայրենիք, բաւական երկար ժամանակ լինելուն նրանք նախատական ծիծաղանքի, իւրայիններին մէջ։ Այդպիսի վերադարձող պանդխտականներին ներս չեն բերում տուն, երգելով ու պանդահներ ածելով. նա պիտոյ է գիշերով ու մութով, ամենևին հանդարտ ներս սողայ իւր հայրենիքը։ Անորոշը սասցել էր հանդարտ անապին դաստիարակութիւն, և ունէր ընտանի ընկերք շատ։ Ինչքան որ նեղ է կեանքի շրջանակը, ինչքան որ սրտակից են միմեանց հետ եղբայր ու քոյր, այնքան և առաւելի վաղ սկսում կարօտութիւն զգալ պանդխտականը։

Ոչ թէ միայն ալպեան սարերուն մէջ դաստիարակվածքը և սա-
բերուն հովուակեաց քը, այլև առանձին ընտանեկան կեանքի մէջ մեծ
քաղաքային շատ կամ փոքր ներքարկված է այդ կարօտութեան
ցաւին: Ա՛յդ բանը արմատացած չէ օդի, ոչ մեռնողի և ոչ ևս
մարդուս պարապմունքի մէջ: Գործ պատճառը ըստ մեծի մասին
է այն խորին ընտանեկան, շրջապակ կեանքը լեռնաբնակ Հ՛վեյցա-
բացու. պատճառ, յիշատակը շատ մեծ կշիռ ունի հայրենիքի անձ-
կութեան մէջ: Ո՛րհանդամ գիւղօրական մարդիկ մի լեռնայինն ալ-
պեան Պանտոնից հարաւահայեաց արևելեան Հ՛վեյցարիայի իջե-
ւանած էին մայրաքաղաքի մէջ առհասարմար կերպով, այնու ա-
մենայնիւ տրտում էր նոցա սիրտը. կողկողագին նայուածքին նոքա,
որպէս հայրենիքի անձկութեամբ տանջված Իսրայէլացիքը Եփրատի
գետեղերեայ քից դէպ ի Յերեմիա, դէպ ի իւրեանց խրճիթքը և սա-
բերը, և ասում էին. «ով սիրելի, երկիր մեզ մի տաղ մեր Ներու-
սաղէմից, մեր նախահարց աշխարհից. և արտասուքը թոր թորու-
մէին նոցա թշերի վերայ: Իւր մանկութեան օրօրոցի և խաղի բնիկ
աշխարհը սիրող Հ՛վեյցարացու անձկութիւնը լսելով մեր պանդխ-
տական ՛այը, դուցէ և նորա մէջ զարթնելու էր մի այդպիսի կա-
րօտութիւն հայրենիքի, գուցէ և նորա թշերի վերայ թորթորելու
էին մի քանի արտասուք: Ի հարկէ և մեք ՛այերս ունինք մեր հայ-
րենիքը, ամեն մինս լինելով ծնած և սպրած մի առանձին քաղա-
քում կամ Գուսաստանի կամ Տաճկաստանի մէջ. և մեք ունեցել
ենք մեր մանկութեան ոսկի օրօրոցը և պահումենք մեր սրտի մէջ
այդ օրերի սիրելի յիշատակը: Բայց ո՛ր տեղ է այս բոպէիս այդ-
բաղ մտախոհ ՛այի հայրենիքը. դէպ ի ո՛ւր են ձգտում նորա սրտի
ուխտը և փափագը. ո՛ւր է նորա Ներուսաղէմը, ո՛ւր է այն հայրենի
հողը, որ նա այժմուս կարող էր ասել իւր սեփական, ուր և նա,
հայրենասէր պանդխտականի պէս, կարող էր մի օր յետ դառնալ:
Ոհ, այս բոպէիս, մեր ցան ու ցիր, հողմերին զարկած, բզդզած
կեանքի մէջ, մեր հայրենիքը չէն Ընի քաղաքի աւերակները, ուր
ոմանք կարձատես մարդիկ հրաւիրումեն մեզ կենակից լինելու բուե-
րի և խրճիթների. ոչ, մեր հայրենիքը այս բոպէիս մեր սրտի և հո-
գու մէջ է, թէպէտ նոյնպէս աւերակ և փշատակված ինչպէս Ընի
քաղաքի անցած գնացած փառահեղութիւնը: Ո՛րինչև այսօրս վե-
րադարձել չէ հայկական սրտերի մէջ մի բարոյական և մտաւորա-
կան վերաշինութեան գաղափար. մինչև այս օրս մի յիմար, բար-

բարոտական թշնամասիրութիւն, մի խնդրագար ասիական չարեաց-
ցակամութիւն դանակը ձեռքին խառնուած աղիքները ապգի փորի
մէջ, և ապգը իւր բթամտութեան և բթասրտութեան մէջ հաղիւ
թէ մի բան զգումէ, բայց ի իւր նիւթական ապրուստի պիտոյքը որ
և իցէ պայմաններով: Այս այսպէս մեր ՝այը ամենայն տեղ պան-
դխտ, թէ իւր հայրենիքի և թէ օտարութեան մէջ, ոչ, զարհու-
րելի է ասել, պանդխտ և օտար իւր տրտի մէջ, առանց մի զգալի
և իմանալի հայրենիքի. զարմանք չէ, եթէ նորան անհասկանալի
լինէին այն կարօտութիւնը և փափագը որ կապուածն շվեյցարացի
մարդու սիրտը իւր աշխարհի սարերի, հողի ու ջրի հետ, որ և
կարող էին սպանել նորան, մնալով ամենևին անխռով: Այս այս-
պիսի բան պատահած է արդէն: Բայց մեծամեծ քաղաքների վայ-
րենի ամբոխի մէջ դասախարակվածքը կարող չեն հայրենիքի կարօ-
տութիւն ստանալ, կամ թէ այդ բանը նոցա մէջ ունի այլ կեր-
պարանք, ունի մի զեղուն բնութիւն. նոքա օտարութեան մէջ ունին
միայն անբաւականութեան կարօտութիւն, ինչպէս Խարայելացիք
անապատի մէջ կարօտուէին Եգիպտոսի մսեղէն կճղակներին: Խա-
կական լեռնաբնակ և ալպեան շվեյցարացին վաղումէ ամենևին այն-
պես որպէս սարի այծը, հովտից մի րոպէի մէջ դարձեալ թռչու-
մէ դէպ ի սարերը: Նա նմանումէ նոյնպէս տնային կատուին որ մի
պարկի մէջ դրած տարվելով հեռաւոր տեղեր, այնու ամենայնիւ
գտանումէ ճանապարհը դէպ ի տուն, շուտով դարձեալ եղանումէ
տանիքի վերայ, որ դարձեալ ցած նայէ վերևից աշխարհի վերայ:
Նա սիրումէ միայն իւր բարձրութիւնը և կրկին ու դարձեալ դա-
լիս է տանիքների վերայ: Այսպէս և մարդս կարող էր դառնալ
իւր հողի սեփական ծառան, այո ծառան մի կոտոր հողի որի վե-
րայ ծնած էր նա: Այնու ամենայնիւ աշխարհի բոլոր հինգ մաս-
նում գտանվումեն Շվեյցարացիք. նոքա գուրս են գնում հայրենի-
քից ինչպէս հին օրերի Օրգետորիքսի ժամանակում, նոքա որոնու-
մեն ամառնային աշխարհներ և յօժարութեամբ մտանումեն օտար
ապգերի զինուորական պաշտօնի մէջ: Բայց արդէն իւրեանց կեան-
քի միջոցում կամ վերջում վերադառնումեն դէպ ի տուն դրեթէ
ամենեքեան: Շվեյցարացին սիրումէ մեռանել իւր հայրենի աշ-
խարհում, սիրումէ թաղվիլ իւր հողի մէջ, որպէս իւր երանաւէտ
երկինքում: Այս բանի մէջ է նա մի նահապետ, որ պարտք է գնում

իւր զաւակների հոգու վերայ, նորա հողեղէն նշխարքը տանելու և ամփոփելու հայրենական հողի մէջ:

Ը՞վ եկեղեցական կարօտութիւնը իւր հայրենիքին, ոմանք գովում են և ոմանք պախարակում են. ոմանք տեսանում են այդ բանի մէջ մի քաղցր կախողութիւն սրտի դէպ ի հայրենականը, միւսերը մի երևակայական թուլասրտութիւն: Ը՞ստ անգամ Ը՞վ եկեղեցին օտարութեան մէջ տանջվելով հայրենիքի կարօտութենից, աւելի փոքր քաղցրութիւն վայելում է, քան թէ միւսերը. բայց երբ որ վերադառնում է հայրենիք, և հեռուից դարձեալ տեսանում է ձիւնապատ սարերը հայրենական աշխարհի և նորա աչքը չէ կարող յագենալ այդ տեսարանով, նորա սիրտը զմայլելով ցնծում է բարձրաձայն — այո՛, այնուհետև վայելում է նա մի բաղդաւորութիւն, որին կարող էին միւսերը նախանձել: Եւ՛ պատճառով ահա, Ը՞վ եկեղեցին իւր հայրենիքի մէջ հպարտ է և հաւատարիմ է իւր աշխարհին: Թոռըներին աւելի սիրելի էր լինել մի փոքրիկ քան թէ մի մեծ քաղաքի մէջ, աւելի սիրելի էր կեանքի համեստ և խաղաղ օթևանի քան թէ բազմամբոխ աշխարհային հրապարակի մէջ ապրել, աւելի նախապատիւ, փոքրիկ լեռնապատակ հովիտների մէջ քան թէ այն արձակ մեծ տափարակի վերայ, հայրենիքի սահմանի մօտ:

(Շարունակութիւնը յետոյ:)

Ս. Նալբանդ:

ՆԱՄԱԿ ԱՌ ՀՐԱՏԱՐԱԿՈՂԸ.

Պատուելի Հրատարակող Հիսիսափայլի.

Կորուստ, ինչպէս յայտնի կը լինի ձեզ, Մեղու Հայաստանի Լրագիրը, Համար 13, մարտի 26, իւր արժանաւոր աղբիւրից դէպ ի լոյս էր ածել մի իւրարժան պտուղ, որի հեղինակն է Յովսէփ Չելքեզեանց, թէ ձեր Հիսիսափայլին, ձեր միւս մատենագրական վաստակների և թէ ձեր իմացական ու բարոյական արժանաւորութեան վերայ որպէս դիտական և որպէս մարդ: Մենք ժողովրդական յոյս ունէինք և սպասում էինք շուտով լսելու Հայոց ուսումնականների կարծիքը այդ պտուղի վերայ, ըստ որում շնչաւորիչ նոցա բարոյական պարտականութիւնն էր բարձրացուցանել իւրեանց ձայնը և արդարակշիռ հատուցումն առնել այն տեղ, ուր անամօթաբար վշտացուցած էր մի բազմավաստակ հեղինակի պատիւ և դորանով նոյն իսկ ժողովրդի իրաւունքը: Մինչև այժմ ոչինչ չլսեցինք. մի տխուր ապացոյց թէ Հայոց ուսումնականքը [1]) Ռուսաստանի մէջ չգիտեն ոչինչ բարոյական պարտականութիւն, կամ դուցէ թէ ոմանք դոյանից լռութեամբ մանաւանդ են այն պտուղի բովանդակութեանը, ասիամիտ չարախնդացութեամբ նայելով մի ամպրդի անիրաւութեան վերայ որ հասել է իւրեանց ականաւոր ընկերին. Թող ներեն մեզ մեր ուսումնականքը մեր մի

---

[1]) Այս նամակը վաղուց ստացել էր Հիսիսափայլը, որ և ամենևին կամք չունէր դուրս տալ տպագրութեանդ, բայց դրոշի տխրական խնդրանքով վերջապէս տալիս է դորան աղքին:

Խմբ. Հրատ.

փոքր պարզ խօսուածքի համար, բայց մի այդպիսի սառնութիւն սրտի, մի այդպիսի ամենևին անընդունող լռութիւն այն տեղ, ուր պատ և պատշաճ էր խօսքին թնդալ և որոտալ սրտալր բարկութեամբ ընդդէմ մի հրապարակական անիրաւութեան և պատժել դորան բարոյական ղէնքով — դա աննելելի է նոցա, անհասկանալի է մեզ։ Ծանր լռեն դոքա, բայց մեք, մեք ժողովրդականքս անարժան ենք համարում մեր պատուին, ամենևին լռել, մեղ անտանելի է այն նախատինքը, որ մի Ազգքեղեանց համարձակվել է մատնել, թէ Հայոց հասարակութիւնը բարկանում միայն անբան ոչխարների կամ կովերի հօտից, լոկ տզէտ և յիմար վաճառականներից, որոնց առաջև կարող էր յարգ ու կշեռ ստանալ ամենայն անճոռնի ուղեղի վիժած, ամենայն գարշելի փսխած որպիսի և իցէ հում և խակ նիւթերով բեռնաւորած ստամոքի։ Ո՛չ· արդարև դեռ ևս մի թանձր խաւարով դիշերացած է մեր ժողովրդականների սառած մեծ բաժնի սիրտը և հոգին—և անկարելի է այլապէս, գիտի դարաւոր բանտարկութեան Ասիայի աղջամուղջի մէջ — բայց Աստուծոյ շնորհովը և մեր համար լուսանում օրը և թոյլ է տալ մեզ որոշել միմեանցից սեւ ու սպիտակը, հարազատ և խարդախ դահեկանը, ստոյգ և սուտ արժանաւորութիւնը։ Ճշմարիտ է, մեք ժողովրդականքս կարող չենք խօսել ուսումնական ոճերով և հասկացնել մեր միտքը արուեստայարմար դարձուածներով, բայց և մեք ունինք մեր տեսակ անարուեստ ոճը մի բան առաջարկելու և եղրակացութիւն գործելու, մի խօսքով, մեր լոգիկան, ինչպէս ասում են ուսած մարդիկ։

Պատուելի հրատարակող. մեր նամակի դիտաւորութիւնը չէ պաշտպան դուրս գալ ձեզ ընդդէմ մի տմարդի անիրաւութեան, որ արել է ձեզ Ազգքեղեանցը, վատթարագոյն գործ դնելով տգիտութեան ազատութիւնը իւր արժանաւոր համախոհի հետ միասին։ Ձեր ամենալաւ պաշտպանքը են Ձեր հոգու և սրտի վատառակքը, որ այսքան տարի լի պարարտութեամբ վայելումէ ազգը, որ և չտեսանել կարող էր միայն նա, որի աչքը Աստուծոյ բարկութենից զարկած էր կուրութեամբ։ Ո՛չ· Դուք կարօտ չէք մեր պաշտպանութեանը։ Մեր դիտաւորութիւնը այն է միայն, որ հրատարակենք մեր կարծիքը Ազգքեղեանցի գրուածի վերայ, որ բարոյական հատուցումն առնենք մի կարծեցած ուսումնական էակի, որ համարձակվել է անտանելի վշտացնել մեր իրաւունքը, մինչև

այն ստոյգման թուլամիտ և պակասամիտ համարելով մեզ, որ կա-
րող էր իւր պիղծ բերանի հայհոյութիւնքը ընդունելի և սիրելի կա-
յուցանել մեզ։ Մեք այս նամակը — որ աւելի պատշաճաւոր էր —
ուղարկելու էինք Հայոց ազգի Կառնկին, որ նորա մէջ հրատա-
րակվէր — բայց նախ տեղի հեռաւորութիւնը, երկրորդ և մեր
վատահութեան պակասութիւնը, յետոյ և չգոյութիւնը մի այլ
օրինաւոր ժողովրդական բերանի մեր Ազգի մէջ, սաիպեցին մեզ
դարձուցանել մեր դէմքը դէպ ի ձեզ և ազատելով ազատել ձեզ,
ընդունել Իսահատիպլի Թերթերի մէջ մեր դատողութիւնը Չեր-
քեզեանցի դրուածի վերայ և այն անախորժ տպաւորութիւնքը որ
յառաջացուցել է նա մեր սրտի վերայ։ Երևի թէ հեղինակը ան-
ընդողաբար կամեցել է մի բանով պարծանք ձարել իւր համար, և
այդպէս ձարել է իւր համար մի խոյտառակ հերոսապատեան պար-
ծանք։

Մեր ասելիքը այսպէս են։ Արդարով Չերքեզեանցի նամակը
առ արժանապատիւ հրատարակողը «Մեղու Հայոց»ի լրա-
գրի, խոստովանութեամբ մեր պատուելի Հայրենակիցներին, թէ այս
առաջին անգամն է, որ այսպիսի տգեղ և անվախճար կերպարան-
քով մերկացաւ մեր առաջև այն խնդիրը, թէ ինչ և որպիսի անա-
մոթութեան կարող էր ընդունակ լինել մի վայր ի վերոյ ուսած և
անբարոյական մարդ որ մոռացել էր ամենայն մարդկային պատշաճ,
որ իւր հոգին վաճառել էր այս կամ այն մեծատունի ոսկուն, և
վարձկան գրչով հրատարակութեր մի լրագրի մէջ մի հատուած բան։
Մեք չզարմացանք Չերքեզեանցի դրուածի վերայ. որպէս ծառը
նոյնպէս և պտուղքը. որպէս շարժառիթքը, նոյնպէս և ներգոր-
ծութիւնքը։ Արդարև ոչ մի խելացի մարդ զարմանալ չէ մի այդ-
պիսի արարողութեան վերայ, և եթէ մի ձի փողոցումը աքացի էր
զարկել մեզ, ոչ մի բանական անձն մեզանից, արժան կը համարէր դո-
րան դէպ ի դատաստան քարշել և այն գործը որ դուրս է մարդկու-
թեան կարգից, մարդկային պատշաճի չափով ու կշռով դատել։
Եւ պատճառով թող Չերքեզեանցը չսպասէ մեզանից և ոչ կէս
խօսք պատասխանի, որին անարժան է կացուցել իւր անձը. մեք
այս րոպէիս ունինք մի աւելի լաւ գործ կատարելու, քան թէ պա-
տասխան տալու նորա անվայել բարբանջանքին։ Մեր խօսուածքը
լինելու է այս տեղ մեր պատուելի ազգի բարեմիտների հետ, Չեր-
քեզեանցի անմտութիւնը նիւթ առնելով մեր մտածութեան, լաս

որուամ, ինչպէս սովոր է պատահիլ, որչափ աւելի անմիտ է մի մարդ, այնչափ ևս մեծամտութեան նիւթ է տալիս իւր խելացի ընկերներին։ Մենք ասացինք վերևում, թէ մեր դիտաւորութիւնը չէ պաշտպանել Հիսիտափայլի հրատարակողին, որի վերայ անկարգ և պատուաւոր խօսքերով յարձակվում մի ողորմելի և մեքով և բարոյականութեամբ։ Այդ եթէ կայ մեր մէջ որ և իցէ խիղճ և արդարութիւն, եթէ մեք դեռ ևս պատժած ու պատուհասած չենք մի թանձր կուրութեամբ, եթէ մեր ազգի մէջ մնում են դեռ ևս սիրտեր և հոգիներ, որ չեն ապականված նախանձու թունաւոր ժանգով — այնուհետև մեք որ այսքան տարի վայելում ենք Հիսիտափայլի դեղեցիկ ձառերը, թող միւս դրաւոր վաստակները նորա հրատարակողի, մեք կարող չենք չհատուցանել բարձրաձայն, ինչ որ պահանջելով պահանջում մեզանից ազգասիրութեան հարկը, ինչ որ մեք զգում ենք և որոշում ենք մեր սրտի մէջ։ Ձեռքեզեանցը հայհոյում պարոն Նազարեանցին, բայց մեզ պիտոյ է օրհնել նորա ծնունդը։ Թող Պ. Նազարեանցի համեստութիւնը մի փոքր վշտանայ մեր խօսքերից, բայց նա չունի իրաւունք խլելու մեզանից մեր զգայողութիւնքը, մեր կարծիքը, մեր արդարացաւոտութիւնը, մեր ազգական պատուի հարկը։ Եւ միթէ արժան էր մեզ վատթար սառնութեամբ յետ քաշվել և լուռ մնալ, երբ հայհոյվում ճշմարտութիւնը, երբ տմարդաբար գեանին է զարկվում մի աշխատասէր ուսումնական այլի պատիւ, մի ուսումնական այլի որ իմացական պարծանքի արձաններ և կոթողներ է կառուցել իւր համար, որ այնքան երկար մնալու են անշարժ և անսասան, որչափ ժամանակ լսուելու էին աշխարհիս վերայ հայկական լեզուի ձայնները։ Նազարեանցը օր ու գիշեր ուսանելով և մտածելով, դաղափարներ է տուել ժողովրդին, ազգաշինական խնդիրներ է մէջ բերել, նիւթերի վերայ է խօսք ու զրոյց բացել իւր ազգի հետ, որոնց յիշատակը ևս եղած չէ այլերի մէջ մինչև այս օրս։ Մի հայ մարդը, բայց ի Ձեռքեզեանցից, լինելու էր այնքան անմիտ և կոյր և անխիղճ, որ կարող էր ուրանալ այս իրողութիւնքը. ոչ. մեք բարձրաձայն հնչեցնում ենք մեր բարբառը, թէ Նազարեանցը մի վաստակ է վաստակել իւր ազգի համար, որ մահու բոպէին յաւիտեան փակելով աչքերը, կարող էր ասել հոռմէական բանաստեղծի հետ. «Ոչ ամենևին կը մեռանիմ ես, այլ իմ անյիշ աւելի պատուական մասը ապահով կը ծաղ մահու երեսից։»

Թող քանի մի Հայերի անկրթութիւնը և անպատրաստութիւնը այս րոպէիս շուարված, չկարողանայ ըմբռնել կամ արժանապէս գնահատել Նազարեանցի իմացական և բարոյական մեծութիւնը. Թող այդ ազգի ուսումնականքը նախանձելով նորա առաւելութեան վերայ, լուռ և քարացած մնան, բայց գալոց սերունդը տակոսիքով կը հատուցանէ նորան նախահալց անվճար Թողած պարտքը: Հարցանումենք մեր ազգի բարեմիտներից. այդ պատուելի Չելեբեանցը որ այդքան անաչառութեամբ ուրանում Նազարեանցի արժանապատուութիւնքը, ինչպէսբամբասելով նորա գրուածքը վատաբնները որպէս թարգմանութիւնք և անսեփականի աշխատութիւնք, ինքը Չելեբեանցը ինչ վատաբներ, ինչ գրուածք, ինչ գիտնական արդիւնք մինչև այսօր ցոյց է տուել ազգին. եթէ ամենայն ծառ իւր պտղից պիտոյ է ճանաչվի, ոչ են ապա Չելեբեանցի պտուղքը, որ միայն կարող էին տպիսել մեզ միտ դնել նորա ասածներին: Ինքն ոչ ինչ չառնել և օտարի արածքը ոչնչացուցանել, ինքն լինել չարաչար և նախանձոտ, ուրիշի առաքինութիւնքը հայհոյել, և կարծել թէ Հայոց ժողովուրդը այս մեր լուսաւորեալ դարումս յանձն կ'առնու հաւանակից լինել այդպիսի անիրաւութեան, դորա համար, խոստովանումենք հարկաւոր էր միայն նոյն իսկ Չելեբեանցի կատարեալ անմոռութիւնը: Նազարեանցը թէ թարգմանել է և թէ գրել է, երկուքն էլ մեծ շնորհք է. փառք և պատիւ նորան. նա դորանով գործ, մեծ գործ է կատարել, ճոխացնելով Հայ մատենագրութեան դանձը — բայց դիտուն ձևացեալ Չելեբեանցը ինչ է արել: Նազարեանցը — այսպէս է հայհոյում իւր անգուռն բերանով Չելեբեանցը — չգիտէ ռուսերէն, գերմաներէնը գիտէ որպէս կօշկակար, լատիներէն էլ ո՛գիտէ թէ ինչքան սակաւ, այլև Նազարեանցը մի անբարոյական, արծաթամոլ մարդ է, որովհետև միշտ արծաթ էր պահանջում ազգից, որ կարողանայ յատուկ տանել իւր օրագիրը: Ով որ կարող է լոյս ցերեկով այսպիսի անդատողական, թշուառ խօսք ուզոյց առնել հրապարակի մէջ, նորան պատասխանել մեզք ինք համարում: սակայն ասենք մեր ազգի բարեմիտներին, թէ Նազարեանցը այնքան յարգում իւր անձը և իրաւամբ, որ եթէ նորա բանագիտութեան վերայ չկար Հայոց ազգի մէջ ոչ մի պատասխան բաց ի այդպիսի խելակորոյս մարդուց, որպիսի Չելեբեանցն է, ապա յօժար էր յանիտեան դատապարտել իւր անձը դէպ ի ազի-

սուբիւն, քան թէ մի ողջմիտ Ալլքեզեանցի բերանով հաւատալ սուբիւն առնուլ իւր բանադիտութեանը. Նաղարեանցը ինքը պիտոյ է արհամարհելի երևէր իւր աչքումը, կարօտ լինելով այդպիսի վատթար հոգիների գովաբանութեան: Նաղարեանցի ուսուցադիտութիւնը, գերմանադիտութիւնը և լատինադիտութիւնը ակնյայտնի է նորա գրուածներից և բազմաթիւ գեղեցիկ թարգմանութիւններից. այլև ՙայոց ժողովրդի մէջ, որ ինքը ոգիա է այդ լեզուներին, ուրեմն և չէ կարող ուսումնական վերահասութեամբ բան հասկանալ և ստուգել, ամենևին անտեղի է Ալլքեզեանցին այդ խնդիրների վերայ խօսք ու զրոյց բանալ ՙայերի հետ. բայց գուցէ թէ անբարոյական և թշնամասիրտ Ալլքեզեանցը ազգի նոյն իսկ ոգիտութեամբ կամի ապացուցանել իւր խօսքի ճշմարտութիւնը. ազգը չգիտէ ուսուցչին, գերմաներէն և լատիներէն, ուրեմն եթէ պատուելի Ալլքեզեանցը ասէ ՙայերին թէ Նաղարեանցը ոգիա է ուսուցչին լեզուի, գերմաներէնը գիտէ որպես կօշկակար, լատիներէնը ևս ո՛գիտէ, ինչպէս, ապա մեր ազգը հաւանօք իւրի տեղ ընդունելու է Ալլքեզեանցի պատասխանը: ՙրաշալի ապեկուլացիա ՙայոց ոգիտութեան վերայ, ըստ որում Ալլքեզեանը լաւ գիտէ որ ՙայերը անուսումնութեան պատճառով իւրեանց խելքով ոչ ինչ բան դատել կարող չեն, ինչ որ մի յիմար և վատթար հոգի մի այլ միւսին ասումէ, նոյնը անընդդիմաբար և անմտաբար կրկնումէ այդ միւսը անբան թուխակի պէս: Ումեմ և խոյտուսակութիւն մի ուսումնականի, որ միևչև այն աստիճան կորսնել է իւր բարոյականութիւնը, որ կարող էր ծառայելով իւր պղտոր ախտերին դրծ դնել այդպիսի վատթար հնարներ մոլորեցնելու պարզամիտ ժողովրդի կարծիքը, և այդպէս աւելի հաստատելու ՙայոց մէջ խաւարի, սուբիւն, և անբարոյականութեան թագաւորութիւնը: Ա՛րդապետ Նաղարեանցը իբրև կանոնիկոս կայսերական ՙամալարանին Վօրոպաուս, իբրև աշակերտ հին կլասիկական Փիլոլօգիայի, չգիտէ լատիներէն, իբրև մի ՙայ որ 8 ամբողջ տարի անցուցել էր գերմանական պրոֆեսօրների, ստուդենտների, ակնուականների և ժողովրդի հետ կենակցութեամբ, չգիտէ գերմաներէն, կամ գիտէ միայն որպես գերմանական կօշկակար. ահ կարող է հաւատալ Ալլքեզեանցին եթէ ոչ մի նոյնպիսի, հոգով ու սրտով խանգարված մարդ, ինչպէս այդ Ալլքեզեանցն է: Նաղարեանցը որի գերմանադիտութեան վերայ զարմացած են նոյն

Իսկ Գերմանացիք, որ լսած էին նորա խօսակցութիւնքը և կարդացած նորա մանաւոր գրուածքը, դիտէ գերմաներէն որպէս մի կոշկակար, Թող այդպէս լինի նորա պատասխանով, որ մի և նոյն է Նազարեանցի համար, ինչպէս և լինելը դա: Այլ դիտե՞ Չերքեզեանցը թէ Հայոց ազգի բարեմիտ և հասկացող մարդիկը որպիսի կարծիք ունին նոյն ինքն նորա մասին. նորա կարծումն և սրտի վկայութեամբ խոստովանում թէ Չերքեզեանցը մի անտառից փախած, կամ թէ խելագարների տան վանդակից դուրս պրծած մարդ է: Այլև, եթէ Նազարեանցի անբարոյականութիւնը և արծաթամոլութիւնը այն է, որ նա արծաթ է սպահանջում ազգից օրագիր տպելու, այս բանը յանձնումենք ազգի խոհականների մտածութեանը, որոնց յայտնի է թէ ինչքան է Հիսիսապայլի ընկերացիների թիւը, որ և ինքեանք կը հասկանան թէ ինչ խորհուրդ ունի Չերքեզեանցի ասածը: Եթէ Ռուսաց ժուռնալիստքը ունենալով հինգ միւնչև ութ հազար ընկերացիք, սոքա տարի հատածումն ազգից 100,000, ասա հարիւր հազար մանեթ արծ. մի օրագիր տպելու համար և չեն ասվում արծաթամոլք, Ռուսաց մէջ, ասա ծրագիրի անմոռութիւն և հոգու վաճառութիւն հարկաւոր էր նորա համար, որ կարողանայինք ասել, թէ Նազարեանցի պէս աշխատաւոր մարդը արծաթամոլ է, ըստ որում տարու մէջ պիտոյ է ազգովելով և տրորվելով իւր դանդաղ ազգի հետ, մի քանի հազար մանեթ հաւաքէ, ոչ թէ իւրեան շահաստացութիւն, այլ միայն թղթի, տպագրութեան և այլ, գործի հետ կից նիւթական պիտոյքների ծախքը հոգալու: Ո՛վ կարող է այս տեղ բան հասկանալ, բայց ի անօրինակ խորամիտ Չերքեզեանցից: Այլ դադարեցնենք մեր ձառը, որ վախումենք մի գուցէ ստանար այնպիսի անվերջ երկարութիւն, ինչպէս անվերջ երկար է Չերքեզեանցի անմոռութիւնը: Այլև աւելորդ էր, կամ լաւ և ասել խոշտալի, մեր պատուելի հասարակութեան ուշադրութիւնը աւելի երկար ծանրաբեռնել այնպիսի խօսակցութեան նիւթով, որպիսի պատուելի Չերքեզեանցն է:

Ընդարձ մեր Հայերի մէջ կան մի տեսակ հաստերես բռնակալ մարդիկ, որ անխտիր, ինչպէս հաճոյ և ձեռնտու է իւրեանց անձնական կամքին, ասումէին մի մարդու դիտուն կամ ազէտ, խելօք կամ յիմար, առաքինի կամ չարագործ, այդպիսիքը, որովհետև ազգը չունի դեռ և մի հաստատուն արդարակշիռ դիտնա-

կան և բարոյական դատաստանի հրապարակ, լոյսը շինումն խա-
ւար և խաւարը լոյս, արդարութիւնը անիրաւութիւն, դիտու-
թիւնը տգիտութիւն, արժանաւորութիւնը անարժանութիւն.
ամենևին այնպէս, ինչպէս բարբարոս ազգերի մէջ, ուր չկայ մի բա-
նական կարգ և պատշաճ. բայց պարսն Ձերքեզեանցը մեծ և խո-
րին մելորութեան մէջ է, կարծելով, թէ հայոց բոլոր ազգը Ռու-
սաստանի մէջ բաղկանում միայն իւր պէս ախմարներից և խելա-
գարներից, թէ սա որպէս մի անպայման ճշմարտութիւն կ'ընդունէ
նորա պղտորված երևակայութեան պղտոր ծնունդքը. թող դոքա
արժանի լինին մի քանի հոգով և արտով Ձերքեզեանցին ազգակից
Հայերի այս տեղ ու այն տեղ. բայց Հայոց ամենաւսիքը և բա-
նագէտքը վաղուց արդէն և Ձերքեզեանցին և նորա գրուածքը դա-
դապարտել են մի խորին և բոլորովին արհամարհութեամբ: Այլև
ուրախ են, որ վերջապէս Ձերքեզեանցը, որի մասին ամսիկ ժողո-
վուրդը ունեցել է մինչև այժմ որ և իցէ շահաւէտ կարծիք, քանի
որ նորա հոդու բղխուածքը թաւիուել էին հրապարակի մէջ, դուրս
է եկել իւր անյայտութեան անկիւնից և մերկանգամ ցոյց է տուել
իւր ամօթը և նախատինքը, և այդպէս իւր յատուկ ձեռքով ջրաշ-
ռել է ճակատի վերայ իւր մահու դատակնիքը ազգի բանագէտների
առաջև: Ասումենք որ նա չկամի և այսուհետև անգործ մնալ, այլ
դիտաւորութիւն ունի բաշխելու իւր ազգին միւս այլ ծնունդք
իւր ականատես ուսումնականութեան. բայց մեք ասումենք, թող
հաւատացած կենայ պարոնը, որ նորա գրուածի թերթերը կը
գտանեն իւրեանց արժանի պիտաւորութիւնը. անիրաւութեան
հանդիսելու չէ նա մեր կողմից:

Մնամ յարգող և մեծարող Ձեզ

Սարգս Դաւթեան Ալէքսանդրեանց:

10 ին Մայիսի 1860.

Մոսկվա:

1. Հիւսիսափայլ օրագիրը ամիս ամիս դուրս գալով, պարունակելու է իւր մէջ ճառեր ընդհանուր Երկրագիտութեան, ընդհանուր Պատմութեան և Աշխարհագրութեան, այլև մասնաւորապէս Հայրենական պատմութեան և աշխարհագիտութեան վերայ:

2. Լնագիտական ճառեր, այսինքն բնութեան օրէնքների և դոցա գործադրութեան վերայ մարդուս օգտի համար, ճառեր գանազան ֆիզիկական յայտնագործութիւնների, հասարակաւոս Ատեղաբաշխութեան, քիմիայի, Հանքաբանութեան և Ֆիզիօլօգիայի վերայ. այլև բանախօսութիւն տունկերի, գիտութեան արժանի բոյսերի, նոցա տնկարկութեան և օգտի վերայ, վերջապէս կենդանի օգուտ գիւտերի և յայտնագործութիւնների մասին:

3. Լարոյական, գեղեցիկ բանասիրական ճառեր, առաւել ընտիր մտածութիւնք և զգացողութիւնք թէ ոտանաւոր և թէ արձակ ոճով. թարգմանութիւնք հին հայկական, և հին ու նոր եւրոպական մատենագրութիւնից. այլև Կրիտիկայք (ուսումնական քննութիւնք) նորատիպ հայերէն գրուածների վերայ:

Ցանկացողքը սկսանալ այս օրագիրը կարող են հասուցանել իւրեանց խնդիրը կամ ուղղակի Հրատարակողին Մոսկվայի մէջ այսպէս. въ Редакцію Армянскаго Журнала «*Сѣверное Сіяніе*», въ Москвѣ, на Черногрязкѣ, въ домѣ Статскаго Совѣтника С. Назарьянца. *կամ թէ Մոսկվայի նամակատանը այսպիսի հասցէով.* въ Газетную Экспедицію Московскаго Почтамта.

Տարեկան 12 տետրակների գինը է 8 մանէթ Մոսկվայի մէջ, բայց ուրիշ քաղաքների համար $9\frac{1}{2}$ մանէթ:

Печатать позволяется. С. Петербургъ. 16 Іюня 1860 года.

Цензоръ В. Бекетовъ.